



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ	1
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.....	2
Ո՞ր Կ'երթաս, ՀԱՅ ՍՓԻՒՔ	2
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ.....	5
«ՄԵՂԻՆ ՈՉ ԹԷ ՄԻՋԱՆՅՔ Է, ԱՅԼ ԴԷՊԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀ ԲԱՅՈՒՈՂ ՀԱՅՈՑ ԳԼԽԱՒՈՐ ԴԱՐՊԱՍԸ.....	5
ԿԻՊՐԱՀԱՅ.....	9
ՍՈՒՐԷՆ ՊԱՊԻԿԵԱՆԸ ԿԻՊՐՈՍԻ ԻՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԱԾ Է «ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿ» ՆԱԽԱԳԻԾԸ.....	9
ԿԻՊՐԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ԱՐՁԱԳԱՆԳԸ ԹՐՔԱԿԱՆ ՈՏՆՁԳՈՒԹԵԱՆՑ ԿԻՊՐԱՀԱՅ ԲՈՆԱԽԼՈՒԱԾ ՏԱՐԱԾՔԷՆ ՆԵՐՍ	10
ԱՐՑԱԽԷՆ ԲՈՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԱԾ 30 ՓՈՔՐԻԿՆԵՐՈՒ ԱՅՑԸ ԿԻՊՐՈՍ	11
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ.....	12
ԱՐՏԱԳԱՂԹ.....	12
ԱԽԵՏԵԱՅ ԵՐԿԻՐ ՍՓԻՒՔԸ.....	14
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ ԵՒ ԲԱԶՄԱԶԱՆԵՑՈՒՄԸ.....	24
ՇՐՋԱԴԱՐՁ ԴԷՊԻ ԵՐԿԻՐ ՆԵՐՍԸ.....	27
ԱՊՐԵԼՈՒՆ ՀԱԶԱՐ ՁԵՌՔՈՎ ԿԱՌՉԱԾ ՀԱՅԸ	30
ՏԵՍԱԿԷՏ	33
ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՅՆԵՐՈՒ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՈՒՄ ԵՒ	33
ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ ՋԱՀԱԿՐԵԼՈՒ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ.....	33
ՀՐԱԺԱՐՈՒՄՆ.....	35
ԶԶՈՒԵԼԻ ԱՇԽԱՐՀ	37
ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՊԷՏՔ Է ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԼ.....	41
ԵՐԵՒԱՆԻ ՓՈՂՈՑՆԵՐԸ	43
ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ.....	44
ՓՈՒՆՋ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ.....	44
ԾՈՎՈՒՆ ԵՐԳԸ.....	51
ԼՈՅՍ ՏԵՍԱՐ ՄԻՐԱՆ ՄԵԶԱՅԻ ՆԱՄԱԿԱՆԻՒՆ Ա. ՀԱՏՈՐԸ	55
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԱՅՑԵԼՈՒՆ	56
ԿԱՂԱՆԴԻ ԱՄԷՆԷՆ ԵՐԶԱՆԿԱԲԵՐ ՆՈՒԷՐՍ.....	57
ԱԿՆԹԱՐԹՆԵՐ	60

ՔԱՌԵԱԿՆԵՐ..... 62

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ո՞ՒՐ Կ'ԵՐԹԱՍ, ՀԱՅ ՍՓԻՒՌ



Հայրապետական զոյգ Կոնդակներով, երկու տարի յաջորդաբար, Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսը «ՍՓԻՒՌՔԻ ՏԱՐԻ» հռչակեց 2022 եւ 2023 թուականները, որպէսզի մեր ուշադրութիւնը սեւեռենք Սփիւռքի հայկականութեան քայլ առ քայլ մաշումին վրայ եւ լուծումներ փնտռենք անոր վերակենսաւորման ի խնդիր:

Ձոյգ Կոնդակները հրաւէ՛ր ու կո՛չ էին խոր ինքնաքննութեան, կարենալ անցնելու Սփիւռքի վերակազմակերպման ու վերաշխուժացման գործընթացին:

Յայտնի իրողութիւն է որ կ'ապրինք արագընթաց եւ արմատական փոփոխութիւններու ենթակայ աշխարհի մը մէջ: «Համաշխարհայնացումը մշակոյթ է, մտածելակերպ է, կենցաղակերպ է, գործելակերպ է, որուն մաս կը կազմենք նաեւ մենք, եւ այսօր այս բոլորին ազդեցութեան տակ կ'ապրի սփիւռքը», ըսաւ Վեհափառ հայրապետը՝ աւելցնելով, որ այս իրողութեան դիմաց սփիւռքը չի կրնար իր կեանքը շարունակել անցեալի մտայնութեամբ, անցեալի աւանդութիւններով:

Դժբախտաբար, ոչինչ փոխուեցաւ սփիւռքահայ կեանքին մէջ: Մեր ժողովուրդը մեծաւ մասամբ կը շարունակէ անտարբեր մնալ ազգային հրատապ հարցերուն նկատմամբ, տակաւ կը նահանջեն մեր մայրենի լեզուն ու մշակոյթը, աւանդութիւններն ու բարքերը, երիտասարդ նորահաս սերունդը կը շարունակէ հեռու մնալ ազգային-եկեղեցական կեանքէ: Կայ աւելին. Չունինք ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՈԳԻ ԵՒ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆ, ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՕՐԱԿԱՐԳԻ շուրջ մեր տարտղնուած ոյժերու իրաւ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ: Չկայ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆ, ՏԵՍԼԱԿԱՆ...

ՀԱՏՈՒԱԾԱՄՈՒԹԻՒՆԸ մեր տունը քանդած է եւ կը շարունակէ քանդել: Կը շարունակէ տիրել այն հիւանդագին մտայնութիւնը որ կ'ըսէ. «Կո՛յր ըլլայ, կա՛ղ ըլլայ, մե՛զմէ ըլլայ», իր բոլոր տխուր հետեւանքներով: Իսկ եթէ յանդգնիս՝ ընկերային ցանցի վրայ կամ այլուր, տեսակէտ մը յայտնել որ խոտոր կը համեմատի տուեալ կուսակցութեան շահերուն, քեզ կ'անպատուեն լուտանքներով, հայիոյանքներով եւ ամենէն լկտի, նողկալի ու փողոցային ցեխարձակումներով: Չկայ տեսակէտներու առողջ փոխանակում, քաղաքակիրթ բանավէճ, այլ կայ՝ ընդդիմադիր տեսակէտ յայտնող անձը անարգելու, վարկաբեկելու եւ անպատուելու չմշակոյթ՝ «Ան որ մեզմէ չէ, լաւ հայ չէ» հիւանդագին մօտեցումով: Եւ միայն



ապշիլ կարելի է, երբ նման հայեցողներ կը վարձատրուին ալ, պաշտօնակոչուելով ազգային-եկեղեցական մարմիններու մէջ...Ո՛վ դարք, ո՛վ բարք:

Նոյն այս ՀՍՏՈՒԱԾԱՄՈՒԼՈՒԹԵԱՆ հետեւանքով, ունինք, մեծաւ մասամբ, կա՛մ ամբողջովին անտարբերներու զանգուածը, կա՛մ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱՍԵՐՆԵՐԸ, որոնց ազգային ոգին, հայրենասիրութիւնը կը սահմանուի ակումբի մը, կուսակցութեան մը, հատուածի մը անոնց ունեցած հաւատարմութեամբ եւ պարտաւորութեամբ:

«Ինչո՞ւ երիտասարդութեան կարելոր մէկ մասը մեր ազգային ու եկեղեցական կեանքին հեռու է» հարցումին, «Կայծակ» համացանցային ամենօրեայ թերթը՝ իր Հոկտեմբեր ամսուան մէկ թիւին մէջ, ունի ուշագրաւ եւ սուր ու կծու պատասխան մը. «Անոնք, որոնք ծանօթ են մեր ազգային-եկեղեցական կառուցուածքին, շատ լաւ գիտեն, թէ շան գլուխը ո՞ր պահուած է: Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը եւ անոր ենթակայ բոլոր թեմերը անխտիր, պատանդ վերցուած են ՀՅԴ-ի կողմէ: Վերէն վար, բոլոր վարչական պատասխանատուները պէտք է անդամ ըլլան Հայ յեղափոխական դաշնակցութեան, այլապէս հեռու կը մնան պատասխանատու պաշտօններէ: Նոյնիսկ եկեղեցասէր ըլլալը բաւարար չէ, նուազագոյնը, եթէ համակիր չես, ուրեմն արժանի չես կոչուելու որեւէ պաշտօնի համայնքէն ներս»: Եթէ ճիշդ է ըսուածը, նշեալ տխուր կացութեան պատասխանատուութիւնը կը կրեն նաեւ միւս կուսակցութիւնները՝ իրենց լուռ համակերպողականութեամբ կամ կրաւորական անգործութեամբ: Մէկ բան ակնհայտ է. տակաւ կը նօսրանայ թիւը հայ ազգային-եկեղեցական կեանքին մէջ ներգրաւուած մեր ոչ-կուսակցական եւ չեզոք կամ անկախ երիտասարդ մարդոյժին...

Հոս կ'արժէ յիշատակել «Յիշատակարան Կիպրահայ Գաղութ»ին մէջ գրուած հետեւեալ իմաստալից գրութիւնը, ինչ կը վերաբերի կիպրահայ ազգային-եկեղեցական կեանքին. «Թաղական խորհուրդի անդամները, առաջին նիստը գումարելէ առաջ եկեղեցի կերթային, Սուրբ Աւետարանին վրայ երդում կ'ընէին՝ հաւատարմութեամբ եւ խղճի մտօք եւ Աստուածային կամաց համաձայն չորս տարի պաշտօնավարել, առանց մարդահաճութեան եւ կուսակցական ոգի կրելու»: Մինչդեռ ակնյայտ է որ մեր եկեղեցիէն ներս, անոր աշխարհական Մարմիններուն մէջ (Թեմական, Վարչական, Հոգաբարձական), յաճախ տեղ տրուած է այնպիսի անձերու, որոնք աւելի կուսակցական հարցերով հետաքրքրուած են քան ազգային-եկեղեցական հարցերով: Դեռ անցեալին ներքին համաձայնութիւն կամ անգիր օրէնք կար, որ Ազգային իշխանութեան մէջ ատենապետները պէտք էր որ անկուսակցական ըլլային: Լրիւ փոխուեցաւ այս դրութիւնը: Ներկայիս, երկու ատենապետները, ե՛ւ Պատգամաւորական ժողովի, ե՛ւ Ազգային վարչութեան կուսակցականներ են: Ի գուր չէ որ շատեր դժգոհութիւն յայտնած են այս նոր իրավիճակին նկատմամբ: «Եկեղեցի» եւ «կուսակցութիւն» հասկացութիւնները անյարիր են իրարու: Առաջինը ազգի կամ համայնքի հոգեւոր միասնութեան շաղախ է, յիշենք անմահ Վահան Թեքեանի բառերը. «Եկեղեցին հայկական ծննդավայրն է հոգւոյս...կամ «Եկեղեցին հայկական բարձր բերդն է հաւատքին իմ պապերուս...»: Մինչ երկրորդը կամ կուսակցութիւնը՝ քաղաքական իշխանութեան ձգտելու պայքար կ'ենթադրէ գերազանցօրէն եւ հետեւաբար պառակտումի ազդակ է: Սա կ'ենթադրէ որ մէկուն նկատմամբ



հաւատարմութիւնը կրնայ բախիլ միւսին նկատմամբ տաճած հաւատարմութեան: (ինչ որ անգլերէնով կ'ըսուի conflict of interests):

Ներկայիս, առաւել քան երբեք, երբ համաշխարհայնացումը կը սպառնայ մեր հայեցի դիմագիծին, լեզուին ու պատմութեան, ազգային իրաւունքներուն ու Դատին, մեզի կենսականօրէն անհրաժեշտ է կեանքի կոչել ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆ ՈՒ ՏԵՍԼԱԿԱՆ, ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ ԵՒ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆ: Հետեւաբար, հրամայական խնդիր է ստեղծել Սփիւռքի ՀԱՅՈՒԹԵԱՆ ՄԻԱՅԵԱԼ ԽՈՐՀՈՒՐԴ մը, որ ունենայ իր պաշտօնաթերթը (օրկան), որ միակամ արտայայտութիւնը ըլլայ բովանդակ Սփիւռքի ըղձանքներուն, փափաքներուն, երազներուն, տեսակետներուն՝ առաջին գիծի վրայ քաղաքական, ապա մշակութային, կրօնա-բարոյական, կրթական: Նման կեդրոնաձիգ, ներքնապէս ուժեղ Ազգային Խորհուրդ մը ո՛չ միայն Սփիւռքի Հայութեան, այլ նաեւ Հայաստանի կառավարութեան համար պիտի ծառայէր որպէս աղբիւր յոյսի եւ զօրութեան...: Այս միտքը, առաջին հերթին, արծարծած է լայնահորիզոն մտաւորական Սիմոն Սիմոնեան՝ իր խմբագրած «Սփիւռք» շաբաթաթերթի Յունիս 1971-ի համարին մէջ տեղ գտած գրութեան մէջ, բայց այս միտք-առաջարկը կը մնայ առաւել քան այժմեական ներկայիս եւս:

Հայ Սփիւռքի մէջ պիտի բանանք վարժարաններ՝ մանկապարտեզ, նախակրթարան եւ երկրորդական: Պիտի բանանք եկեղեցիներ, ակումբներ: Ոյժ պիտի տանք մեր մամուլին: Ոյժ պիտի տանք կուսակցական, բարեսիրական, հայրենակցական եւ տարբեր-տարբեր ազգային կազմակերպութիւններուն: Գնահատելի եւ գովելի: Բայց բոլոր այս գործերուն գլուխը կարելի պիտի ըլլա՞յ դնել ընդհանուր ղեկավարութիւն մը, ՍՓԻՒՌՔԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ, անշուշտ ՎԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ, ՎԵՐՀԱՏՈՒԱԾԱԿԱՆ, ՎԵՐՅԱՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ:

Այդ պարագային, շատ հաւանաբար, կարելի պիտի ըլլար ԻՆՔՆԱՔՆՆՈՒԹԵՆԷՆ անցնիլ ՍՓԻՒՌՔԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ինչ որ դուռը կրնայ լայն բանալ նոր եւ առաւելագոյն մարդոյժի ներգրաւման ազգային-եկեղեցական-հասարակական կեանքէն ներս եւ հետեւաբար հնարաւորել Սփիւռքի վերակենսաւորումն ու վերաշխուժացումը:

Այս մտածումներով կը փակենք տարին եւ կը դիմաւորենք նորը նոր յոյսերով, նոր տեսլականով:

ՇՆՈՐՀԱՒՈՐ ԱՄԱՆՈՐ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴ ՄԵՐ ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐՈՒՆ, ԲՈԼՈՐԻՆ, ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

«ՄԵՂՐԻՆ ՈՉ ԹԷ ՄԻՋԱՆՅՔ Է, ԱՅԼ ԴԷՊԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀ ԲԱՅՈՒՈՂ ՀԱՅՈՑ ԳԼԽԱԻՈՐ ԴԱՐՊԱՍԸ

Նոյեմբերի 17-18-ին Մեղրիում տեղի ունեցած միջազգային գիտաժողովը, որի թեման էր *«Արևիք (Մեղրի). պատմամշակութային ժառանգություն և միջմշակութային կապեր»*, կարևոր իրադարձություն էր Սիւնիքի հոգեւոր-մշակութային ու գիտական կեանքում:



Գիտաժողովին մասնակցում էր նաեւ պատմական գիտությունների դոկտոր, ակադեմիկոս, ճանաչուած թուրքագետ Ռուբէն Սաֆրաստեանը:

Նրա հետ մեր զրոյցը տեղի ունեցաւ Կարճեան գիւղում: Եւ մինչև բուն հարցերին անցնելը՝ հեռուից դիտում էինք Արաքսի դանդաղ ընթացքը, տեսնում Իրանի Իսլամական Հանրապետութեան տարածքով (Արաքսի աջ ափով) անցնող այն մայրուղին, որով տարիներ շարունակ Ադրբեջանի արեւմտեան շրջանները կապուած են Նախիջեւանի հետ:

Մենք միասին և վերստին յայտնեցինք անքննելի տեսակէտը՝ Մեղրին ոչ թէ միջանցք է, այլ դէպի արտաքին աշխարհ բացուող հայոց գլխաւոր դարպասը:

- Պարոն Սաֆրաստյան, հաճելի

է Ձեզ տեսնել Մեղրիում անցկացուող գիտաժողովի մասնակիցների շարքում: Եւ, օգտուելով առիթից, ցանկանում ենք մի քանի հարցի շուրջ զրուցել:

Նախ՝ արդեօք պաղեստինախարայելեան պատերազմը կարող է անդրադառնալ մեր տարածաշրջանի զարգացումների վրայ: Մենք չենք մոռացել, որ 44-օրեայ պատերազմի արդիւնքը պայմանաւորուած էր նաեւ Իսրայէլի ակտիւ դերակատարութեամբ՝ յօգուտ Ադրբեջանի:

- Կարծում եմ՝ ներկայ փուլում չի կարելի նման պնդում անել, որ Համասի և Իսրայէլի միջեւ մղուող պատերազմը կարող է անդրադառնալ մեր տարածաշրջանի վրայ: Քանզի մի կողմից աշխարհի ուժեղ տերութիւններն ամէն ինչ անում են, որ պատերազմի բոցը չտարածուի, պատերազմը լոկալ (տեղային) բնոյթ կրի: Երկրորդ՝ տեղի ունեցող իրադարձութիւններում մեծ դերակատարութիւն ունի Իրանը, որը փորձում է հնարաւորինս սահմանափակել այդ պատերազմը Համաս-Իսրայէլ շրջանակում:

Յոյս ունենանք, որ պատերազմը չի տարածուի այդ շրջանակից դուրս:

Բայց պէտք է նաեւ հաշուի առնել, որ Իսրայէլ-Ադրբեջան շատ սերտ յարաբերութիւնները, մանաւանդ ռազմական արդիւնաբերութեան, ռազմական տեխնիկայի ոլորտում, կարող են որոշակի ազդեցութիւն ունենալ մեր տարածաշրջանի վրայ: Կան տուեալներ, ըստ որի՝ Իսրայէլն Ադրբեջանում, նաեւ Արցախի Հանրապետութեան տարածքում կառուցել է ռազմական նշանակութեան կոմունիկացիաներ: Սրանք մամուլի տուեալներ են,



հետախուզական տեղեկություններ չունենք, բայց, կարծում եմ, դա կարող է վտանգ ներկայացնել տարածաշրջանի համար:

- Ըստ Ձեզ՝ արդե՞ք Ադրբեջանի ռազմատենչությունը կը նահանջի մի քիչ, թե՞ կը շարունակուի. նկատի ունենք Իսրայելի ընդգրկուածությունը պատերազմական գործողություններում:

- Կարծում եմ՝ Իսրայելը՝ որպէս դաշնակից, Ադրբեջանի համար չունի այն նշանակությունը, ինչ Թուրքիան, իմ ընկալմամբ՝ Ադրբեջանը վարում է այնպէս, ինչպէս Թուրքիան է ցանկանում: Այստեղ Իսրայելի գործօնը զուտ ռազմական-հետախուզական է:

- Մեր տպաւորութեամբ՝ Մերձատր Արեւելքում բռնկուած պատերազմի պայմաններում թուրք-իրանական յարաբերություններում տեսակէտների մերձեցում է նկատուում: Ճի՞շտ է մեր ընկալումը:

- Որոշ չափով ճիշտ է, ինչ-որ չափով՝ ոչ: Ինչո՞ւ, որովհետեւ մօտեցումների նմանություն կայ, քանզի Թուրքիան հռետորաբանութեան մակարդակով օժանդակում է Համասին և քննադատում Իսրայելին: Թուրքիան իրականում շատ ասելի զգուշատր քաղաքականություն է վարում՝ կապուած Իսրայելի հետ: Թուրքիան սուր հռետորաբանություն է բանեցնում, բայց մինչև հիմա յարաբերությունները չի խզել Իսրայելի հետ: Երկրորդ՝ տեղեկատվություն եղաւ, թէ Թուրքիան սահմանափակում է առևտրաշրջանառությունն Իսրայելի հետ, որը 20 միլիարդ դոլարի է հասնում: Բայց էլի վերջնական չի դադարեցրել, պատժամիջոցներ չի կիրառել Իսրայելի դէմ: Իսկ Իրանը շահագրգռուած է, որ պատերազմը դուրս չգայ Համաս-Իսրայել շրջանակից: Իրանի քաղաքականությունը շատ ասելի յստակ է, ինքը որոշակիօրէն կանգնած է Համասի և պաղեստինեան ժողովրդի կողքին: Բայց սկզբունքային տարբերությունն այն է, որ Իրանն ու Թուրքիան ունեն տարբեր մօտեցումներ Պաղեստինի և Իսրայելի ապագայի վերաբերեալ: Թուրքիան կողմնակից է երկու պետություն ունենալու մօտեցումին, այն է՝ լինի երկու առանձին պետություն՝ Պաղեստին և Իսրայել: Իսկ վերջերս Թուրքիան նաեւ որոշակի ծրագիր առաջ քաշեց՝ կապուած այդ խնդրի հետ՝ թող լինեն երկրներ, որ երաշխատր կը դառնան: Եւ որպէս անվտանգութեան գարանտ(երաշխատր) իրենք առաջարկեցին իրենց: Իրանը երկու պետություն ստեղծելու կողմնակից չէ, կարծում է՝ մէկ պետություն պիտի լինի, որտեղ պիտի ապրեն եւ՛ պաղեստինցիները, եւ՛ հրեաները: Իրանը որպէս պետություն չի ճանաչում Իսրայելին: Այնպէս որ՝ դա սկզբունքային տարբերություն է:

- Քննարկենք սիւնեցիներիս համար ամենացաւոտ հարցը. տեւական ժամանակ է՝ խօսում են այսպէս կոչուած Չանգեզուրեան միջանցքի մասին: Եւ յանկարծ թուրքերն այլընտրանքի մասին են բարձրաձայնում՝ «Մեզ այնքան էլ պէտք չէ Սիւնիքի տարածքը, մենք Իրանի տարածքով մեր միջանցքը կ'ունենանք»: Արդե՞ք դա նշանակում է, որ Թուրքիան ու Ադրբեջանը հրաժարուել են երբեմնի իրենց երազած միջանցքից՝ Սիւնիքի տարածքով, թե՞ սա հերթական խաղն է:

- Ես կարծում եմ, որ ոչ: Չեն հրաժարուել, որովհետեւ այսպէս կոչուած Չանգեզուրի միջանցքն ունի ռազմավարական նշանակություն: Այդ առիթով բազմիցս խօսել ենք: Իսկ եղած ճանապարհին Իրանի տարածքով, որ սկսել են բարեկարգել, լայնացնել, մարտավարական նշանակություն ունի: Բայց մինչև հիմա երկաթգիծ չկայ, կարծում եմ՝ այդ հանգամանքն էլ նշանակություն ունի, որ մինչեւ հիմա չի կառուցուել Թուրքիայի հատուածը, որով պիտի կապուի Նախիջեւանի հետ: Թուրքիայում այդ մասին քանի տարի



խօսում են, բայց դեռ շինարարությունը չի սկսում: Մօտաւորապէս մի ամիս առաջ համաձայնագիր ստորագրեցին Ադրբեջանի հետ, որ համատեղ պիտի կառուցեն դէպի Նախիջեւան ճանապարհը: Երեւում է՝ Թուրքիային անհրաժեշտ է Ադրբեջանի ֆինանսական աջակցությունը, որովհետեւ Թուրքիայի վիճակը ծանր է: Ադրբեջանն էլ Թուրքիայի առջեւ պայման է դրել՝ քանի որ պատերազմն աւարտուել է իրենց յաղթանակով, ուստի Հայաստանն Ադրբեջանի համար նպաստաւոր պայմաններով պիտի ստորագրի պայմանագիր, ճնշումն ուժեղացնեն Հայաստանի վրայ, հասնեն այն բանին, որ Հայաստանը համաձայնուի նաեւ Զանգեզուրի միջանցքի իրողութեան հետ՝ թղթի վրայ: Որովհետեւ իրենց համար դա բարենպաստ պայման է, յետոյ կարող է դժուար լինել:

Իսկ Իրանի հատուածով անցնող ճանապարհը ժամանակաւոր լուծում է, դա ակնյայտ է...

- **Թուրքիայի խորհրդարանն այս օրերին քննարկեց Էրդողանի առաջարկությունը՝ Ադրբեջանում գտնուող գործերի ներկայությունը եւս մէկ տարով երկարաձգելու մասին: Ինչո՞ւ է դա պայմանաւորուած: Արցախը բռնազավթել են, բայց, կարծէք, մտահոգություններ ունեն:**

- Կարծում եմ՝ դա պայմանաւորուած է Թուրքիայի տարածաշրջանային ամբիջիաներով: Թուրքիան ունի ռազմավարական նպատակ՝ վերահսկողութիւն սահմանել հարաւային Կովկասի վրայ: Նա փորձում է Ռուսաստանի հետ որոշակի համագործակցութեան շնորհիւ հասնել այն բանին, որ ռուսները համաձայնեն, այսպէս ասած, Թուրքիայի օրինական ռազմական ներկայութեանը Հարաւային Կովկասում: Եւ Ակնայում ռազմական կենտրոն ստեղծելը դրա առաջին քայլն էր: Հաւանաբար դա ռուսներին էլ ձեռք է տալիս, որովհետեւ վերջիններս օրինական ձեռով կը պահեն իրենց զինուորականներին Ադրբեջանի տարածքում: Սա ներկայ փուլում ռուս-թուրքական յարաբերությունների առանձնայատկութիւնն է՝ մի կողմից՝ ռազմավարական առումով պայքար, բայց մարտավարական առումով, պայմանաւորուած տնտեսական հանգամանքներով և պատժամիջոցներով, որոշակի համագործակցութեան հնարաւորութիւն:

- **Թւում է՝ հայկական կողմը Թուրքիայի պահանջ-նախապայմաններն աստիճանաբար և անաղմուկ կատարում է. Դուք չէ՞ք նկատում:**

- Օրինակ բերեք:

- **Դէ, օրինակ, ցեղասպանութեան հարցը նախկին հնչեղութեամբ չի դրում:**

- Բայց ոչ որ չի արգելում ցեղասպանութեան թեման քննարկել: Ցեղասպանութեան ճանաչման գործընթացը և՛ նախկինում, և՛ հիմա, և՛ հաւանական է՝ ապագայում, հիմնականում սփիւռքն է առաջ տարել ու տանում՝ Հայ դատի գրասենեակի միջոցով:

Ներկայիս գործընթացները հայ-թուրքական յարաբերությունների կարգաւորման չորրորդ փորձն է: Առաջին երեքն արդիւնք չեն տուել: Այս անգամ թուրքերն աւելի լաւ են պատրաստուել: Ի՞նչ առումով. յատուկ խումբ է ստեղծուել մինչև բանակցությունների սկիզբը՝ մասնագէտներից կազմուած, որոշներին կարողացել եմ բացայայտել՝ ովքեր են: Այդ խումբը մշակել է բանակցային ռազմավարութիւնը և մարտավարութիւնը: Ռազմավարութիւնն այն է, որ Հայաստանի հետ սահմանը չի բացուելու՝ մինչև Հայաստանը բոլոր պահանջները չկատարի: Մարտավարութիւնը հետեւեալն է՝ Հայաստանը



Թուրքիայից ստանում է խոստումներ՝ փոքր քայլերի համար, իսկ իրականությունն դառնալու համար զիջումներ պիտի անի:

Հայաստանի մօտ տպաւորութիւն է ստեղծուում, որ կարող է հասնել վերջնական նպատակին՝ սահմանի բացմանը:

Ամէն դէպքում՝ Հայաստանը բանակցային գործընթացից դուրս չի գալիս: Այ, այս վիճակում էլ պահում են Հայաստանին...

- Շատ բարի: Բայց կարծէք այս անգամ էլ ռուսները մեր հաշուին խնդիրներ լուծեցին Թուրքիայի հետ:

- Չեմ ուզում դա մեկնաբանել, որովհետեւ տեսնում ենք դա: Ինչ վերաբերում է Ռուսաստանի ռազմավարական նպատակին, ըստ իս՝նա ոչ մի ցանկութիւն չունի Հարաւային Կովկասը յանձնել Թուրքիային: Բայց որոշակի կախուածութիւն ունի, թուրքերն էլ կախուածութիւն ունեն: Ահա այս պայմաններում՝ մարտավարական առումով կարող են Ռուսաստանի կողմից լինել որոշակի փոքրիկ զիջումներ Թուրքիային: Բայց որ հնարաւորութիւն տրուի Թուրքիային՝ Հարաւային Կովկասը լրիւ վերցնել իր հսկողութեան ներքոյ՝ Ռուսաստանը թոյլ չի տայ: Թուրքիան Հարաւային Կովկասում իր աշխարհաքաղաքական գերիշխանութիւնը հաստատել է միայն Հայաստանին լրիւ չէզոքացնելով: Ասելս այն է, որ Ռուսաստանը շահագրգռուած չէ, որ Հայաստանը Թուրքիայի կողմից լրիւ չէզոքացուի:

- Անցնենք մեզ աւելի տեսանելի ու շօշափելի թեմայի. արդեօք կարող ենք Արցախի հիմնահարցը համարել փակուած, եթէ ոչ, ապա ի՞նչ քայլեր պիտի ձեռնարկել ներկայ փուլում:

- Շատ կարեւոր է, թէ Արցախի հայութիւնն ինչ որոշումներ կ'ընդունի՝ իհարկէ հաշուի առնելով նաեւ Հայաստանի դիրքորոշումը: Մինչ հիմա չենք տեսել, որ կոնկրետ դիրքորոշում յայտնեն. քննարկումներ են ընթանում: Երկրորդ՝ ի՞նչ է նշանակում Արցախի հարցը պահել օրակարգում: Դա, նախեւառաջ, պիտի նշանակի այն, որ արցախահայութեանն իրաւունք վերապահուի՝ իր համար միջազգային գարանտների (երաշխաւորների) միջոցով, վերադառնալ իր հայրենիքը՝ երբ ցանկանայ: Դա պիտի լինի, նորից ասեմ, միջազգային երաշխաւորների միջոցով: Երրորդ՝ դա նշանակում է ուշադրութեան կենտրոնում պահել Արցախի հիմնահարցը, ամէն ինչ անել, որ այն պատմամշակութային ժառանգութիւնը, որ հիմա կայ Արցախում՝ հայ ժողովրդի կողմից ստեղծուած, չվերացնեն, չոչնչացնեն:

- Իսկ Արցախի իշխանութիւնների պահպանո՞ւմը, չէ՞ք կարծում, որ դա նոյնպէս հրատապ է ու անհրաժեշտ:

- Նախ՝ ի՞նչ է նշանակում Արցախի իշխանութիւնների պահպանում՝ վտարանդիի կարգավիճակում: Այ, սա է շատ կարեւոր՝ Հայաստանո՞ւմ, թէ՞ Հայաստանից դուրս: Քննարկում է նաեւ այս վերջին տարբերակը: Օրինակ՝ Հայաստանից դուրս քիչ հաւանական է, չեմ տեսնում որեւէ պետութիւն, որ համաձայն լինի, քանզի Արցախը ճանաչուած չի եղել որեւէ երկրի կողմից, այդ թւում՝ Հայաստանի: Մովորաբար վտարանդի կառավարութիւնները գործում են ճանաչուած պետութիւնների դէպքում: Այս դէպքում այդ հանգամանքը չկայ: Կարող է դրսում գործել որպէս հասարակական կազմակերպութիւն,



այն է՝ տուեալ պետութեան վրայ Թուրքիայի և Ադրբեջանի ճնշման պայմաններում: Արցախի իշխանութիւններին ընդունող և գործելու հնարաւորութիւն տուող պետութիւնն էլ արդարացիօրէն կը մտածի՝ ինչի՞ համար: Մեծ շահագրգռութիւն պիտի ունենայ: Կարող է այնպիսի պետութիւն համաձայնի, որ հակաթուրքական քաղաքականութիւն է վարում: Իսկ Հայաստանում պահելը, կարծում եմ, իմաստ չունի: Վտարանդի կառավարութիւն, յետոյ ... Հայաստանը չի ճանաչել Արցախի Հանրապետութիւնը:

- Այդ դէպքում արցախահայութեանը, Արցախի հիմնախնդիրը թողնենք բախտի քմահաճոյքի՞ն:

- Խնդիրն այն է, որ Հայաստանի իշխանութիւնները կարողանան արցախահայութեանը կազմակերպել, պահել այնպիսի վիճակում, որ հնարաւորութեան դէպքում մասնակից դառնան նոր զարգացումների: Մնացեալը երազանք է: Հիմա փաստօրէն Արցախը դառնում է հայկական հարցի բաղկացուցիչ մաս: Տխուր բան եմ ասում, բայց սա է իրողութիւնը:

- Թւում է՝ ժամանակից շուտ ենք փակում Արցախի էջը, թւում է՝ շարունակում ենք քայլել Թուրքիայի և Ադրբեջանի քիմքին հաճոյ ճանապարհով, որը որեւէ ողջամիտ տրամաբանութեան մէջ չի տեղաւորւում... Ամէն դէպքում շնորհակալութիւն՝ հարցազրոյցի համար:

Զրոյցը՝ Սամուէլ Ալեքսանեանի և Վահրամ Օրբելեանի

27/11/2023

ԿԻՊՐԱՀԱՅ

ՍՈՒՐԷՆ ՊԱՊԻԿԵԱՆԸ ԿԻՊՐՈՍԻ ԻՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԱԾ Է «ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿ» ՆԱԽԱԳԻԾԸ



Դեկտեմբերի 12-ին, ՀՀ պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեանի պաշտօնական այցը Կիպրոսի Հանրապետութիւն մեկնարկուեցաւ դիմաւորման հանդիսաւոր արարողութեամբ: Հնչեցին Հայաստանի Հանրապետութեան եւ Կիպրոսի Հանրապետութեան պետական օրհներգերը:

Այնուհետեւ տեղի ունեցած է ՀՀ պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեանի և Կիպրոսի

Հանրապետութեան պաշտպանութեան նախարար Միխայիլ Եորդալասի առանձնազրոյցը, որուն յաջորդած է ընդլայնուած կազմով հանդիպում:

Հանդիպման ընթացքին, քննարկուել են պաշտպանութեան բնագաւառէն ներս՝ հայկիպրական համագործակցութեան առնչուող մի շարք հարցեր:

Կողմերը ամփոփել են համագործակցութեան ներկայիս ընթացքն ու նախանշել են անոր զարգացման նոր հնարաւորութիւնները՝ պատրաստակամութիւն յայտնելով գործակցելու աւելի ընդգրկուն օրակարգով՝ ուսումնավարժական ծրագիրներ, փորձի փոխանակում,



ռազմատեխնիկական համագործակցություն և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Սուրեն Պապիկեանը իր գործընկերոջը ներկայացուցած է նաև ՀՀ կառավարության «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը:

Հանդիպման աւարտին, երկու երկիրներու պաշտպանութեան նախարարները հանդէս եկած են լրատուամիջոցներու համար համատեղ յայտարարութեամբ, որուն ընթացքին վերահաստատած են յազեցած օրակարգով համագործակցելու իրենց պատրաստակամութիւնը», - նշուած է հաղորդագրութեան մէջ:

ԿԻՊՐԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ԱՐՁԱԳԱՆԳԸ ԹՐՔԱԿԱՆ ՈՏՆՁԳՈՒԹԵԱՆՅ ԿԻՊՐԱՀԱՅ ԲՈՒՆԱԽՆՈՒՄԾ ՏԱՐԱԾՔԷՆ ՆԵՐՄ

Ինչպէս արդէն գրած էինք ԱԶԱՏ ԽՕՍՔի նախորդ համարին մէջ, Երեքշաբթի 7 Նոյեմբեր 2023-ին, թրքական ոյժերու կողմէ բռնագրաւուած հիւսիսային Կիպրոսի ղեկավարութիւնը բացումը կատարած է հիմնարկութեան մը՝ հայկական Մելիքեան-Ուզունեան եւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ շրջափակին վրայ: Տեղի ունեցածը լուրջ ոտնձգութիւն մըն է հայկական հնամենի տարածքէն ներս, ինչպէս նաեւ՝ կոպիտ խախտումը առաջադրուած փոխադարձ վստահութեան իրանումին եւ կերտումին: Թրքական այս նոր ոտնձգութեան շուրջ հետեւեալ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ կը յանձնենք մեր ընթերցողներու ուշադրութեան:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԻՊՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Նիկոսիոյ Վիքթորիա Փողոցի Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ համալիրին մէջ, կղզիի գրաւեալ բաժինի վարչակարգին կողմէ 7 Նոյեմբեր 2023-ին կազմակերպուած բացման սադրիչ արարողութեան հարցով, Կիպրոսի Հանրապետութեան Թեմի Երեսփոխանական Ժողովի՝ 11/11/23-ին գումարած նիստի ընթացքին, այս հարցը քննելու համար նշանակուած յանձնախումբը, 18/11/23-ին նիստ գումարեց Ազգային Առաջնորդարանին մէջ եւ քննեց տիրող կացութիւնը եւ առնուելիք յետագայ քայլերը:



Հաւաքուած տեղեկութիւններու հիման վրայ եւ լայն քննարկումէ ետք, յանձնախումբը որոշեց իբրեւ առաջին քայլ, նամակներ յղել Կիպրոսի Հանրապետութեան Արտաքին Գործոց Նախարարութեան, Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Կիպրոսի Խաղաղապահ Ուժերուն, Եւրոպական Միութեան Ներկայացուցչութեան եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Դեսպանութեան, բողոքելու կղզին գրաւող վարչակարգին կողմէ առնուած այս

նախաձեռնութեան դէմ:

Յանձնախումբը մօտէն պիտի հետեւի այս հարցին շուրջ զարգացող իրադարձութիւններուն եւ պիտի առնէ համապատասխան քայլեր:

Յանձնախումբի անդամներն են.



Գերշ. Տ. Խորէն Արք. Տողրամաճեան - Կաթողիկոսական Փոխանորդ
Վարդգէս Մահտեսեան - Պետական Ներկայացուցիչ
Վահան Այնէճեան - Ատենապետ Երեսփոխանական Ժողովի
Լեւոն Առաքելեան - Իրաւաբան
Թանիա Էօճիրեան - Իրաւաբան
21 Նոյեմբեր 2023 Դիւան Ազգային Առաջնորդարանի



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԵՐԵՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆՑ
ՏԵՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ

ՌԱԿ Կիպրոսի Շրջանային Վարչութիւն
ՄԴՀԿ Կիպրոսի Շրջանի Վարիչ Մարմին
ՀՅԴ Կիպրոսի Կոմիտէ

Կիպրոսի հայ քաղաքական երեք կուսակցութիւնները խստօրէն կը դատապարտեն թրքագրաւեալ հիւսիսային Կիպրոսի տարածքին մէջ գտնուող հայկական Մելիքեան-Ուզունեան Վարժարանի եւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ շրջափակին մէջ 7 Նոյեմբեր 2023-ին տեղի ունեցած միջոցառումը, որ կը միտի հայոց պատկանող կալուածին վրայ թրքական «կրթական-գիտական» հաստատութիւն մը հիմնել: Այս «կրթական-գիտական» հաստատութիւնը կը ֆինանսաւորուի թրքական անօդաչու սարքեր արտադրող «Baykar» ընկերութեան կողմէ, որուն արտադրանքը իր չարաքաստիկ մասնակցութիւնը ունեցաւ 2020-ին Արցախի դէմ մղուած պատերազմին:

Բռնագրաւուած հայկական կալուածին տնօրինումի այս փոփոխութիւնը սադրանք մըն է կիպրահայութեան եւ առհասարակ ամբողջ հայութեան դէմ եւ կ'ապացուցէ, որ Հայոց Ցեղասպանութիւնը ուրացող Թուրքիան կը շարունակէ իր ոսնձգութիւնները հայութեան եւ հայկական կալուածներու հանդէպ:

22 Նոյեմբեր 2023

ԱՐՑԱԽԷՆ ԲՈՒՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԱԾ 30 ՓՈՔՐԻԿՆԵՐՈՒ ԱՅՑԸ ԿԻՊՐՈՍ



Պետական Ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանի էջէն կ'իմանանք որ Պետութեան մօտ կատարած իր յատուկ դիմում-առաջարկին ընդ առաջ, Կիպրոս հրաւիրուած են Արցախի վերջին պատերազմէն լքօրէն վնասուած եւ բռնի տեղահանուած 30 Արցախցի պատանիներ (12-17 տ) եւ անոնց ընկերացող երեք պատասխանատու երէցներ, 12 օրերու վրայ երկարող կեցութեան մը համար:

Կիպրոսի բարեխնամ Կառավարութիւնը եւ որոշ չափով մըն ալ՝ Համայնքի Ներկայացուցիչը կատարած են նիւթական անհրաժեշտ օգնութիւնը, հոգալով՝ այս խումբին երթելէկի, պանդոկի, պտոյտի եւ առօրեայ կարիքներու ամբողջական ծախսերը:

Միաժամանակ, այս այցելութեան հաճելի եւ յիշատակելի բնոյթ մը տալու նպատակաւ ի գործ դրուած է հաճելի եւ օգտակար ծրագիր մը, որով պտոյտներ եւ այցելութիւններ կազմակերպուած են դէպի կղզիին տեսարժան վայրերը:

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԱՐՏԱԳԱՂԹ



Ռուբէն Յովակիմեան

ԱՐՏԱԳԱՂԹ

«Գաղթականը միայնակ է :
Հայրենիքից դուրս չկայ բններ,
կին, հայր, եղբայր ու հարազատ»:
Լամենէլ

**Արտագաղթը սկզբունքով
բացասական լինելով մնում է
անժխտելի իրականություն**

պայմաններին: Երբեմն արտագաղթել են հեռաւոր կամ մօտակայ բիրտ դրացիների յարձակումներից խուսափելու, երբեմն նաեւ առաւել բերրի տարածք ունենալու, կամ որպէս ապրանքափոխանակման միջոց, հուսկ ստեղծուել են նոր համայնքներ: Կարելի է յիշել Նոր Զուղայի գաղութը, որ հիմնուել է պարսկական Սպահան քաղաքի ճահճոտ արուարձաններից մէկում: Նրա հիմնադրումը տեղի է ունեցել Շահ-Աբաս I-ի կողմից Գողթան գաւառի հայութեան բռնի արքայութիւն 17-րդ դարում: Բնչպէս նաեւ Կալկաթայի հայ համայնքի կամաւոր ստեղծումը հայ վաճառականների կողմից, ուր հիմնադրուում է հայ առաջին ամսագիրը՝ «Ազդարար»ը Մադրասում 1794-ին եւ Յարութիւն Շմաւոնեանի ջանքերով սկիզբ է դրուում Կալկաթայի հայկական տպագրութեանը:

Բնչ խօսք, որ տեղին է յիշել նաեւ Մեծն եղեռնի օրերին հայ հասարակութեան զանգուածային քոչ գաղթը եւ նոր սփիւռքի ստեղծումը, որին հետեւեց ՀՀ խորհրդային շրջանին 46/48ի հայրենադարձութիւնը, որ մասնակի էր եւ յաջող աւարտ չունեցաւ: Այդ համակարգի անկումից յետոյ էր, որ ծայր առաւ Գլենդել եւ այլուր հաստատուելու մոլուցքը, որ դեռ շարունակուում է նուազ ուժգնութեամբ՝ դասալիք լինելու սկզբունքով:

Շատ հեռուն չփնտռելու համար նշենք արցախցի մեր հարազատների բռնի արտագաղթը մի քանի շաբաթ առաջ Բաքուի ջանքերով, որ չարժանացաւ դոյզն ուշադրութեան՝ նոյնիսկ ամիսներով փողոց փակող նրա «փրկարար» ցուցարարների կողմից: «Արցախը փրկենք, որ ՀՀ-ը ապրի» տգէտ պոռոտախօսութիւնը մոռացան եւ մի գիշերելու սենեակ, կամ մի գաւաթ ջուր իսկ չտուեցին գաղթականներին:

Արտագաղթը սկզբունքով բացասական լինելով մնում է անժխտելի իրականութիւն եւ իւրաքանչիւր երկրի իմացականութիւնը թոյլ է տալիս օգտուել նրա կեցութիւնից, ինչպէս անում են ռուս, թուրք, հրեայ եւ այլ իշխանաւորները՝ բացի հայերից, որոնց համար սփիւռքը գնահատուում է երկրորդ կարգի եւ «Նաւթ չունենք, սակայն ունենք սփիւռք» յոխոր տանքը եղել է բազմիմաստ եւ ոչ միայն նիւթական:

Անհերքելի է, որ արդի սփիւռքը մեր ծնողների, իմա՛ առաջին սերունդի սփիւռքը չէ: Մերնդափոխութիւն է եղած, եւ այն մեծ մասամբ դադարել է հայախօս լինելուց, սակայն բացառութիւնները յարգելի են: Աւելի բազմադէմ է հայ սփիւռքը՝ երկրի համեմատ, այնուհանդերձ ժամանակն է եւ անհրաժեշտ, որ նրանք միասնաբար կարողանան վերանայել իրենց յարաբերութեան որակն ու բովանդակութիւնը, իրար լրացնելու միտումով եւ ոչ հակադրուել ի շահս որեւէ խմբակցութեան: Այդ է միակ ուղին պատուով վերապրելու եւ ծառացած մարտահրաւերներին դիմակայելու: Գաղտնիք չէ, որ եղեռնից ճողոպրած առաջին սերունդը՝ ապաստանած որեւէ երկրում, ի մի գալով, նոյնիսկ իր կիսաքաղց



վիճակով քաջութիւն եւ իմաստութիւն է ունեցել եկեղեցի եւ դպրոց կառուցել, տարբեր միութիւններ ստեղծել, որոնց ստուերի ներքոյ կուսակցութիւններ են աճել՝ սատար լինելով հայրենիքին, ի հեճուկս ոմանց, պահպանելով ազգային ոգին եւ ինքնութիւնը՝ առանց ենթադրելու, որ այդ փայփայած խմբակները ուշ թէ կանուխ՝ հասունանալով իրար կոկորդ պիտի կրծեն եւ հայրենի պետականութեանը անարգեն:

Տարբեր է կացութիւնը այսօր:

Համաշխարհայնացումը իր աւերիչ ազդեցութիւնը ունեցաւ համայն հայութեան վրայ եւ որպէս յաւելում երկրում տիրող ոչ-առողջ քաղաքական բախումներին, որ վերանայումի կարիք ունեն ազգի եւ պետութեան մակարդակով: Արդի հիմնական պահանջը հայեցի դաստիարակուել ու ապրելն է: Հայրենիք-սփիւռք յարաբերութեան վերանայելու անհրաժեշտութիւնը առկայ է՝ նոր սկզբունքներով գործակցելու, առ այս կարելի է ընդօրինակել մանաւանդ հրեաներին, որոնք ջանք չեն խնայում իրեց մայր հայրենիքի հետ համագործակցել այն հզօրացնելու, անտեսելով քաղաքական, կրօնական, կրթական, կենցաղային տարաձայնութիւնները:

Նշուած այդ աշխատանքը պէտք է գործի դրուի պետութեան եւ սփիւռքի մասնագիտական միացեալ ջանքերով՝ հայ մնալու գաղափարախօսութիւնը հիմնք ունենալով:

Այլ է, տարբեր եւ անմխիթար արտագաղթող որեւէ հայ անձի կամ ընտանիքի դրութիւնը: Նրանք թափառական են եւ անօգնական, թէպէտ իրենց կամքով եւ սխալ ընտրութեամբ թէեւ դասալիք, բայց նրանք կարող են դառնալ օգտակար, եթէ քաջած դժուար օրերը չդառնան հայրենիքի նկատմամբ ատելութեան թունաւոր մաղձ:

Հարիւրամեայ քաղաքական անցեալով իմբեր, որ իրենց տհաս, աճապար, ստոր քայլերով, փորձում էին խանգարել պաշտօնական այցերի ընթացքին մերձեցման բոլոր քայլերը՝ ի՞նչ էր նրանց նպատակը: Հայ պետական այրերը, նաեւ ԱՄՆ հայ դեսպանը արժանանում են անպատշաճ վերաբերմունքի, մեր «փրկիչ» ազգակիցների կողմից, զանց չառնելով վարչապետին փոխադրող մեքենայի վրայ հաւկիթ ու լուլիկ նետելը: Յաւալի է մինչեւ իսկ ողբալի: Ի դէպ ուշադրութեան արժանի է Արամ Ա-ի այցը ԱՄՆ հայ դեսպանատուն եւ նրա դռնփակ գլուխ գլխի գրոյցը (tête à tête) դեսպան Մակունցի հետ, առանց որեւէ միջանկեալ վերահսկող ուղեկցի, որ դրական քայլ է եւ յուսանք, որ վարչապետի հրաժարումը պահանջող որեւէ հայց չի ներկայացրել:

Արդի արեւմտեան եւրոպայի տասն հազարից աւելի բնակչութեամբ քաղաքներում, մանաւանդ ծովեզրեայ, առանց բացառութեան կայ մի քանի խորտկարան քաղաքի ամենաբանուկ տարածքում՝ նախընտրելի է հայաբնակ, անունով «Մտամբուլ կամ Մարմարա», թուրք անձանց պատկանող: Ինձ հասած տեղեկութեան համաձայն թուրք պետական մարմինները վարկի ձեւով սատարում են այդ անձանց, որ յաւերժ մնում են երկրին սիրահար եւ պարտական, որ պարզ լեզուով կոչուում է «հինգերորդ շարասին»: Աշխատանքի մի ձեւ է դրսու, որ կարելի է ընդօրինակել քան թէ թողնել մեր ազգակիցներին թափառականի եւ երբեմն հակահայի վիճակում:

Մտածելու եւ նախաձեռնելու մեծ կարիք ու հնարաւորութիւն կայ եւ գուցէ հնարաւոր է արտագաղթի բացասական երեւոյթը դրական հետեւանք ունենայ ի օգուտ մեզ, հմտօրէն հարցին մօտենալու պարագային, միայն թէ բացակայ են նախաձեռնողները: Ի վերջոյ պէտք է հաշուի առնել նաեւ իւրաքանչիւրի իր քայլերի ազատ ընտրութիւնը սահմանափակելու վարկածը:

Ի վերջոյ արտագաղթը զազրելի է, ինչպէս իրենք՝ առանց յատուկ պատճառի արտագաղթողները, քանզի ամէն անհատ լքում է երկրի նկատմամբ ունեցած քաղաքացիական պարտականութիւնները, անգիտակցաբար դատարկելով հայրենիքը:

Որքան ճիշտ եւ ուղղամիտ կը լինէր, եթէ հաստատուէին երկրում այդ չարիքը վերացնող պայմաններ:

Հասկացողին բարի ողջոյն:

20-11-23

Ռուբէն Յովակիմեան- Սեն Ռաֆայել

ԱԻԵՏԵԱՑ ԵՐԿԻՐ ՍՓԻԻՌՔ

Դոկտ. Արէլ քինյ. Մանուկեան



Ժընեւի գլխաւոր կայարանին մօտակայքը՝ Rue de Fribourg թաղին մէջ կը գտնուի նպարեղէնի խանութ մը, ուր սովորութիւն ըրած եմ ատենը մէյ մը այցելել, յատկապէս երբ տանս խոհանոցին մէջ կը պակսին արեւելեան մեր կերակրատեսակներու պատրաստութեան համար անհրաժեշտ մթերքը եւ անոնց համ ու հոտ տուող համեմները: Նպարավաճառը՝ Ֆարուք, փաքիստանցի միջին տարիքի տէր զուարճախօս եւ յաճախ զարմանալիօրէն

սրամիտ անձ մըն է, որ յաջողած է իր այդ փոքր խանութի տարածքին մէջ ճարտարօրէն հսկայ լեռան մը չափ արեւելեան բազմատեսակ ուտեստեղէն ամբարել: Թերեւս հիանալին ոչ այնքան այդ փոքր տարածքը աշխարհի բոլոր անկիւններէն ներածուած մթերքով դիզելն է, այլ ստոյգ իմանալը, թէ սննթամթերքի այդ անհամար փաթեթներուն, տուփեղէններուն, պահածոներուն, ապակեղէններուն եւ խոշոր պարկերուն մէջ ո՛ր կը գտնուի ամենագնձոտ համեմէն մինչեւ ամենօրեայ պահանջարկ ունեցող ուտելիքը:

Այդ օր եկած էի բրինձ, լիբանանեան հաց եւ կարմիր պղպեղ գնելու: Լիբանանեան հացին տեղը գիտէի, բայց նկատեցի, որ խանութին մուտքէն դէպի վճարման դրամարկղը տանող նեղլիկ միջանքին մէջ ճիշդ իմ ուզած հացի իրար վրայ շարուած տասնեակէ մը աւելի տուփեր կային: Դիմեցի Ֆարուքին՝ հարցնելով.

– Արդեօք երբուրնե՞ն հացերը:

– Անցեալ տարուրնէ,– պատասխանեց Ֆարուք՝ իրեն յատուկ զուարճախօսութեան արուեստով:– Չե՞ս զգար ջերմութիւնը, միթէ չե՞ս առներ բոյրը, տակաւին նոր ստացած եմ,– կարծես անտեղի հարցումէս դժգոհելով ըսաւ ան:

– Շատ բարի,– ըսի եւ տուփերէն հացի քանի մը տոպրակ առանձնացնելով՝ ապահով դրի վճարման դրամարկղին մօտ՝ սեղանին վրայ:



– Բրինձ ունի՞ս, Ֆարուք,– կրկին դիմեցի,– հաճիս ինձի լաւագոյն բրինձը տուր:

– Լաւագոյն բրինձ գոյութիւն չունի, պարո՛ւն,– պատասխանեց Ֆարուք՝ չարաճճի ժպիտ մը ուրուագծելով դէմքին վրայ:

– Ինչպէ՞ս թէ,– հակաճառեցի ես,– գորօրինակ՝ պարսկական «պասմաթին», որ աշխարհի լաւագոյն որակ ունեցող բրինձներէն կը համարուի:

– Լաւագոյն բրինձ գոյութիւն չունի ըսի ձեզի, պարո՛ւն, որովհետեւ բրինձին լաւագոյն որակը եփողէն կախում ունի եւ ոչ թէ բրինձէն:

Խնդուքս չէի կրնար զսպել փաքիստանցի այս պարզ մարդուն սրամտութենէն: Արդարեւ, իրաւունք ունէր ան: Փաստօրէն ի՞նչ կապ ունի սննդամթերքին որակը, երբ եփողը ձախտող է, ու կրնայ լաւագոյն բրինձը անհամ ու անհրապոյր, չըսելու համար անճաշակելի շիլափլաւի վերածել:

– Արդեօք կարմիր պղպեղ ալ ունի՞ս,– դիմեցի իրեն,– կծուն պիտի խնդրէի, եթէ կարելի է:

– Ի հարկէ ունիմ,– պատասխանեց ան ու ցուցամատը ուղղեց քայլ մը անդին գտնուող բարձրահասակ պահարանի մը մէջտեղի դարակներէն մէկուն մէջ իրարու վրայ շարուած փլասթիքէ փաթեթներուն:

– Ո՞րկէ կու գան,– հարցուցի իրեն:

– Խանութէն,– կտրուկ պատասխանեց ան՝ դէմքին տալով նոյն կատակաժպիտ տեսքը:

– Շա՛տ բարի, կատակը մէկդի, ըսել կ'ուզեմ ո՞ր երկրէն՝ Լիբանանէ՞ն, Սուրիայէ՞ն, թէ՞ Թուրքիայէն:

– Ո՛չ Լիբանանէն եւ ո՛չ ալ Սուրիայէն: Գիտեմ, որ դուն թրքական ապրանք չես գներ: Բարեբախտաբար հնդկափաքիստանեան պղպեղ է եւ արտակարգ կծու:

– Գիտե՞ս, Ֆարուք, աստենին տարին մէկ-երկու Լիբանան կ'երթայինք եւ արեւելեան մեր քիմքին սովոր չալէպի կամ Այնճարի լաւագոյն պղպեղը կը բերէինք: Հիմա այդ բոլորէն զրկուեցանք: Երկրին մէջ տիրող քաղաքական եւ տնտեսական անկայունութեան պատճառով այսուհետեւ ո՛չ երթալու եւ ո՛չ ալ այդտեղէն ուտեստ բերելու տրամադրութիւն կայ:



– Յանցաւորը դո՛ւք էք,– պարսաւալից ըսաւ Ֆարուք:– Երբ ձեր երկիրը, հողը ու տունը կը ձգէք եւ կը հեռանաք՝ յօժարակամ օտարանալու Եւրոպայի այս ափերուն, ուրիշը կը տիրանայ անոր, իսկ դուք ձեր հողին ու ջուրին բարիքը կը խնդրէք անկէ, որ երբեմն ձե՛րն էր, բայց հիմա ուրիշը տիրացած է անոր:

Յաճախորդներ, որոնք արդէն խանութն էին, իսկ ուրիշներ յաջորդաբար դռնէն ներս կը մտնէին, այնուհետեւ անկարելի դարձուցին շարունակելու այս գրոյցը, որ գուցէ կրնար աւելի հետաքրքրական դառնալ՝ իմանալով բուն շարժառիթը Ֆարուքի կարօտաբաղձ յայտարարութեան: Արդե՞օք դժգոհ էր ան ժընեւի նման գեղեցիկ քաղաք մը հաստատուած ըլլալուն համար: Դժուարութիւնն էր ունէր իր ընտանեկան կեանքին կամ գործին մէջ, թէ՞ իր յաճախորդներուն մեծ մասը, որոնք Մերձաւոր Արեւելքի երկիրներէն արտագաղթած ապաստանեալներ էին, մերթ ընդ մերթ իրենց հոգիին տուայտանքն ու ներքին խռովքը կը վստահէին անոր:

Համեմատելով այլ երկիրներու հետ՝ անշուշտ Զուիցերիա լաւ երկիր մըն էր, սակայն դրախտ մը չէր: Յատկապէս այն մարդոց համար, որոնք արմատախիլ դարձած էին իրենց հայրենի հողէն, կտրուած էին իրենց ինքնութենէն, պատմութենէն, սեփական մշակոյթէն եւ ազգային սովորութիւններէն, սկիզբէն նոր կեանք մը սկսելու դժուարին եւ բազմատեսակ մարտահրաւէներու առջեւ կը գտնուէին: Փաստօրէն իրենց կեանքը վերջացած էր այն երկիրին մէջ, ուրկէ պատերազմներու բերումով, քաղաքական թէ տնտեսական պատճառներով ստիպողաբար հեռացած էին, իսկ հոս հիմա սկսած էր նորը՝ բոլորովին անորոշ հեռանկարով: Կ'երեւի մարդկային գոյութեան համար ծանրագոյն երեւոյթներն մէկն ալ անորոշութիւնն է:

Բայց ինչո՞ւ այդ պարսաւանքը ինծի ուղղեց Ֆարուք: Դժուար թէ ան տեղեակ ըլլար հայկական ինքնութեանս: Գիտէր այդչափ, որ Լիբանանէն եկած եմ եւ թերեւս ալ լիբանանցի արաբ մը կը կարծէր զիս: Սակայն եթէ իմանար իսկ, ի՞նչ տարբերութիւն պիտի ընէր, երբ, փաստօրէն, ես ալ հեռացած կրնամ սեպուիլ իմ հայրենի բնօրրանէն, թէպէտ ոչ-յօժարակամ, միանշանակ՝ ակամայ, ըլլալով ժառանգորդը ժողովուրդի մը, որ ցեղասպանուած է, դարձած է հայրենագուրկ եւ վտարանդի իր պապենական հինաւուրց հողերէն:

Ուրկէ՞ Ֆարուք դոյզն պատկերացում մը պիտի ունենար հայ սփիւռքի մասին, որ տակաւին սկիզբ առած էր Վաղ միջնադարուն եւ աւելի լայն ծաւալ ստացած Բարձր միջնադարուն, նամանաւանդ Բագրատունեաց քաղաքամայր Անիի կործանումէն, ապա աւելի ուշ Կիլիկիոյ հայկական թագաւորութեան անկումէն ետք, երբ բազմաթիւ հայեր պանդուխտի ցուպը առնելով իրենց ձեռքին՝ առագաստ բացած են դէպի պալքանեան երկիրներ, Ղրիմ եւ



մինչեւ Լեհաստանի զանազան քաղաքներ, ուր ձեւաւորած են գաղթավայրեր, ծաղկեցուցած առեւտրական կեդրոններ, կառուցած ապարանքներ, բազմաթիւ եկեղեցիներ եւ վանքեր: Մայր երկիրը լքած՝ օտար երկինքի տակ իր հանգիստը փնտռած է հայ ժողովուրդի զգալի հատուածը, պատմութեան հոլովոյթին մէջ շարունակ ստեղծելով նոր գաղթավայրեր աշխարհի չորս ծագերուն: Ի դէպ, պէտք է խոստովանիլ, որ հայոց մօտ այս երեւոյթը ոչ անպայման արտագաղթելու յօժարական տրամադրութիւն մը եղած է, այլ առաւել եւս պայմանաւորուած է Հայաստանի մէջ օտար տիրակալութիւններու հետեւանքով հայկական թագաւորութեանց բարձումով, պետականութեան կորուստով, ասպատակումներով, գերեզմաններով եւ նախճիր-եղեոններով: Ապահով կեանք եւ խաղաղ երդիք մը գտնելու հեռանկարով հայը հեռացած է իր հողէն՝ զայն զիջելով Միջին Ասիոյ խորքերէն իր հազարամեակներու տարածքը ներխուժած թրքական քոչուր ցեղերուն:

Ծնած եւ հասակ առած ըլլալով հայրենի բնաշխարհէն դուրս՝ սփիւռքի անձայր երկինքին տակ, ի վերջոյ ինծի համար էական տարբերութիւն մը պիտի չընէր, եթէ ապրէի իմ ծննդավայր Լիբանանի, Մերձաւոր Արեւելքի երկիրներէն որեւէ մէկուն, Աւստրալիոյ, Հիւսիսային թէ Հարաւային Ամերիկաներու, Ափրիկէի թէ Եւրոպայի մէջ, երբ ասոնցմէ ոչ մէկը իմ բուն հայրենիքը կրնար համարուիլ, այն երկիրը, ուր իմ հայրերը կ'ապրէին եւ զայն իբրեւ սրբազան աւանդ ձգած էին իրենց հայկազուն սերունդին:

Արդեօք սփիւռքը սփիւռքահայուն տեսակ մը հայրենիքը դարձած է. դժուար է ըսել: Սփիւռքահայ բառակապակցութիւնը կապ մը ունի՝ իրողութիւն մը դրսեւորող այս ըմբռնումին հետ: Հարկ է զայն խորքային վերլուծումներու ենթարկել իր բովանդակ եւ կնճռոտ երեսակներով: Վերջը ի՞նչ պիտի տայ վերլուծումներու արդիւնքը, երբ փաստը կը մնայ փաստ, որ հայ եւ ծագումով, բայց կ'ապրիս հայրենի բնօրրանէդ դուրս՝ օտար երկինքներու տակ, այլացեղ ժողովուրդներու, մշակոյթներու, կրօններու եւ դաւանանքներու միջավայրին մէջ: Թէպէտ այսօր որոշ երկիրներու մէջ հայրենիք հասկացութիւնն ալ տարբեր կը մեկնաբանուի, քանի ընկերային կեանքը հոն նոր ընթացք մը առած է՝ կազմելով բազմազգ եւ բազմամշակութային հասարակութիւն մը: Այսուհանդերձ կարելի՞ է ըսել, թէ հարիւր տոկոսով սփիւռքահայ մըն եմ: Այսինքն ինքնութեամբ հայ, միաժամանակ հարիւր տոկոսով լիբանանցի, սուրիացի, ամերիկացի կամ ֆրանսացի, ինչպէս աստենին դիպուկ ձեւակերպած էր մեր աշխարհահռչակ երգիչը՝ Շարլ Ազնաւուր: Այս պարագային կարելի՞ է նաեւ հաշտարար լուծում մը առաջարկել՝ ըսելով, թէ վերոգրեալ երկիրներէն որեւէ մէկը, ուր ծնած եմ ու կ'ապրիմ հիմա, այլապէս այդ երկիրներէն մէկուն կամ միւսին քաղաքացիութիւնն ալ կը կրեմ, հարիւր տոկոսով կրնայ նոյնքան իմ հայրենիքը նկատուիլ, ինչպէս հարիւր տոկոսով միաժամանակ Հայաստանն է իմ հայրենիքը:



Իրականութեան բաժին մը ըլլալու է ըսուածին մէջ: Բայց հարցը միեւնոյն է եւ կը մնայ առեղծուածային: Ինչո՞ւ չենք ապրիր մեր հայրենի բնօրրանին մէջ, մեր պապենական հողերուն վրայ, ուր մեր ցեղին արմատներն են եղած, մեր պապ ու պապերն են ապրած եւ ստեղծագործած: Այդ հայրենիքը, որ հազարամեակներով մե՛րն էր եղած, աւա՛ղ, բռնա-գաւթուած է Միջին Ասիոյ խորքերէն եկած Օղուզ ցեղախումբի եւ Օսմանի բարբարոս ժառանգորդներուն կողմէ: Անոնք մեզ դարձուցին հայրենագուրկ, բնիկը՝ քոչուոր, մահու աքսորներու, արիւնալի անվերջ կոտորածներու եւ ցեղասպանական բազմաթիւ բռնարարքներու իրագործումով: Մեր ներաշխարհը մեզի կը թելադրէ, թէ մե՛րն է այդ հայրենիքը՝ Արեւմտահայաստանը, որ հայն է անոր միակ ու ճշմարիտ իրաւատէրը: Միւս կողմէ մեր գիտակցութիւնը իրատեսութեան դառն հրաւեր կը կարդայ մեզի՝ պարզելով, որ այսօր այդ հողերուն վրայ իրենց թուային քանակով մեզ գերաշոյթ միլիոնաւոր թուրք ու քիւրտ այլազգիներ կ'ապրին, որոնք նոյնքան ամուր կապերով մեր դրախտավայր երկիրը իրենց պապերէն ժառանգ ստացուած հայրենիքը կը համարեն: Արդեօք ո՞ր քիւրտ գիւղացին արիւն պիտի չթափէ այն արտին համար, որ այսօր ինք կը հերկէ ու անոր բարիքը կը վայելէ՝ եթէ պնդես, թէ այդ եղած է պապիս սեփականութիւնը եւ փորձես զայն խլել իրմէ: Նմանապէս ո՞ր թուրքը ոճիր պիտի չգործէ,– միեւնոյն է՝ որքան ալ քաղաքակիրթ թուի ան կամ պատկանի յառաջդիմական, ընկերվարական կոչուող այս կամ այն կուսակցութեան,– երբ ըսես՝ նստած տունդ պատմականօրէն իմն է, վե՛ր կաց, ե՛ս պիտի ապրիմ հոն: Արդեօք գորշ գայլերու արիւնկզակ բնագոյր իսկոյն պիտի չգարթնի իր մէջ: Գաղափարախօսական կամ կուսակցական ինչ հոսանքէ ալ իշխանութեան գլուխ եկած ըլլայ թրքական պետութեան օրուան առաջնորդը, այս կամ այն նախագահը, նախարարը, թեկուզ պետական համեստ պաշտօնեան, հայուն երբեք պիտի չըսէ՝ նոյն գաղափարները կրողն ենք, հետեւաբար ճանչնալով պապերուս հայոց դէմ իրագործած ցեղասպանութիւնը՝ քեզի կը վերադարձնեն պատմական հայրենիքդ, եկո՛ւր եւ վերցո՛ւր զայն՝ Արեւմտեան Հայաստանն ու Կիլիկիան, քաղաքամայրդ՝ Անի, եւ ազգային գոյութեանդ մեծագոյն խորհրդանիշ Արարատդ վեհափառ: Ան ոչ իսկ պիտի առաջարկէ՝ ըսելով, եկո՛ւր, հայրենակի՛ց, վերստին միասին ապրինք այս հողին վրայ, որ երբեմն բացառապէս ձերն էր, բայց հիմա նաեւ մե՛րն է ան: Եկէ՛ք եւ եղբայրական խաղաղ համակեցութեամբ միասին ստեղծագործենք ու միասնաբար շահինք մեր կեանքը: «Արեւելեան Անատոլու»-ի վրայէն հանենք Թուրքիան եւ փոխարինելով վերանուանենք Արեւմտեան Հայաստան: Անուրջներ են լոկ եւ շատ գեղեցիկ գաղափարներ՝ իրական ըլլալու համար: Կայ հինէն աւանդուած կարգախօս մը, թէ «հողը միայն արիւնով կ'առնեն», զայն կը վերաբնակեցնեն ու սիրելով կը պահեն:

Հաշտուիլ այս կացութեան հետ, ընդունիլ մաղձոտ իրականութիւնը եւ դադրիլ պահանջատէր ըլլալէ՝ անկարելի՛ է: Հրաժարիլ այս ամէնէն, անձնատուր ըլլալու, անցեալէդ պար-



պուելու, ինքնութենէդ սնանկանալու եւ արժանապատուութիւնդ բռնաբարած ըլլալու գիտակցութեանդ վրայ այրող զգացում կ'առթէ: Ստոյգ կը դադրիս մարդ արժէք ըլլալէ, կը փոքրանաս, կը նուաստանաս նախ անձիդ առջեւ, ապա, ձեռով մը, շրջապատիդ մէջ: Այսպէս, սփիւռքահայու այս երկընտրանքին մատնուած ենք, սակայն առանց ընտրել կարենալու ո՛չ մին եւ ո՛չ միւսը: Ահա ա՛յս է մեր ճակատագիրը:

Առաջին անգամ չէ, որ առկան խռոված էր միտքս եւ յուզած հոգիս: Փաքիստանցի նպարավաճառին դիտողութիւնը, որքան ալ ըլլար տեղի թէ անտեղի, պարզապէս վերստին կայծ մը տուաւ հսկայ հրդեհին, որ արդէն միշտ մէջս եղած է եւ այսպէս ալ կը մնայ այնքան ատեն, որ գոյութիւն ունի իր աւետեաց երկիր սփիւռքին դատապարտուած սփիւռքահայը: Սփիւռքահայու գոյութեան եւ ինքնութեան մէկ անբաժան մասը կը կազմէ այդ: Ծնած ըլլալ օտար երկինքներու տակ՝ կը նշանակէ կուրծքին տակ երկփեղկուած հոգի մը կրել: Պէտք է, կամայ թէ ակամայ, հաշտուիլ իրավիճակին հետ, ունենալ սփիւռքեան ծննդավայր մը, ապրիլ եւ ստեղծագործել այլ արտերկրի մը մէջ՝ պատկանելով միաժամանակ պատմութեան մը, որ իր զօրեղ արմատներով քեզ հող-հայրենիքիդ կը կապէ, գիտակցութիւնդ եւ էութիւնդ համակ անոր հետ կը նոյնացնէ ու արեանդ ամէն մի ծինը հազարամեակներու խորքէն եկող անոր կանչը կը լսէ:

Սփիւռքահայուն ձեռք բերած բարիքը,– որ սփիւռքին ձրիաբար բաշխած նուէրը չէ,– բնաւ չէ շլացուցած զինք, այլ ան կարօտաբաղձ հայեացքը միշտ սեւեռած է դէպի իր իսկական հայրենիքը, մինչդեռ այն երկիրը, ուր ան աչքերը լոյսին բացած է, համարած է ընդամենը իր ծննդավայրը կամ առաւելագոյնը՝ իր երկրորդ հայրենիքը, առաջնահերթութիւնը վերապահելով ընդմիշտ Մայր Հայաստանին՝ համայն հայութեան իրական եւ հոգեւոր հայրենիքին: Արդարեւ ի գուր չէ, որ անոր «մայր» պատուանունը տրուած է, որովհետեւ ան հայուն համար սոսկ հող ու սահմաններ չէ, այլ մօր մը պէս համակ սէր եւ սրբութիւն է միաժամանակ:

Ինծի երբեմն այնպէս կը թուի, որ ընդհանրապէս հայ ծնիլը եւ նամանաւանդ սփիւռքահայ՝ դիւրին չէ: Հայրենագուրկ ըլլալը մեզի դարձած է ճակատագիր, գերդ մեր ճակտին գրուած անէճք մը: Իսկ մեր ամբողջ գոյապայքարը կը կայանայ զայն փոխարկելու կենսառիթօրինութեան մը մէջ: Ամերիկաներու եւ Եւրոպաներու մետաքսեայ հանգստաւէտ բարձերը մեզ չեն հետաքրքրեր: Ամէն ինչ շահուած է չարաչար աշխատանքով, արդար քիրտով ու վաստակով, Եղեռնի կարմիր անապատներէն եկած մեր հեզ պապերու, Տէր Զորի բիրտ արեւէն խանձած տատերու եւ ծնողաց ստանձնած մեծամեծ զոհողութիւններով: Մենք տեսած ենք սով ու զրկանք, պառկած ենք գետնախշտի վրանաշէն անհիւրընկալ քաղաքներու տաղաւարներու մութին տակ: Բայց չենք վիատած, այլ աներկբայ ապաւինած ենք մեր



վերապրելու կամքին, քարեն հաց հանելու աշխատասեր ոգիին եւ հաւատացած սեւ ամպերու ետին շառագունող ապագայի վառ արշալոյսներու յաղթանակին:

Ինքնագիտակցութիւնը թելադրած է մեզի հպարտ ըլլալ մեր հայեցի լինելութեամբ ու անքակտելիօրէն կապուիլ մեր եզակի ինքնութեան, մշակոյթին, ազգային հաւաքական պատկանելիութեան, հայերէնին եւ հայրենիքին: Հայրենակորուստ շատ մը ազգեր՝ ասորիներ, քիւրտեր եւ ասոնց նման շատեր, – եթէ երբեմն ունեցած են հայրենիք մը կամ պիտի ուզէին վերստին տէր դառնալ անոր, – ըղձագին երանի պիտի տային մեզի, որ հակառակ պատմութեան մէջ կրած մեր արհաւիրքներուն, հողային տարածքներու ծանր կորուստին, տակաւին ունինք Հայաստան ձայն գործվագութեւ եւ ցանկալի անունով երկիր մը, կտոր մը հայրենիք եւ պետութիւն: Օտար ազգերու եւ արնախում ցեղերու դարաւոր տիրակալութենէ ետք, կրցած ենք վեր բարձրացնել մեր ազգային անկախութեան խորհրդանիշ եռագոյն դրօշը, որուն շուշան հովանիին տակ ներշնչուելու, ստեղծագործելու եւ, ի վերջոյ ամենայնի, վերատիրանալու ապահով ու մարդավայել կեանք մը ապրելու իրաւունքին:

Ազգային իւրաքանչիւր սխրանք, ամէն մի նուաճում եւ յաջողութիւն, – հոս ի՞նչ նշանակութիւն ունի մեծը կամ փոքրը, – անասելի երջանկութեամբ կը համակէ մեզ եւ ուրախութեան առիւնքնող զգացումով կը պարուրէ մեր հոգին: Սակայն անոր անկումները, ունեցած ձախողութիւններն ու կրած ծանր կորուստները կը խոցեն մեր սիրտը ու կոտտացող նոր վերքեր կը բանան անոր վրայ:

Ի դէպ, ի՞նչ կարելի է ըսել հայ ժողովուրդի նորագոյն կորուստներուն՝ Արցախի եւ անոր պաշտպանութեան սիրոյն իրենց գարուն կեանքերը զոհած լոյս մարտիկներու մասին: Ի հարկէ շատ բան եւ ոչինչ: Արդարեւ բառերն անզօր են արտայայտելու իւրաքանչիւր հայու ներաշխարհին անվերջ ցաւն ու մորմոքը, որուն իրականացման պատասխանատւութիւնը, անտարակոյս, ամենքս կը կրենք: Լացն ու ողբը, մեր գլխուն վրայ մոխիր ցանելն ու յետողորմեայի գալը ոչինչ կ'օգտէ. զգաստանա՛լ է պէտք: Ազգովին ձախողեցանք՝ պետութեամբ, իշխանութեամբ, քաղաքական կուսակցութիւններով, եկեղեցիներով ու կղերով, հայրենիքով եւ սփիւռքով, մեծով ու փոքրով, իսկ հիմա զգաստանա՛լ է պէտք:

Չնախապատրաստուեցանք դիմագրաւելու համար աշխարհաքաղաքական պայթիւնավտանգ վերիվայրումներու յղած մարտահրաւերները, որոնց ոտանձայնը անշուշտ կը լսէինք: Չարութեան անիւր կը պտըտէր եւ իր մահասփիւռ սուր խովով մեզմէ ոչ-հեռու երկրագունդի երեսը կը պատռէ՝ հետզհետէ ուղղելով իր կործանարար ընթացքը նաեւ մեզի դէմ: Վտանգը չկրցանք կանխարգիլել, երբ գիտէինք, որ մեր հարեւան թշնամին երկտասնամեակէ մը աւելի մինչեւ իր ատամները կը սպառագինուէր, իրեն համախոհ դաշ-



նակիցներ կը շահէր, մամոնային ուժով լրատուական միջազգային հարթակներ կը ներթափանցէր եւ մեր յառաջիկայ տալիք բիրաւոր գոհերուն եղերերգը կը հիւսէր: Արդեօ՞ք քիչ էին Հայաստանի նախկին եւ ներկայ իշխանութիւններու երեսին անոր նետած լկտի սպառնալիքները, որոնք յստակ յարացոյցներ էին անոր զարթիչ ու ծաւալապաշտ նկրտումներուն: Ան անհամբեր կը սպասէր նախապէս մշակած իր ռազմական գործողութիւնները կենսագործելու պատեհառիթ ազդանշանի մը, որ ժամանակը իրեն պիտի մատուցէր ոսկեայ սկուտեղի մը վրայ: Իսկ այդ մէկը շատ չուշացաւ՝ ազգերու եռուզեռը անդամալուծող պսակաձէւ ժահիրին համավարակով, Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահական ընտրութիւններուն ժխտով եւ Ուքրանիոյ դէմ Ռուսիոյ սանձազերծած պատերազմին աղետով: Գերհզօր երկիրներու ղեկավարներ տեղի կամ անտեղի պատասխանատու ելոյթներ կ'ունենային՝ ըսելով, թէ ազգերու միջեւ հողային տարածքներ ու սահմաններ պիտի փոխուին, որոնք սովորաբար կ'իրագործուին բիրտ ուժի կիրառումով: Աշխարհաքաղաքական արագընթաց զարգացումներ նմանապէս կ'ահագանգէին կենսագործուելիք մութ ծրագրերու մասին: Մեր հարեւան թշնամին երկարաժամկետ նախագիծներ մշակելով նախապատրաստուէր էր ասոր, մինչդեռ մենք չըրինք եւ չկրցանք ընել, չուզեցինք եւ ոչինչ եղաւ: Նայեցանք եւ տեսնել չուզեցինք, իսկ երբ տեսանք, թշնամին ոչ թէ ի դռունս էր, այլ խուժած էր մեր հայրենիքի պարիսպներէն ներս՝ սփռելու մահ ու աւեր եւ խլելու այն, որ ոչ թէ աւար, այլ դարերէ ի վեր իր սեփականը կը սեպէր: Այսօր Արեւմուտքը բարձրագոյ կը խօսի հակասեմականութեան (անթիսեմիթիզմ) մասին. արդեօք մեզմէ բացի «արմենֆոպիա»-ի մասին ուրիշ խօսողներ ալ կա՞ն:

Ունենալ պատմամշակութային հարուստ աւանդ մը, անտարակոյս, իւրաքանչիւր ժողովուրդի գերազանց ձեռքբերումներէն մին պէտք է նկատել, նաեւ իր ստեղծագործած բարձր քաղաքակրթութեան վկայագիրը, որով ան ատակ կը դառնայ իր պայծառ ինքնութեամբ հպարտօրէն ներկայանալու ազգերու ընտանիքին: Մակայն նոյն այդ անձնագիրը, այլապէս իր պատմամշակութային հարուստ ժառանգութիւնը թշնամիին աւարառու հարուածներէն պաշտպանելը նմանապէս այդ ազգի գերունակ արժանիքներէն եւ սեպուի պարտականութիւններէն պէտք է համարել: Ստեղծագործածոյ մարդկութեան ընդհանուր բարիքին ընծայելը առաքինութիւն է: Բայց թոյլ տալ, որ զայն վայրենաբարոյ ջոկիրը կողոպուտի եւ փճացումի առարկայ դարձնէ, ոչ միայն հաւաքական անտարբերութեան, անպատասխանատուութեան եւ անձեռնհասութեան ապացոյց է, այլեւ յանցագործութիւն մըն է սեփական ժողովուրդին հանդէպ: Միշտ ալ ըսուած է՝ պաշտպանուելու լաւագոյն միջոցը նախայարձակ ըլլալն է: Գոյութեանդ սպառնացող վտանգը տակաւին իր սաղմին մէջ խեղդելն է: Պատմահայր Խորենացիին տակաւին Ե. դարուն որքան դիպուկ եւ միանգամայն ճիշդ բնորոշած է նաեւ մեր ու գալիք ժամանակներուն համար ըսուած



կարգախօսը՝ «Սահմանք քաջաց՝ զենն իւրեանց, որքան հատանէ՝ այնքան ունի» (քաջերու սահմանը իրենց զենքն է, որքան կը կտրէ, այնքան կը տիրէ): Արդարեւ ուժը կ'որոշէ ամէն ինչ, նաեւ իրաւունքը: Եթէ երբեք ազգովին իւրացնէինք այս իրապաշտութիւնը եւ կարենայինք իրագործել զայն, մեր կեդրոնախոյս ձգտումները եւ աքիլէսեան խոցելի զարշապարը հանդիսացող անմիաբանութիւնը թօթափէինք մեր ազգային ծիններէն, թերեւս մեզի խնայուած պիտի ըլլար այս նորագոյն չարիքը՝ հողային տարածքներու, պատմամշակութային անգնահատելի ժառանգութեան եւ լոյս սերունդի մը անդառնալի կորուստը:

Սակայն ժամանակի տեւողութեան մէջ ի՞նչն է անփոփոխ, մնայուն եւ յաւիտեան: Ամէն ինչ կու գայ եւ կ'անցնի, լաւ ու ձախորդ օրերը միաժամանակ: Ազգեր կու գան, գերտերութիւններ կը բարձրանան ու կ'իյնան: Պատմութի՛ւնը վկայ: Խնդիրը ժամանակի քայքայումին եւ բնութեան տարրալուծող ուժերուն դէմ դիմանալն է՝ պահպանելով ազգին հայեցի ինքնութիւնը, չկտրուելով պատմական յիշողութենէն՝ արդիւնաւորել ներկան, եւ մշակել ապագային հանդէպ հեռահար ծրագրերու նպատակային արեւելում մը:

Այն, ինչ որ ըրիր, արդէն եղած է, այն, ինչ որ գնաց, արդէն գացած է: Կեանքի լաւագոյն դասերէն մէկը սորվիլն է, թէ ինչպէ՛ս չմատնուիլ անշարժութեան, այլ ընդհակառակը շարունակել յառաջ ընթանալ: Լաւ է յետադարձ հայեացք նետել անցեալի յիշողութիւններուն վրայ, բայց երբեք թոյլ չտալ, որ անոնք արգելք հանդիսանան մեր ազգային յառաջընթացին: Հետեւաբար, ծանր հարուածներէն պէտք չէ ընկճուիլ, ընդհակառակը՝ առաւել եւս զօրանալ: Սայթաքումներէն պէտք չէ վհատիլ, այլ սորվիլ: Գոյութեանդ սպառնացող վտանգին առջեւ պէտք չէ անճրկիլ, այլ զայն քաջաբար դիմագրաւել: Որքան ալ բիրտ ըլլան ժամանակին եւ պարագաներուն բերած վերիվայրումները, պէտք է հաւատալ հայ ցեղի վերապրելու ուժին եւ հայ ժողովուրդի դարեւ ի դար մղած գոյապայքարներու յաղթանակին՝ կեանքին հանդէպ անոր սրբազան պաշտամունքին:

Յաւարտ բանիս՝ պիտի չուզէի սխալ մեկնաբանուիլ: Իւրաքանչիւր սփիւռքահայ մարդու իրաւունքն է որոշել, թէ իր կեանքի պայմանները արդե՞օք կը թոյլատրեն հայրենադարձութեամբ մնայուն բնակութիւն հաստատելու Հայաստանի մէջ: Ներկայ իրավիճակը ցոյց կու տայ, սակայն, որ սփիւռքահայութեան ճնշող մեծամասնութիւնը դժուար թէ լուրջ քայլերու ձեռնարկէ հայրենադարձութեան ուղղութեամբ: Սա պահուն այնպէս կը թուի, որ հայրենի իշխանութիւններուն համար հոն եղածը պահելը արդէն իսկ քաղաքական եւ տնտեսական ահագին մարտահրաւէր մըն է: Թէպէտ պէտք է խոստովանիլ, որ «Հայաստան» հիմնադրամի գանձանակին մէջ քանի մը լուրջ նետելով կամ զօսաշրջիկի մը տրամադրութեամբ տարին մէկ-երկու անգամ Հայաստան այցելելով ո՛չ ճշմարիտ



հայրենասիրություն եւ ո՛չ ալ ազգասիրություն կ'ըլլայ: Ասով հանդերձ, ինքզինքիս երբեք իրաւունք չեմ կրնար վերապահել որեւէ մէկուն հրաւեր կարդալու, թէ պէտք է մնայուն կերպով Հայաստան երթայ կամ ոչ: Առկան յաւակնություն ալ չունի սփիւռքահայ մարդու ներաշխարհին ազնիւ, անկեղծ, ջերմ եւ հայաշունչ ապրումները, այլապէս ասոնց զուգահեռ մակերեսային հակասությունները փորձարկելու: Այստեղ «ինչու»-ներուն եւ «ինչպէս»-ներուն պատասխաններ գտնելը ամենեւին էական չէ, այլ պարզապէս որոշակի փաստեր նշելով՝ ցոյց տալ ընդհանրապէս մեր հայ կեանքին հետ ուղղակիօրէն առնչուող իրավիճակ մը, զոր դատել միանգամայն իմ իրաւասությունը չէ:

Պատմութեան մէջ շատ մը ժողովուրդներ, մեծ թէ փոքրաթիւ ազգեր ծանր պարտություններ կրած են, ընդհուպ մինչեւ իրենց շէն քաղաքները ենթարկուած են հիմնայատակ կործանումի: Բայց անոնք հաւաքական կամք դրսեւորելով եւ նորը արարելու վճռական աշխատանքով վերստին յառնած՝ կրցած են նոյնիսկ կառուցել աւելի գեղեցիկը եւ կերտել իրենց յառաջադէմ երկիրները: Փոքր ազգեր յաջողած են ամենայն հիացմունքի արժանի յաղթապանծ դիմադրություն ցոյցաբերել իրենցմէ գերիզօր տիրակալություններու եւ անոնց զօրաբանակներուն դէմ: Արդարեւ, հայոց պատմութեան մէջ պակաս չեն եղած հերոսական բազմաթիւ համանման օրինակներ եւ սխրագործութեանց եզակի իրադարձություններու ժամանակագրություններ:

Աներկբայ հաւատալ է պէտք, որ մեր հայրենիքը նորէն կը դառնայ հզօր եւ բարգաւաճ երկիր մը: Հաւատալ է պէտք, որ մեր հնարաւորությունները տակաւին սպառած չեն: Մեր առջեւ կը գտնուի ներկան, առաւել եւս՝ ապագան: Իւրաքանչիւր հայու ստանձնած անձնական եւ յատկապէս հայ ժողովուրդի հաւաքական յանձնառութենէն կախուած է հայրենիքին քաղաքական, տնտեսական, ռազմական եւ հասարակական կեանքին բարգաւաճումը: Մայր Հայաստանը վերստի՛ն ոտքի կը կանգնի եւ մայրական գործվագութիւն եւ խանթակաթ սիրով իր ծոցը կը հրաւիրէ սփիւռքի օտարաշունչ հողմերուն յանձնուած իր սիրասուն զաւակները:

Դոկտ. Արէլ քինյ. Մանուկեան

Ժրնէլ, 29 նոյեմբեր 2023

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԸՆԴԱՅՆՈՒՄԸ ԵՒ ԲԱԶՄԱԶԱՆԵՑՈՒՄԸ

Յարութիւն Իսկահատեան- Պէյրութ



Մօտիկ անցեալին անդրադարձանք Հայաստանի Հանրապետութեան խնդրա-յարոյց յարաբերութեան Ռուսական Դաշնութեան, Ազրայէճանի եւ մասամբ մըն ալ Թուրքիոյ հետ:

Ներկայիս Հայաստան կ'ապրի ոչ նախանձելի իրավիճակ մը, մտահոգ իր սահմաններու պաշտպանութեամբ եւ այլ քաղաքական, ռազմական ու առեւտրական հարցերով: Արցախի Բ. պատերազմի պարտութենէն եւ Արցախի Հանրապետութեան կորուստէն ու տեղոյն բնիկ հայ բնակչութեան բռնազաղթէն ետք անորոշութեան դժնդակ

մթնոլորտ մը կը տիրէ, երբ Ազրայէճան իր նաֆթի պաշարներու հաշւոյն զօրաւոր պետութիւններու կողմէ զինուելով, յաճախ Հայաստանի սահմաններուն վրայ միջազգային օրէնքները կը խախտէ ու կը սպառնայ ընդհանուր խաղաղութեան: Ռուսական Դաշնութիւնը բաւական ժամանակէ ի վեր հրաժարած է Հայաստանի եւ հայոց պաշտպանութիւն հայթայթելէ՝ ոտնակոխ ընելով Հայաստանի հետ իր իսկ ստորագրած պաշտպանութեան համաձայնագիրերը: Ոչ միայն այսքանը, այլ ան քաղաքականապէս ու զինուորապէս կ'օժանդակէ Ազրայէճանի եւ լաւ յարաբերութիւններու մէջ է Թուրքիոյ հետ, որուն դիմաց Հայաստան չի մասնակցիր ռուսական հովանաւորութեամբ գործող բազմատեսակ շրջանային կազմակերպութեանց բարձրամակարդակ հանդիպումներուն: Հայաստանի Հանրապետութիւնը իր ճիգերն ու ջանքերը այժմ կը կեդրոնացնէ այլ երկիրներու հետ դրական ու օգտակար յարաբերութիւններու տարողութիւնը մեծցնելու եւ բազմազանեցնելու:

Իրայատուկ պարագայ մըն է Հայաստանի եւ Իրանի միջեւ յարաբերութիւններու ջերմ ըլլալը՝ հակառակ կրօնքի տարբերութեան, որոնք շրջանին մէջ ռազմավարական մօտեցումներու նմանութիւն ունին, թէեւ Իրանի եւ Հայաստանի միջեւ միայն 44 քլմ. սահմանագիծ մը կ'երկարի: Ըստ Քուէյթեան «Ալ ժարիտա» թերթին Իրան անցեալ Հոկտեմբեր ամսուն Հայաստանի յանձնած է բարձր որակի զէնքեր եւ ռազմական սարքաւորումներ: Հայ-ռուսական յարաբերութեանց ներկայի խառն վիճակին մէջ իսկ, Ռուսական Դաշնութիւնը Հայաստանի եւ Իրանի բարեկամութենէն օգտուելով, Իրանէն դէպի Ռուսիա Հայաստանի վրայով կը փոխադրէ զէնքեր եւ այլ տեսակի ապրանքներ: Զէնքերու փոխադրութեան կողքին Հայաստանի եւ Իրանի միջեւ առեւտուրը նոր թափ առած է վերջերս, ըստ Հայաստանի Ապահովութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեանի, որ 14 Նոյեմբերին յայտարարեց թէ 2021-ին երկու երկիրներու միջեւ առեւտուրը արձանագրած է 350 միլիոն տոլարի գումար մը (Պարոն Արմէն Գրիգորեան կը բաւականանայ միայն 2021 տարուան տեղեկագրութիւնը տալով- Յ.Ի.):

Հայաստան Ռուսական Դաշնութեան հետ հետզհետէ կը պակսեցնէ առեւտուրը, որ կը փոխանակուի Իրանի հետ առեւտուրով, մանաւանդ կազմի եւ քարիւղի պարագային, որոնց փոխարէն Հայաստան Իրանի ելեկտրականութիւն կը հայթայթէ: Այս համաձայնութիւնը ստորագրուած է տեւելու մինչեւ 2026, սակայն երկու կողմերն ալ կը հաւաստիացնեն 2026-ին կրկին նորոգել համաձայնութիւնը եւ շարունակել գործակցիլ իրար հետ (համացանցային կայքէջ.-

https://www.google.com/search?q=armenia+iran+relations&oq=&gs_lcrp=):



Գալով Հայաստանի հիւսիսային դրացիին՝ Վրաստանի, կրկին Իրանի նման բարեկամական յարաբերութիւններ գոյութիւն ունին երկու երկիրներու միջեւ 1990-ականներէն եւ անկէ առաջ ալ, իբրեւ Խորհրդային Միութեան անդամ երկու երկիրներ: Անոնց բարեկամական յարաբերութիւնները սկսած են Միջին դարերէն: Թէեւ անոնք ներկայիս դաշնակիցներ ըլլալէ հեռու են, որովհետեւ Վրաստան Հայաստանի թշնամի երկու երկիրներու՝ Ազրպէյճանի ու Թուրքիոյ հետ սերտ բարեկամական յարաբերութիւններ ունի, սակայն եւ այնպէս փոխադարձ շահերու իրողութենէն մեկնելով՝ Վրաստան Թուրքիոյ կողմէ Հայաստանի շրջափակման պարագային բարեհաճօրէն արտօնութիւն տուած է եւ կու տայ ցարդ, իր հողերէն դէպի Հայաստան եւ հակառակը ճամբորդներու երթելակութիւնն ու ապրանքներու փոխադրութիւնը ապահովելու: Ներկայիս Վրաստան կ'արտօնէ նաեւ Ֆրանսայէն Հայաստանի զէնքի հայթայթման փոխադրութիւնը իր հողերուն վրայէն: Կարելոյ է յիշել հոս թէ բազմահազար հայեր օսմանեան եւ պարսկական յարձակումներէն ու կեղեքումներէն պաշտպանուելու համար գաղթած ու հաստատուած են Թիֆլիս եւ քաղաքին բնակչութեան 40 առ հարիւրը կազմած են: Առանց տատամսելու կարելի է ըսել թէ հայերն են որ կառուցած են Թիֆլիս քաղաքը: Վրաստանի մէջ քաղաքապետներուն մեծ մասը հայեր եղած են ինչպէս նաեւ առեւտրականները (համացանցային կայքէջ. - <https://www.google.com/search?q=armenia+georgia>):

Ներկայիս Հայաստանի եւ Հնդկաստանի քաղաքական յարաբերութիւնները շատ ջերմ եւ գործնական են: Երկու կողմերու քաղաքական այրերը իրար հանդէպ հասկացողութեամբ կը մօտենան զանազան հարցերու շուրջ եւ սերտ գործակցութեան մէջ են, լուծելու իրենց երկիրներու վրայ ազդող միջազգային չափանիշներ ունեցող խնդիրները: Իսկ ռազմական գետնի վրայ, ցարդ Հնդկաստան Հայաստանի յանձնած է Փինաքա բազմատակառ հրթիռաձակներ (Pinaka multi-barrel rocket), հակա-հրասայլային հրթիռներ, այլ տեսակի հրթիռներ եւ ռազմանիւթ: Զէնքերու եւ զինամթերքի տեսակներու փոխադրութիւնը կը կատարուի Իրանի հողերէն, որ Հայաստանի հետ պատմական կապեր ունեցած է: Այս գծով Ազրպէյճան իր բողոքը յայտնած է Հայաստանի, Իրանի եւ Հնդկաստանի: Հնդկաստան կը մտադրէ յաւելեալ զէնքեր վաճառել Հայաստանի, ըստ «Իքոնոմիք Թայմզ» հնդկական թերթին (համացանցային կայքէջ. - <https://economictimes.indiatimes.com/.../104707633.cms>): Կարելոյ է յիշել թէ Հնդկաստանի հայկական գաղութը 17-րդ դարուն բաւական բարգաւաճած էր: Հնդկաստանի հայերը հնդկական առեւտուրին մեծ թափ տուած են՝ յարաբերութիւններ մշակելով Արեւելեան Հնդկական Ընկերութեան հետ: Հայերը մեծապէս նպաստած են Հնդկաստանի զինաշինութեան ճարտարարուեստի եւ տպագրութեան ասպարէզներու կայացման մէջ (համացանցային կայքէջ. - <https://www.google.com/search?q=armenia+india+relations+weapons&oq=&gs>):

Հայաստանի յարաբերութիւնները Ֆրանսայի հետ շատ սերտ եղած են 1991-ի անկախութենէն ի վեր: Անկէ առաջ հայկական սփիւռքի միջոցաւ Ֆրանսայի հայերը Խորհրդային Հայաստանի հետ կայուն մշակութային կապեր հաստատած էին: Յարաբերութիւններու տարողութիւնը պաշտօնական մակարդակի հասաւ 1992-ի Փետրուար 24-էն սկսեալ, երբ քաղաքական ու առեւտրական համաձայնութիւն մը կնքուեցաւ երկու երկիրներուն միջեւ:

Հայոց Ցեղասպանութենէն փրկուած բազմահազար հայեր Ֆրանսա ապաստանած են 1915-էն ետք: Անոնց թիւը 1920-ական թուականներուն կը հասնէր 60 հազարի: Քսանթրոդ դարուն մէջ տասնեակ հազարաւոր հայեր Լիբանանէն, Սուրիայէն, Թուրքիայէն եւ Իրանէն, ինչպէս նաեւ Հայաստանէն մեկնած ու հաստատուած են Ֆրանսա: Ներկայիս Ֆրանսայի մէջ հայ բնակչութեան թիւը 650 հազարի կը հասնի:

Հայաստանի եւ Արցախի վերջին տխուր իրադարձութիւններէն ետք Ֆրանսա Հայաստանի յանձնած է Միսթրալ հակաօդային հրթիռներ եւ երեք ռատարային համակարգեր:



Համաձայնությո՞ւն գոյացած էր երկու երկիրներուն միջեւ որ Ֆրանսա Հայաստանի պիտի յանձնէ 50 մասնայատուկ տեսակի VAB MK3 ռազմական բեռնակառքեր, (համացանցային կայքէջ.- https://www.google.com/search?q=what+weapons+france+to+armenia&oq=&gs_lcrp) որ հետագային հերթականօրէն սկսաւ յանձնուիլ տասը առ տասը բեռնակառք: Հայաստանի եւ Մեծն Բրիտանիոյ յարաբերութիւնները մինչեւ վերջերս եղած են գաղջ, առաջինին նախ Խորհրդային Միութեան հետ կապուածութեան եւ ապա Ռուսական Դաշնութեան հետ դաշնակից ըլլալու պատճառով: Սակայն ներկայիս երկու պետութիւններու ներկայացուցիչները բանակցութիւններ կը վարեն ռազմավարական գործակցութիւն մը հաստատելու համար, երբ Հայաստանի իրադրութեան շուրջ եւ Կովկասի մէջ շատ հարցեր փոխուած են: Ռազմավարական համաձայնութեան մը գոյացման պարագային առաջնեկերը կը դառնայ պաշտպանութեան գործակցութիւնը երկու երկիրներուն միջեւ, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետութեան սահմանային պաշտպանութիւնը դրացի թշնամիներու դէմ: Արդարեւ Հայաստանի Արտաքին Գործոց նախարար Արարատ Միրզոյեան անցեալ Նոյեմբեր 13-ին Լոնտոն այցելեց եւ խօսակցութիւններ ունեցաւ բրիտանացի իր պաշտօնակցին հետ: Միացեալ յայտարարութիւն մը սփռուեցաւ որ կ'ըսէ. «Երկկողմանի պաշտպանութեան համագործակցութիւն մը կը սկսի ընդլայնիլ» աւելցնելով՝ «Մեծն Բրիտանիա շուտով պիտի սկսի նեցուկ կանգնիլ Հայաստանի սահմաններու ապահովութեան եւ բռնագաղթերու արգիլումին» (համացանցային կայքէջ <https://www.rferl.org/.../armenia-britain.../32685347.html>):

Անցեալ դարու իննիսունական թուականներէն արդէն Հայաստանի Հանրապետութիւնը Եւրոպական Միութեան կարգ մը հաստատութիւններու եւ կազմակերպութիւններու անդամ դարձած էր, սակայն ընթացքը կը կաղար Ռուսական Դաշնութեան հետ դաշինքային կապակցութեան պատճառով: Այժմ նոր թափ կը տրուի այդ համագործակցութեան, որուն երեւելի ապացոյցներէն մէկը Եւրոպական Միութեան դէտերու գոյութիւնն է Հայաստանի մէջ, որոնց թիւը յաւելում պիտի կրէ, նաեւ քաղաքական ու առեւտրական երկկողմանի կապերու յաւելման համար կատարուած գործունէութիւնը: ԱՄՆ-ի հետ Հայաստանի յարաբերութիւնները հակառակ պատմական ըլլալուն, մանաւանդ այդ երկիրին մէջ հայոց մեծաթիւ գոյութեան, ընդհանրապէս չափաւոր եղած են, Հայաստանի Ռուսական Դաշնութեան անմիջական կախուածութեան վիճակի մէջ ըլլալու պատճառով, սակայն Արցախի իրավիճակի փոփոխութենէն ետք վերջին շրջանին երկկողմ յարաբերութեանց ջերմացման նախանշաններ կը նկատուին, երբ ԱՄՆ-ը միջամտութիւններ կը կատարէ ի նպաստ Հայաստանի՝ Ազրպէյճանի ոտնձգութիւններուն դէմ, որմէ դժգոհ մնալով վերջինս մերժեց մասնակցիլ ԱՄՆ-ի մէջ կայանալիք Հայաստանի եւ Ազրպէյճանի արտաքին գործոց նախարարներու հանդիպման: Այս պարագային ալ հայոց մեծաթիւ գոյութիւնը ԱՄՆ-ի մէջ օժանդակ ազդակ է այդ երկրին մանաւանդ Հայաստանի եւ ընդհանրապէս Կովկասի նկատմամբ քաղաքականութեան կողմնորոշման: Նոյն ծիրին առընթեր Հայաստան սկսած էր բացուիլ Հիւսիս Ատլանտեան Ուխտի Կազմակերպութեան՝ ՆԱԹՕ-ի հետ համագործակցութեան ու հետագային անոր հաւանական անդամակցութեան: Յստակ է որ այս կազմակերպութեան անդամակցութիւնը անգիր պարտադրանք մը կը դնէ անդամներուն վրայ՝ հակադրուիլ եւ նոյնիսկ թշնամանալ Արեւելքի (մանաւանդ Ռուսական Դաշնութեան եւ Չինաստանի) հետ: Այս ծիրին մէջ միջանկեալ յիշենք թէ Թրքական Հանրապետութեան նախագահ Ռաճապ Թայյիպ Էրտողանի բարեկամութիւնն ու առեւտրական գործակցութիւնը Ռուսական Դաշնութեան հետ բացառութիւն կը կազմէ, որովհետեւ հրահանգը ՆԱԹՕ-էն վեր՝ անկլօ-սիոնիզմի դեկավարութենէն կու գայ, որ ըստ կազմակերպութեան սեփական շահերուն այդ թոյլտուութիւնը կը պարգեւէ Ռաճապ Թայյիպ Էրտողանին, նկատի առնելով Թրքական

Հանրապետութեան պետքերը նաեւ: Նոյն այս բացառութեան մէջ կ'իյնայ նաեւ պաղեստինեան Համաս կազմակերպութեան նկատմամբ Էրտողանի նեցուկն ու անոր մասին բերանացի շռայլ գովասանքները՝ Համասը իբրեւ ազատագրական շարժում որակումը, պահպանելու համար Թուրքիոյ շահերը արաբական եւ իսլամական աշխարհի հետ, մինչ Ռաճապ Թայյիպ Էրտողան է ու կը մնայ Իսրայէլի կայուն դաշնակիցն ու հաւատարիմ գործակատարը: Այլապէս Էրտողան այսպէս ինքնագլուխ չի կրնար գործել: Անկասկած, այս երեւոյթը ՆԱԹՕ-ի շրջափակին մէջ ծայրահեղ ցինիկութիւն է, սակայն ո՞վ կը համարձակի անոնցմէ հաշիւ պահանջել...

Հայաստան անցեալ դարու իննիսունական թուականներուն դառն փորձառութիւն մը ճաշակեց Հունգարիոյ մէջ Ատլանտեան Ուխտի մարզումներու մասնակցութեան ընթացքին՝ երբ հայ զինուոր մը իր գործընկեր ազերի ոճրագործ զինուորի մը կողմէ խողխողուեցաւ ամբողջ աշխարհի անտարբեր ու ցուրտ աչքերուն առջեւ: Մէկ կողմէ «ազատութիւն», «ժողովրդավարութիւն» եւ «մարդու իրաւունքներ» աղաղակող Արեւմուտքի եւ միւս կողմէ նախամարդանման ազերի զինուորին ոճիրը տեղի կ'ունենար եւ նոյն այս Արեւմուտքը լուռ անցաւ հայու թափուած անմեղ արիւնին առջեւ: Ոչ միայն այսքանը, այլ Հունգարիոյ իշխանութիւնները յանդգնեցան այդ ցկեանս բանտարկութեան դատապարտուած մարդակերպ ոճրագործը ազատ արձակել փոխան ազերիական նաֆթային գործարքի անուան տակ կատարուած մեծագումար կաշառքի, որ իր երկրին մէջ իրեն նմաններու եւ պետութեան կողմէ «հերոս» հռչակուեցաւ:

Գիտակցելով հանդերձ Արեւմուտքի վերոյիշեալ յատկութիւնները, կը տեսնենք ահաւասիկ Հայաստանի Հանրապետութիւնը լքուած իր դաշնակիցներէն, դրական մօտեցման ակնկալիքով դիւանագիտական նոր ջանքեր կը թափէ՝ բարեկամանալու կամ դաշնակից դառնալու անոնց հետ, որոնցմէ կը յուսայ Հայաստանի գոյութեան ու պաշտպանութեան համար նեցուկ եւ օգնութիւն գտնել: Ժամանակը ցոյց կու տայ այս ընթացքին արդիւնքը, որուն մասին ներկայիս կտրուկ դատողութիւններ ընելը կանուխ է:

Ադրբեյ՝ ՊԱՅՔԱՐ 351

ՇՐՋԱԴԱՐՁ ԴԷՊԻ ԵՐԿՐԻ ՆԵՐՍԸ

ԱԻՑ ՊՕՂՈՍԵԱՆ



Բոլոր պատերազմներու աւարտէն ետք, պարտուած կողմերու ժողովուրդներուն մօտ շատ բնական է վրէժի զգացումը եւ ամէն գնով վերապատրաստուելու ու զինուելու մարմաջը, առաջին հերթին՝ կորսնցուցած արժանապատուութիւնը վերագտնելու, ապա կորսնցուցած

տարածքները վերագրաւելու համար: Շատ յաճախ այդ զգացումին հետ զուգահեռ կ'ընթանան երկրին իշխանութիւններուն դէմ բողոքի ցոյցեր, յեղափոխութիւն, ապակայունութիւն եւ նոյնիսկ պետական հաստատութիւններու դէմ վայրագութիւններու դրսեւորում:

Պատմութեան մէջ շատ կը հանդիպինք այդպիսի երկիրներու, որոնցմէ են Իտալիա, որուն ֆաշիստ կառավարութիւնը Համաշխարհային Բ. պատերազմէն ետք տապալեցաւ եւ Պենիթօ Մուսոլինի կախաղանի արժանացաւ: Ֆոլքլենտի պատերազմին, Արժանթինի



պարտութեան պատճառով, երկրին մէջ տիրեց խոր դժգոհութիւն, որ վերջապէս յանգեցաւ իշխող խոնթայի տապալման. կարելի է շարքը երկարել: Այդ ճանապարհը, սակայն, միշտ չէ որ յաջողութեամբ կը պսակուի, որովհետեւ նոյնպէս յաղթող կողմը իր յաղթանակէն եւ ձեռք բերած յաջողութիւններէն ու զանոնք նուիրականացնելու եւ պահպանելու վճռականութենէն մղուած՝ բնականաբար աշխջօրէն պիտի հետեւի հակառակորդին ամէն մէկ շարժումին եւ ըստ այնմ շարունակէ զինուիլ: Դարձեալ պատմութեան դիմելով՝ կը տեսնենք, որ երկիրներու միջեւ յաճախ պատերազմներ մղուած են նոյն հողամասին համար, որ քանի մը անգամ ձեռքէ ձեռք խլուած է, պատճառելով բազմաթիւ զոհեր, բնակչութեան արտագաղթ եւ քանդում:

Կայ նաեւ ռազմավարական այլ ճանապարհ մը, զոր իրականացնելը աւելի դժուար է եւ աւելի երկար ժամանակի կը կարօտի, նկատի ունենալով ժողովուրդը համոզելու եւ ընկճուածութենէ ոտքի հանելու բարդութիւնը: Տուեալ պարտութենէն ետք, երբ վառօդի բարձրացուցած ծուխի ամպերը չքացած են արդէն, հակառակ բնական թուացող ներքին՝ բնագոյային վրէժի կանչերուն անսալու, զգաստանալ եւ դժուար որոշումը տալ՝ շրջուելու դէպի երկրի ուղղաձիգ զարգացման քաղաքականութեան նախաձեռնութեան: Այդ քաղաքականութեան որդեգրման յաջողութեան պարագային, երկիրը տարածաշրջանի այլ պետութիւններու հետ համեմատած՝ տնտեսական բարձր մակարդակ կը նուաճէ, որ իրեն հետ յառաջ կը բերէ նաեւ հզօրացում բոլոր ոլորտներուն մէջ: Այդպիսի ռազմավարութեան դիմած երկիրներէն են՝

1. Գերմանիա, որ Համաշխարհային Բ. պատերազմէն ետք, երբ երկիրը հիմնայատակ կործանուած էր, շեշտը դրաւ երկիրի զարգացման գործին եւ քանի մը տարի ետք աշխարհը ականատես եղաւ Գերմանիոյ տնտեսական հրաշքին (wirtschaftswunder), որուն միջոցաւ դարձաւ աշխարհի ամէնէն յառաջադէմ երկրորդ երկիրը:
2. Ճափոն, որ նոյնպէս Համաշխարհային Բ. պատերազմին իր կրած աղէտէն ետք լծուեցաւ երկիրը կառուցելու գործին եւ Գերմանիոյ հետ դարձաւ տնտեսական գերպետութիւն մը:
3. Հարաւային Քորէա, որ քորէական պատերազմէն ետք դարձաւ զարգացած, արդիւնաբերական եւ արտածող երկիր մը:
4. Վիետնամ, որ երկու տասնամեակ տեւած պատերազմներու արհաւիրքէն ետք, այսօր նկատառելի զարգացող եւ յառաջադէմ երկիր մըն է:



5. Ֆինլանտա, որ Համաշխարհային Բ. պատերազմէն ետք թոյլ եւ աղքատ երկիր էր, կեդրոնացաւ տնտեսական եւ արհեստագիտական ոլորտներուն վրայ: Այսօր, նորարարութիւններով յայտնի երկիր մըն է անիկա:

6. Լեհաստան, որ Պաղ պատերազմի աւարտէն ետք զարթօնք մը ապրեցաւ եւ կեդրոնաձիգ համայնավար կառավարման համակարգէն անցաւ շուկայականին եւ այսօր շատ մօտիկ է Եւրոպական ընտանիքի երկիրներու մակարդակին:

Հայաստան Արցախի պատերազմին իր կրած պարտութենէն ետք, բարեբախտաբար, ներքին քաղաքական ապակայունացում չապրեցաւ: Ժողովուրդին մօտ թէւեւ ակնյայտ էր սաստիկ ընկճուածութիւնը եւ արժանապատուութեան նուաստացումի զգացումը, սակայն ան իմաստութիւնը ունեցաւ իրողութիւնը սառնասրտութեամբ ընկալելով՝ մնալու պետականութեան զօրավիգ: Բոլորին, նոյնիսկ ընդդիմադիր փոքրամասնութեան համար, տեսանելի էր այն փաստը, որ մեր պարտութիւնը տրամաբանականօրէն անխուսափելի էր: Մենք գործ ունէինք թշնամիի մը հետ, որ ի տարբերութիւն մեզի, տասնամեակներով լծուած էր ռազմական ճանապարհով իր վրէժը լուծելու, որուն դէմ մենք անտարբեր գտնուած էինք, կամ մեր իրարայաջորդ իշխանութիւնները պարտադրուած էին անտարբեր մնալու: Աւելին՝ Ատրպէյճան զինուած էր ոչ միայն ռուսական սպառնալիքներէ, այլ՝ թրքական եւ իսրայէլեան ամենէն արդիականներով: Մեզի դէմ էին Ատրպէյճանի ժողովրդագրական առաւելութիւնը, թրքական յատուկ ջոկատայինները, իսլամական արմատական զինեալներու ջոկատները եւ ռուսական լուռ մեղսակցութիւնը: Մեզի դէմ էր նաեւ ոչ միայն համայն աշխարհի անտարբերութիւնը, այլ՝ Ատրպէյճանի հողային անբողջականութեան անոնց ճանաչումը: Արցախի Հանրապետութիւնը ոչ մէկ երկիր կը ճանչնար ոչ ալ պատրաստ էր ճանչնալու:

Մենք պէտք էր որ պէտք է գիտակցէինք, թէ Արցախի 12,000 քառակուսի քիլոմէթր տարածքին վրայ միայն 150,000 ժողովուրդով (1 քառ. քիլոմէթրի վրայ 12 հոգի), երկրամաս չի պահուիր, թէ հողին վրայ ապրելով միայն կարելի է գայն պահել: Պէտք է գիտակցինք, որ ինչպէս արեւմտեան Հայաստանի հողերը, զորս կորսնցուցած ենք եւ իրատեսական չէ անոնց՝ Հայաստանի միացումը, երբ չենք կրցած բարգաւաճ դարձնել մեր անգամ այս փոքր ածուն, ուրկէ մինչեւ այսօր արտագաղթը կը շարունակուի, նոյնպէս Արցախը վերադարձնելը գրեթէ անկարելի գործ է: Պէտք է գիտակցինք այժմ որ Հայաստանն ալ կրնանք կորսնցնել, եթէ շարունակենք նոյն ընթացքը:

Այո՛, պէտք է հետեւինք վերելք նշուած, պարտուած, իսկ ներկայիս զարգացած երկիրներու օրինակին: Դառնանք դէպի երկրի ներսը: Մեր տարածքը ամէն գնով պաշտպանելու



մարտավարութեան, որուն համար պարտադիր է ազգովին լծուիլ զայն ամրակուռ բերդի վերածելու, պաշտպանական հօրազոյն զենքերով: Ձեռնարկել երկրի տնտեսութիւնը ուղղահայեաց՝ թռիչքաձեւ զարգացնելու միջոցներու փնտտութիւն: Այս է մեր երբեմնի մեծ երկրէն մեզի մնացածը եւ պէտք է պահենք զայն: Նահանջելու տեղ չունինք այլեւս:

Բարեբախտաբար, իշխանութիւնները, հակառակ բազմաթիւ խարխափումներու եւ թերութիւններուն, այդ քաղաքականութիւնը որդեգրած են: Ականատես ենք բոլոր ոլորտներուն մէջ երբեմն հսկայական աշխատանքներու, դիւանագիտական ոլորտին մէջ բաւական աշխուժութեան, ներկայ եւ անցեալի սխալներէն սորվելու ճիգին:

Փտածութեան եւ կաշառակերութեան ազգակործան ախտին դէմ թէւ ոչ բաւարար, սակայն, դրական պայքարին: Երկիրը կարծես մտած է վերակառուցման փուլին մէջ, ուր ամէն կողմ տեսանելի են ճանապարհներու նորոգում եւ կառուցում: Կայ կրթական մակարդակը բարելաւելու, բարձրացնելու միջոցներու փնտտութիւն, կա՛յ երկրի զարգացման կամքը: Անհրաժեշտ է շինիչ քննադատութեան շարունակութիւնը, միա՛յն շինիչ, սակայն պէտք է նաեւ ընդունիլ տեսնել եւ գնահատել այն ամէն ինչը, որ դրական է: Այդպէս կարելի է պետութիւնը ամրապնդել:

Երկրի աւելի արագ զարգացման համար կը մնայ խոչընդոտ մը: Արտագաղթի եւ կրթական անփառունակ մակարդակի պատճառած, արտասահմանեան չափանիշներով մասնագէտներու պակասը: Իշխանութիւնները անպայման պէտք է գտնեն ճարը զանոնք արտերկրէն հայրենիք հրաւիրելու համար, թերեւս արժանիները արտերկրի աշխատավարձերու չափանիշներով վարձատրելով...:

ԱՍՊԱՐԷՁ

21/11/2023

ԱՊՐԵԼՈՒՆ ՀԱԶԱՐ ՁԵՌՔՈՎ ԿԱՌՉԱԾ ՀԱՅՐ

Լիւսի Տօքփէճեան, Երեւան, 30 Նոյեմբեր 2023



Հայոց պատմութեան ընթացքին բազմաթիւ են Հայաստան աշխարհին եւ հայ ժողովուրդին պատուհասած բնածին թէ արհեստածին աղէտները, սակայն հայ ազգը միշտ ալ վերընձիւղած է, մոխիրներուն ու փլատակներուն տակէն դուրս եկած է, յառնած է մեռելներէն եւ վերանորոգ կամքով շարունակած



Է իր գոյութիւնը: Այս միտքը կը շեշտէ կիւմրեցի դերասան Արթուր Յակոբեան, 1989-ին՝ Սպիտակի երկրաշարժի յիշատակին գրուած «Սգախարոյկ» բանաստեղծութեան մէջ: Նկարագրելով «մարդկային նոր վիշտ, մարդկային վայոց, ու էլի՝ հայոց» փորձանքը, աւարտին կ'ըսէ. «Չի մեռնի երկիրս քարոտ, քաղաքները իմ... վաղը կը յառնեն, չեն մնայ գետնին», եւ կը հաստատէ «Հայը՝ Հայաստան երկիրը սիրող, հայը՝ շինարար, հայը՝ տուն շինող»:

1988-ի Դեկտեմբերն էր: Ըստ մեր տան սովորութեան, Դեկտեմբեր 1-ին տունը արդէն պճնուած էր Կադանդի զարդարանքներով ու տօնածառով: Փոքր երեխայ էի, այդ օրերէն շատ բան չեմ մտաբերեր, բայց յիշողութեանս մէջ դրոշմուած է 1988-ի Դեկտեմբերը: Լուսահոգի հայրս զիս ու ինձմէ փոքր քոյրս կանչեց իր մօտ եւ ըսաւ. «Կադանդ պապան այս տարի նուէրներ պիտի չբերէ ձեզի, որովհետեւ Հայաստանի մէջ զօրաւոր երկրաշարժ եղած է եւ մեր հայրենակիցները սգաւոր են ու անհաւոր տխրութեան մէջ»:

Համոզուեցանք՝ նուէր պիտի չստանայինք: Փաստօրէն, նուէրներու փոխարէն, գումարները պիտի դրկուէին աղէտահար ժողովուրդին: Հայրս կը պատմէր, որ այդ խօսակցութենէն ետք նամակ գրած եմ Կադանդ պապային՝ պատմելով եղելութիւնը եւ ըսելով, որ ես այդ տարի նուէր չեմ ուզեր (չնայած տակաւին երեխայ էի), բայց միաժամանակ խնդրելով, որ քրոջս նուէր անպայման բերէ, որովհետեւ «ան շատ փոքր է, երեխայ է եւ չի հասկնար»:

Պատմութեան համար հոս կ'ուզեմ աւելցնել, որ մօրս անդամակցած վարչութեան Կադանդի ամենամեայ միջոցառումը այդ տարի նուիրուած էր աղէտեալ երեխաներուն: Հոն կային փոքր «հիւրեր»՝ որբացած, անդամալուծուած, գուցէ եւ անդամահատուած երեխաներ: Չեմ մոռնար, թէ ինչպէս ամբողջ միջոցառման ընթացքին ծանր մթնոլորտ կը տիրէր սրահին մէջ, կարծես օդ չկար, եւ ես չկրցայ նայիլ այդ երեխաներուն ուղղութեամբ:

Ամէն Դեկտեմբերին կը յիշեմ այս պատմութիւնը, սակայն միայն վերջին քանի մը տարիներուն սկսած եմ վերլուծել այս յուշերս: Ըրած եմ երեք հետեւութիւն:

Առաջին հետեւութիւնը Հայաստան երկիրը սիրող, շինարար, կեանքին հազար թելով կառչած հայն է: 1988-ի երկրաշարժին հետեւանքով մեծ գերեզման դարձած քաղաքները եւ անգամ մը եւս նահատակուած հայ ազգը թէեւ ոչ անմիջապէս, բայց վերջապէս եւ քայլ առ քայլ ոտքի կանգնեցան: Սպիտակը, Կիւմրին, Վանաձորը եւ անոնց շրջակայ գիւղերը ժամանակի ընթացքին ապաքինուեցան շնորհիւ կեանքը, իր հայրենի տունը սիրող հայուն: Հիւմրի եւ ծիծաղի քաղաք Կիւմրին այսօր վերագտած է իր հմայքը, ունի մագնիսական յատուկ գրաւչութիւն, արժանի՝ կոչուելու սիրոյ եւ ջերմութեան քաղաք:

Համացանցին մէջ կարելի է գտնել նկարը Սպիտակի փլատակներուն կողքին Կադանդի տօնածառին, որուն շուրջ հաւաքուած են փոքրիկները: Այդ տօնածառը հայուն՝ կեանքին կառչած մնալուն, նոր տարուան, նոր լոյսին ու լոյսին հաւատալուն խորհրդանշան է ի հարկէ: Հայը ըստ ամենայնի երագած, ձգտած ու աշխատած է իր երկիրը կառուցել, վերապրիլ դառնալից բոլոր ժամանակներէն ետք: Ամենայն հայոց բանաստեղծուի Սիլվա Կապուտիկեան սոյն միտքը ընդգծած է իր «Մտորումներ ճանապարհի կէսին»



բանաստեղծութեան մէջ՝ ըսելով. «Դու թողել ես ինձ՝ այրո՛ղ, բորբոքո՛ղ Հայոց պատմութիւն՝ աղէտներով լի, Բայց դրա դիմաց ինձ տուել ես դու Քո վերապրումի բերկրանքն անսպառ»:

Երկրորդ հետեւութիւնը Սփիւռքի մշտական պատրաստակամութիւնն է համախմբուելու Հայրենիքին շուրջ եւ նեցուկ կանգնելու անոր: Բնական է, որ դժգոհութիւններ կրնան ըլլալ որոշ հարցերու կառավարչական մօտեցման նկատմամբ, բայց անոնք պատճառաբանութիւն ՊԷՏՔ ՉԷ ըլլան Հայաստանի նկատմամբ մեր պատասխանատու մօտեցումը խախտելու, անտարբեր ու անպատասխանատու կեցուածք որդեգրելու: Հայաստանի անկախութենէն առաջ եւ մանաւանդ յետոյ, հաւաքաբար թէ անհատապէս, սփիւռքահայերը զանազան առիթներով եւ տարբեր լծակներով իրենց լուսման բերած են Հայաստանի ու հայրենաբնակ մեր ժողովուրդի կարիքներուն ի խնդիր: Այսպէս ստրված են վարուիլ սփիւռքահայերը, Սփիւռքի մէջ այսպէս ստրվեցուցած են մեզի մեր ծնողները, եւ ա՛յս է ճիշդը: Հայաստանը «մեր դէմ ծագող միակ ժպտուն ապագան է, մեր ժողովուրդի կրկին յարութիւնն է, միա՛կ հեքիաթն է իրական եւ կենսաժպիտ միա՛կ երազն է անթառամ», ինչպէս կ'ըսէ Մուշեղ Իշխան: Մենք միշտ հպարտացած ենք այդ ժպտուն ապագայով, օրինած ենք անոր յարութիւնը եւ փափայած՝ այդ կենսաժպիտ երազը: Այդպէս եղած է Հայաստանէն մղոններ հեռու, բայց անոր ուրախութեամբ հրճուող, անոր տխրութեան ու հոգերուն մասնակից դարձող, անով ապրող ու անոր թիկունքին կանգնող սփիւռքահայը:

Երրորդ հետեւութիւնը երեխաները ուրախացնելու հրամայականն է: 1988-ին, անգիտակցաբար կամ թերեւս ենթագիտակցաբար, Կադանդ պապայէն խնդրեր եմ փոքր քրոջս նուէրներ բերել, որ ուրախանայ, քանի որ ան պզտիկ է դեռ ու չի հասկնար: Այսօր եւ գիտակցաբար կը հաւատամ, որ ամէն մարդ արժանի է ուրախ ըլլալու, առաւել եւս՝ երեխաները: Ուստի, հակառակ մեր մոլորակը, մեր տարածաշրջանը, մեր երկիրը հարուածած ձախորդութիւններուն ու անբաղձալի իրադարձութիւններուն, առաջին հերթին մտածենք գոնէ երեխաներուն մասին, անոնց մարմնական առողջութեան կողքին, նաեւ հոգեկան ու մտային առողջութեան մասին: Երեխաները ապագայ սերունդն են, իսկ առողջ հասարակութիւն ունենալու գրաւականը սերունդներու լաւ դաստիարակութիւնն է: Եւ երբ կը մտածենք անոնց մտային, մարմնական եւ հոգեկան աճին, ուսումնառութեան, նկարագրի կերտման մասին, չմոռնանք նաեւ ուրախութեան գործօնը: Իրլանտացի բանաստեղծ եւ թատերագիր Օսքար Ուայլտ կ'ըսէ. «Երեխաները լաւ դարձնելու լաւագոյն միջոցը զանոնք երջանկացնելն է»: Իսկ ըստ անգլիացի գրող Ակաթա Քրիսթիի՝ «Ամենաբախտաւոր բաներէն մէկը, որ կրնայ պատահիլ կեանքին մէջ, իմ կարծիքովս, երջանիկ մանկութիւն ունենալն է»:

Սպիտակի մահաբեր երկրաշարժի 35-ամեակին առիթով, մաղթանքս է, որ Հայաստանը այսուհետ ունենայ միայն դրական «երկրաշարժ»ներ, որպէսզի առանց ուժգին ցնցումներու եւ յետցնցումներու փլուզուին նախապաշարուած թիւր մտայնութիւնները, փլատակներուն տակէն դուրս բերուի հարցերը հայաստանամետօրէն ընկալելու մօտեցումը: Այդպիսով կը կերտենք առողջ, անվտանգ եւ երջանիկ երկիր ու հասարակութիւն:

Աղբիւր՝ ԳԵՂԱՐԴ

ՏԵՍԱԿԷՏ

ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՅՑՆԵՐՈՒ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՈՒՄ ԵՒ

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ ՋԱՀԱԿՐԵԼՈՒ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Պարոյր Յ. Աղապաշեան



Սփիւռքահայութիւնը բազմաթիւ մարտահրաւերներ դիմագրաւելու պարտաւորութեան տակ կը գտնուի, նաեւ դէմ յանդիման է, բազմաթիւ որոգայթներ յաղթահարելու ստիպողականութեան:

Եթէ անոնցմէ մաս մը, արտաքին ազդակներու հետեւանք է, մաս մըն ալ, ներքին անհարթութիւններու, ինչ որ աւելի կը խճճէ, կը կնճռոտէ ու կը մթագնէ տիրող իրավիճակը, դէպի

աւելի մոայլ ու մթամպած ժամանակաշրջաններ:

Ճիշդ է, մէկէ աւելի բեւեռներու վրայ կան գնահատելի ճիգեր ու նախաձեռնութիւններ, գէթ մասամբ մը բառնալու կամ մեղմացնելու վտանգները: Բայց, ատոնք բաւարար են. գաղութ պահելու ու համայնք պաշտպանելու, այնքան ատեն որ՝ կարիքները շատ են ու բազմագոյն, իսկ զանոնք խնամելը եւ անոնց վրայ գործուրալը, յաճախ բաւարար չեն, ոչ անպայման անտարբերութեան կամ թուլամորթութեան պատճառներով, այլ նաեւ՝ ակամաօրէն ու հարկադրական պայմաններու բերմամբ:

Տակաւին պէտք է յիշել ու թուագրել այն մարգերը, որոնցմէ շատեր կը տառապին թերացումներու եւ անճրկութիւններու կաղացումներով, ուրիշներ խրուած են իրենց կրճատումներու եւ անբաւարարութիւններու շրջագիծերուն մէջ, ուր յոգնածութեան եւ ուժասպառութեան երեւոյթները որոշ չափով նշմարելի են, հայ իրականութեան մէջ առաջացնելով ճեղքեր ու վերքեր:

Եթէ ոմանք կը կարծեն կամ կը հաւատան, որ ատոնք ինչ որ տեղ «բնական» են, առանց սթափելու անոնց պատճառած ու պատճառելի սայթաքումներէն, ատիկա խիստ մտահոգիչ ու քանդիչ պարագայ է, գուժելով վատթարագոյնը՝ վաղուան հաշուոյն:

Արդարեւ, արագ ակնարկ մը, մեզ սնուցանող երակներուն վրայ, որոնք ատենին կենդանի ու կենսունակ էին, շունչ ու լիցք տալով մեր էութեան ու գոյութեան, այսօր, ատոնք նոյն սլացքն ու հրայրքը չունին, առանց մարելու կամ անջատուելու, բայց, գերազանցօրէն, երբեմն խարխալելով, երբեմն ալ՝ կմկմալով, որովհետեւ, մէկէ աւելի հորիզոնականներու վրայ կան բացթողումներ կամ վայրէջքներ, անկումներ ու վերիվայրումներ:

Մեր բազմաշերտ ու բազմատեսակ ազգային կառոյցները, իրենց մշակութային, կրթական, կուսակցական, միութենական, եկեղեցական, թերթահրատարակչական եւ յարակից այլ գոյաերդիքներով, որոնք մեր հոգեկան ու ֆիզիքական, ազգային ու մշակութային հարստութիւններն ու հպարտութիւններն են, արդեօք կը գոհացնեն մեր լինելիութեան գրաւականներու յառաջընթացը, երբ, հոս ու հոն, յաճախ կ'անդրադառնանք անոնց մակընթացութեան, յաճախ ալ՝ տատամսութեանց:

Ասոնք կրնան մեզ հանգստացնել կամ երաշխաւորել, թէ «ամէն ինչ նորմալ է», մտահոգութիւնները չափազանցութիւն են եւ կարիք չկայ այդքան... նրբանկատ ըլլալու:

Անշուշտ, երբ այս գրառումներն ու մտորումները կը կատարուին, երբեք նպատակ չկայ «սեւացրեքեան»ի ոճով վերաբերուելու մեր ազգային կենսափորձն ու կենսագործը



անշքացնելու կամ թերագնահատելու հաւանականութեան, այլ՝ այդ բոլորը դնելու «արդար նժար»ի վրայ ու զայն կշռադատելու համապատասխան արժեչափերով ու հիմունքներով:

Շա՛տ պարզ է:

Մփիւռքը կ'անցնի տարբեր փուլերէ, ընդ որուն՝ միշտ չէ որ անոնք ըլլան գոհացուցիչ եւ արդարացուցիչ, բայց, միթէ ատոնք չէ՞ն յուշեր, որ կա՛յ ՊԱՀ մը, ՀԱՆԳՐՈՒԱՆ մը, երբ պետք է անդրադարձ կատարուի անոր ուղիին վրայ, զայն խորաչափելով իր լայնքով եւ երկայնքով, իր ներկայի եւ ապագայի լծակներով, որպէսզի, կարելի զգուշութեամբ եւ ուշադրութեամբ, ան դրուի իր ճշգրիտ երկաթագիծին վրայ:

Ներկայիս, աշխարհաքաղաքական պայմանները բոլորովին նոր ու տարբեր հոլովոյթներու մէջ կը գալարուին, քաղաքատնտեսական ոլորտները բոլորովին նոր ու տարբեր հանդերձանքներով հանդէս կու գան, ընկերամշակութային կեանքը նոր ու տարբեր գունաւորումներով կը ներկայանայ, իսկ այս բոլորին մէջ «լողալ»ը կամ «սուզուիլ»ը կրնա՞յ ըլլալ որ կերպարանաւորուի հպանցիկ ու խախտուիկ եզրերով, երբ ատոնք միայն աւեր եւ աղէտ կը պարտադրեն ամենուրեք:

Գէթ լիբանանցիները անցան այս դժիւեմ հանգրուաններէն, որոնցմէ շատ տուժեց նաեւ լիբանանահայութիւնը, բայց, ան տոկաց ու դիմադրեց, հոգ չէ թէ՛ ինչպէս այլոց պարագային, իր զաւակներէն զանգուածային ԳԱՂԹ «այս բառը երբեք չեմ հանդուրժած» տեղի ունեցաւ այլուր, թէ՛ ի՞նչ փրկելու եւ որո՞ւն գոհացնելու համար, այդ ալ ուրիշ մղձաւանջ մըն է, բայց, փա՛ստ ըլլալէ երբեք չի դադրիր, որովհետեւ «ՄԵՐԿ» իրականութիւն մըն է:

Այս թղթածրարը, անշուշտ, հաստկեկ փաթեթ մըն է, իր արդարանալի թէ ոչ, իր ընդունելի թէ ոչ, վարկածներով, բայց, կը մնայ հրապարակին վրայ քննարկելի նիւթի մը սահմաններուն մէջ, որովհետեւ, եթէ մեկնողը, ճամբորդողը, չուողը, կամ փախչողը եղաւ իր ճակատագիրին տէրը, անդին՝ ամբողջ «մնացորդաց» հաւաքականութիւն մը՝ եղաւ հաւատարիմ ու կառչած՝ իր ծննդավայրին ու կեցութեան տեղանքներուն մէջ:

Կը նշանակէ թէ՛ հայութեան տեղաշարժը կամ տեղամնացութիւնը, եթէ կատարուեցան, անոնք տեղի ունեցան մնացողներուն հաշւոյն, բայց, վերջին հաշուով, լիբանանահայութեան գոյակեցութեան գնով:

Այսօր, սակայն, մենք ունինք մե՛նձ ու կտրուկ ՕՐԱԿԱՐԳ մը, որ առնչուած է մեր նորահաս ջահակրելի սերունդին հետ, որ պիտի հանդիսանայ արժանի ժառանգորդն ու հետեւորդը իր ԱՆՄԻՋԱԿԱՆ նախորդներուն, ծնողք թէ ազգակից, հօրենական թէ պապենական պորտակապերով:

Հարցը կը վերաբերի նոր սերունդի այն հատուածներուն, որոնք այսօրուան ու վաղուան հասանելի, գործադրելի եւ աշխատողելի կենսուժը պիտի դառնան, իրենց ազգային-քաղաքացիական, ինքնակերտական-ինքնակազմաւորման հիմունքներով, շարժառիթներով ու տեսլաշարժերով:

Այս վերագրումները, երբեք դժուար չեն, ոչ ալ՝ անկարելի, բայց, կը պակսին այն մղիչ ուժերը, որոնք, զգաստ վերագարթօնքով, կուռ յանձնակատարութեամբ եւ ամբողջական յանձնառութեամբ, կրնան մեծ ներդրումներ կատարել, ի ծառայութիւն եւ յօգուտ մեր նոր սերունդին կազմաւորման ու հարստացման, այն նախատեսութեամբ ու նախամեծարութեամբ, որ անոնք կրնան եւ ի վիճակի են, իրենցմէ ակնկալուածն ու պահանջուածը լիովի տնօրինելու, յանուն իրենց ժողովուրդին ու հայրենիքին:

Հոսկէ կը սկսուի ու ծնունդ կ'առնէ մեր հիմնական առաջադրանքը, որ ուղղուած է այն կազմակերպութիւններուն ու նոյնիսկ կուսակցութիւններուն, թէ ինչո՞ւ մեծ մաս մը հայ երիտասարդներէն «խելակորոյս» վիճակի մէջ կը գտնուի, հեռու է գաղափարական արեւելումներէն, անհաշտ՝ իր շրջապատէն, անհաղորդ է՝ կոչերէն ու կը միտի այնպիսի



հորիզոններու, որոնք ոչ մէկ առընչութիւն ունին հայկականութեան ու հայութեան նուիրականութիւններուն ու սրբութիւններուն հետ:

Հարցումները, որոնք իրենք զիրենք կը պարտադրեն, այլեւ կը հնչեն, հետեւեալները կրնան ըլլալ.

- Ո՞վ կամ ովքե՞ր են պատասխանատուները
- Առաջնորդող կազմակերպութիւնները կամ ղեկավարութիւնները «թերացում»ներու բաժին ունի՞ն
- Ծնողներու կամ մերձաւորներու անտարբերութեան կամ վանողականութեան վերաբերմունք կա՞յ
- Ազգային մեր կառոյցները անհրապուրիչ եւ անգրաւի՞չ կը նկատուին
- Ազգային-գաղափարական դաստիարակութիւնը անբաւարար կը համարուի
- Ղեկավարութեան մակարդակի վրայ անհրաժեշտ որակեալ մարդուժը կամ տեսլապա՞շտը կը բացակայի

Թերեւս այս բոլորէն իւրաքանչիւրը, իր համապատասխան կողմով, առաւել կամ նուազ չափով, ճնշիչ մթնոլորտ մը ստեղծած է, որ տուեալ երիտասարդութեան համար, այնքան ալ փայփայելի կամ գգուելի չէ:

Եթէ ընդունինք, որ մեր նորահաս երիտասարդութիւնը զարգացած է, բանիմաց ու խելահաս, ապա, ան ինչո՞ւ ինքզինք հեռու պիտի պահէ իր «ազգային օճախ»ներուն մաս կազմելէ, անդամակցելէ, իր «լուման» բերելով այն շրջանակներուն, որոնք իր ամենօրեայ կեանքին մաս կը կազմեն եւ, ինչո՞ւ ոչ, նաեւ բարեկարգումներ, փոփոխութիւններ ու նորութիւններ ներմուծելով, աւելի բարօր ու հմայիչ արդիւնքներ ձեռք չձգէ:

Եթէ այս վերագրումները կամ արտայայտութիւնները համոզիչ են եւ երիտասարդութեան այդ հատուածները իրաւունք ունին բարձրաձայնելու իրենց «պահանջք»ներուն հրատապութիւնը, ապա, պատկան կողմեր ի՞նչ գոյնի ալ ըլլան անոնք, պարտաւոր են լսելու անոնց եւ, ի հարկին սրբագրուելու ու վերանորոգուելու գնով, օժանդակելու անոնց:

Վերջին հաշուով, եթէ կան նախանձախնդրութիւնը ու պատրաստակամութիւնը, հայ երիտասարդութիւնը ու պատրաստակամութիւնը, հայ երիտասարդութիւնը սիրաշահելու ու կարելորելու անոր ջահակրութեան երթը, միակ ճանապահը «տէր կանգնիլն» է անոր, ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ ունենալով անոր գործօն եւ արգասաբեր դերակատարութեան վրայ, որովհետեւ մեր համայնական ազգային կառոյցները այդ ուժին ու լոյսին, աւիւնին ու կրակին պէտք ունին, դուրս գալով ժամանցուած պայմաններէն, մտայնութիւններէն եւ աւանդոյթներէն:

(Պէյրութ)

ՄԵՐ ԴԻՏԱԿՈՒՄՈՎ ՈՒ ԴԱՏՈՒՄՈՎ շարքէն:

ՆՈՅՆՄԲԵՐ 2023

ՀՐԱԺԱՐՈՒՄՆ

*«Հրաժարի՛ մը ի սատանայէ
եւ յամենայն խաբէութենէ նորա...
ի չա՛ր պաշտօնէից նորա եւ
յամենայն չար գորութենէ նորա՛՝
հրաժաւելով հրաժարիմք»:*
Աղօթք

Հայերէնի բառարանները հարուստ են բազմանշանակ իմաստուն բառերով, որոնցից է նաեւ **հրաժարումն**, որ ըստ էութեան բացասական բնոյթի է եւ մեր պապերը, այն կապելով



սաղայելի տիրակալութեան հետ, իրենց աղօթքներում գործածում էին այդ բառը՝ պարզօրէն իրենցից չար գորութիւնները հեռացնելու միտումով:

Ձանձրալի, նոյնքան անընդունելի էր այդ բառի գործածումը նախորդ հնգամեակի ընթացքին: Նախկին իշխանականների եւ քաղաքական ընդդիմադիր ուժերի կողմից պետական մարմիններին եւ մասնաւորապէս վարչապետին ուղղուած ուղերձները՝ հրաժարականի պահանջով, բանաւոր թէ գրաւոր: Երեւոյթը աւելի նոկլալի էր, երբ այդ խաժամուժին՝ կամայ թէ ինչ որ տեղից եկած հրահանգով միանում էին լուրջ համբաւ ունեցողներ, որոնցից են՝ երկու կաթողիկոսները իրենց ջրախմբերով, ՀՀ եւ սփիւռքի բազում թերթերի խմբագիրները, ՀՀ կաճառի նախագահը եւ անդամները, անյաջող մտաւորականների խմբակներ եւ երկրի այլատեսակ փրկիչներ: Բայց որքան այդ ամբոյժը յամառօրէն պահանջում էր վարչապետի

հրաժարական, նոյնքան, վերջինս իր տրամաբանութեամբ աւելի պինդ էր մնում իր աթոռին:

Վարչապետը իր աշխատակազմով, ի վերջոյ, որոշեց **հրաժարուել** ՀԱՊԿ-ի գագաթնաժողովին մասնակցել, մինչեւ իսկ խնդրելով օրակարգից հանել ՀՀ օգնութիւն ցուցաբերելու հարցը՝ հաշուի առնելով այդ դաշինքի հետ լարուած յարաբերութիւնը, որ հիմնաւորուած է այն փաստերով, որ Բաքուի հետ 2021ին եւ 2022ին բախումների ընթացքին օգնութիւն չցուցաբերելով հանդերձ՝ քաղաքական առումով եւս կրաւորական դիրք են ունեցել: Բնական է, որ այդ քայլը՝ առիթ դարձաւ վայնասունի, իսկ քաղաքական գանգերի մի մասը այն համարում է սխալ՝ ենթադրելով Պուտինի գայրոյթի պարագան եւ միւս մասը գտնում է ճիշտ՝ ուղղակի հեռանալ ՀԱՊԿից եւ հայեացքը ուղղել դէպի արեւմուտք: Չուշացաւ նաեւ Մոսկուայի պատգամը, թէ հայերը սխալ քայլեր են անում՝ դժուարացնելով Բաքուի հետ բանակցելու ընթացքը, այնուամենայնիւ դռները բաց են թողնում՝ ետ քայլ անելու համար, նաեւ ՀԱՊԿ գլխաւոր քարտուղարը պիտի այցելի Երեւան հայկական կողմին փոխանցելու վերջնական տեսքի բերուած որոշումները, որոնց տակ անհրաժեշտ է նաեւ Հայաստանի ստորագրութիւնը՝ լիակատար անդամի իրաւունքով:

Այլ բնոյթի են յարաբերութիւնները Բաքուի հետ, քանի որ, ունենալով հզօր դաշնակիցներ եւ անհատնում նաւթ ու գազ, նրանք մնում են անպատիժ իրենց արած անօրէն քայլերի համար: Տեղին է յիշեցնել անգլիական «The Guardian»-ի վկայութիւնը, թէ British Petroleum-ը մեծ բաժնետոմս եւ խոշոր ներդրողի դեր ունենալով՝ նպաստել է հայերի դէմ ռազմական յարձակումը, որի հետեւանքն է՝ Արցախի կորուստը եւ աւելի քան 100 հազար բնակչի բռնի արտագաղթը:

Բարդ, խճճուած է վիճակը՝ անորոշ հետեւանքներով: Մեր պետական այրերը պարտաւոր են զգոյշ, խոհեմ լինել՝ մոռանալով մանկական խռովկանութիւնը, փորձել պահել չէզոք դիրք, լինել բարեկամ բոլորի՝ մանաւանդ հարեւանների հետ, այլ կերպ փրկարար «Միջազգային խաչմերուկ»-ի գաղափարը կը մնայ թղթի վրայ եւ ոչ ոք նրա կարիքը չի ունենայ, քանզի կան այլ հնարաւոր տարբերակներ:

Պատահական չէր Լուկաշենկոյի ցուցմունքը, որ եթէ ցանկանում ենք խնդիրներ լուծել, այն պէտք անել բանակցութիւնով, իմա՛, ցանկալի է, որ ՀՀը մնայ ՌԴի դաշնակից՝ փոխելով իր արտաքին քաղաքական դիրքը եւ կրկին չհրաժարուի գալիք հանդիպումներից, միեւնոյն պահին նշելով, որ պատերազմի վերսկսումը հաւանական է:

Աչքաթող չանենք մի հանգամանք, որ ՀԱՊԿ-ն Ռուսաստանն է, որին դաշնակից են հինգ երկիր նրա պատժումներից զերծ մնալու նպատակով:

Զմոռանա՞նք Վրաստանը, Մոլդովան, Ուկրաինան, իսկ 44-օրեան ու Արցախը՝ Բաքուի միջնորդութեամբ, քանզի ՀՀի հետ սահմանակից չեն: Կարծեմ ենթադրելի է, թէ նոյնը կը պատահի, եթէ ՀՀն հրաժարուի ՀԱՊԿից՝ հաւանաբար կրկին կը պատժուի Ալիեւի միջոցով:

ՀՀ եւ Բաքուի երկկողմանի յայտարարութիւններում, չնայած ծանուցում են թէ որեւէ խոչընդոտ չկայ «Խաղաղութեան պայմանագիր» կնքելու, բայց ոչ մէկ ձեռով չի նշում յարաբերութիւնների երաշխաւորումը, իսկ ազերի զօրքերը դեռ մնում են ՀՀ տարածքում: Նրանց հեռացումը եւ գերիների դարձը խաղաղութեան հիմնական պայման են:

Արդի խառնաշփոթ պայմաններում՝ *մեր ազգի ու երկրի շահերով առաջնորդուելով*, համահայկական մտաւոր ներուժի արթնացումը անհրաժեշտ է՝ անսխալ լուծումներ գտնելու համար: Երբ պիտի կարողանանք հասկանալ, որ եթէ իր յարափոփոխ նպատակների առումով Ալիեւը որոշի եւ նոր պատերազմ ձեռնարկի ՀՀի դէմ՝ իր բոլոր համակիրների ծափահարութեան ներքոյ, մենք շատ անելիք չենք ունենայ (մեղայ յոռետես մտքի համար) եւ նա չի փնտռի թէ հայի որ տեսակը միւսից աւելի լաւն է կամ արժէքաւոր՝ բոլորին միեւնոյն տոպրակի մէջ դնելով, ինչպէս եղաւ 1915ին եւ օրեր առաջ Արցախում: Զանձրացել եւ յոգնել ենք անիմաստ պետութիւն-ընդդիմութիւն անմիտ բախումներից, արեւմուտքի եւ հիւսիսի երկրպագուներից: ՀՀում, կայուն կարգավիճակ փնտռելու շտապ մեծ կարիք ունենք: Մեր ներքին բազում տարաձայնութիւնների դիմաց ունենք մէկ թշնամի, որի մեզ կուլ տալու խնդրակը գրգռուած է եւ այս հանգամանքը մոռանալը ապացոյց է բանականութեան չգոյութեան: Գիտե՞ք արդեօք՝ հայ հաւաքականութիւնը, թէ ո՛ր է գնում, ինչպիսի՜ մարտահրաւերներ կան առջեւում եւ ինչպէ՛ս պէտք է նրանց դիմակայել: Երանի այս կասկածները լինեն երեւակայական՝ հեռու իրականութիւնից:

27-11-23, Ռուբէն Յովակիմեան Սեն-Ռաֆայել

ԶԶՈՒԵԼԻ ԱՇԽԱՐՀ

Մեր Պարգէւ Դաւիթեան, Թորոնթօ, Նոյեմբեր 2023



Վրդոված եմ մեզ յուսախաբ ըրած Ռուսիոյ լարախաղաց կեցուածքէն:

Վրդոված եմ Ուքրաինային տրուած Արեւմուտքի անվերապահ աջակցութենէն:

Վրդոված եմ Ռուսիոյ եւ Արեւմուտքի՝ Թուրքիոյ հետ ունեցած

սիրաբանութենէն:

Վրդոված եմ եկեղեցականներու՝ կողմնակալ քաղաքականութիւն խաղալէն:

Վրդոված եմ մեզի պարտութիւն բերած մարդոց յիստրապիկ բարբաջելէն:

Վրդոված եմ տիտղոսաւոր հայերու «պէտք է որ» ըսելով յօդուածներ գրելէն:

Վրդոված եմ անհաւասար ուժերով կռուիլ պահանջողներու «հերոսութիւններէն»:

Վրդոված եմ քաղաքակիրթ կոչուող աշխարհի՝ երկու նժարով դիրքորոշուելէն:

Վրդոված եմ տեղահանուածներու թշուառութիւնը կանխել չուզող աշխարհէն:

Վրդոված եմ պետութեան ներկայացուցիչ յարգել չգիտցող երիտասարդներէն:

Վրդոված եմ ինքնապաշտպանութեան անունով մանուկ ու ծեր սպանողներէն:



Վրդոված եմ ցեղասպանուածի կողմէ ուրիշը ցեղասպանութեան ենթարկելէն:
Վրդոված եմ ցեղասպանողի՝ ուրիշին բարոյագիտութիւն սորվեցնելէն:

Զգուելի՛ աշխարհ:

Վրդոված եմ քաղաքակրթութեան բարիքներով եւ միջազգային օրէնքներով հանդէս եկող մարդոց շահախնդիր ու շնափառ կողմնակցութիւնը դիտելէն:
Վրդոված եմ քաղաքակիրթ կոչուող այն աշխարհէն, որ կու տայ Քոսովոյին ինքնորոշման իրաւունք (self determination) եւ այդպիսի իրաւունք չ'ուզեր տալ արցախահայութեան:

Զգուելի՛ աշխարհ:

Վրդոված եմ քաղաքակիրթ կոչուող աշխարհէ մը, որ Պաղեստինի մէջ ժողովուրդ մը ամբողջ անարդարօրէն բանտի մէջ պահուած տեսնելը ընդունելի կը գտնէ եւ բանտապահին անմարդկային բարբարոսութիւնները ինքնապաշտպանութիւն (self defence) կը նկատէ:

Զգուելի՛ աշխարհ:

Ներելի է Համասներ ու Հրգպալաններ ահաբեկիչ նկատել, բայց ներելի չէ Իսրայէլը ահաբեկիչ պետութիւն սեպել:
Արդեօք Արեւմուտքի պետութիւնները չե՞ն գիտեր, թէ Պըն Լատեններ, Համասներ եւ Հրգպալաններ կը ծնին ի հետեւանք այն բռնութիւններուն եւ ճնշումներուն, որ կը կիրարկեն իրենք եւ իրենց ծնունդ Իսրայէլը:

Զգուելի՛ աշխարհ:

Վրդոված եմ մարդս իրեն նման մարդէն ինքզինք գերադաս նկատելէն:
Վրդոված եմ զոհն ու ոճրագործը նոյն կշիռով չափողներէն կամ զանոնք իրարու հաւասար նկատողներէն:
Վրդոված եմ ուրիշին զոհողութիւնը չարաչար գործածող սմսեղուկներէն:
Վրդոված եմ անտառի օրէնքով գործող փողկապակիր մարդակերներէն:

Զգուելի՛ աշխարհ:

Ինչո՞ւ Արեւմուտքին ներելի է Քոսովոն անկախ դարձնել եւ նոյն անկախութեան արժանի Արցախի հայութիւնը բռնահանուած դարձնել:
Ինչո՞ւ Ռուսիա Ուքրաինայի մէջ Տոնպասի ռուսերուն փրկութեան ձեռք երկարելու պատերազմ պիտի հռչակէր եւ Արցախի հայերուն նման բան պիտի չընէր՝ օգնելով իր դարաւոր բարեկամ ու փոքր եղբայր Հայաստանին, որ Արցախը փրկուէր:



Զգուելի՛ աշխարհ:

Ինչո՞ւ հայրենասիրութիւն խաղցողները Փաշինեանը կը մեղադրեն անտեղի պատերազմ հրահրելուն համար՝ անոր «Արցախը Հայաստան է ու վերջ» ըսած ըլլալով, եւ չեն մեղադրեր իրենց քլանին պատկանող բարձրաստիճան շեֆերը մեր բանակին, որոնք խաբեցին զայն՝ երկու օրէն Պաքուն գրաւելու մեծխօսիկութեամբ: Միթէ նոյնը չէ՞ր պարագան Եգիպտոսի նախագահ Ապտ Էլ-Նասերին, որ պատերազմի գնաց Իսրայէլի դէմ՝ վստահելով զինք խաբող մարաջախտ Ամերի թոյլ բանակին:

Զգուելի՛ ու հազա՛ր անգամ զգուելի աշխարհ:



ԴԺԲԱՆՏԱԾԻՆ ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐԸ

Իսրայէլացի պատանդներու եւ պաղեստինցի բանտարկեալներու փոխանակման դէպքը յուզումնախառն դիտեցի հեռատեսիլէն:

Մէկ կողմը անմեղ կիներ ու մանուկներ փոխադրակառքերով կը տարուէին Կազայէն դէպի Իսրայէլ, միւս կողմն ալ պաղեստինցի ազատամարտ աղջիկներ, բանտերէն դուրս եկած, կ'ողջագուրուէին իրենց հարազատներուն հետ:

Յուզիչ էր տեսնել մարդկութեան նենգ ուժերու զոհ դարձած մարդոց ողբերգութիւնը, եւ լացի յուզումէս:

Պատանդները զոհն էին իրենց ցեղապաշտ (apartheid) պետութեան մեղադրելի քաղաքականութեան հետեւանքով գործուած ոճիրի, իսկ բանտարկեալներն ալ ազատամարտիկներ էին, որոնք յանդգնած էին այդ պետութեան դէմ պայքարի դրօշ բարձրացուցած ըլլալու յանցանքով «ոճրագործ» դառնալ:

Ու ես, որ ամէն տեսակ կրօնական մոլեռանդութեան դէմ եմ ու կը մերժեմ ընդունիլ «Համաս»-ի եւ «Իսլամ եղբայրներ»-ու՝ ուրիշը մերժող եւ չընդունող անհանդուրժելի քաղաքականութիւնը եւ յետամնաց կը նկատեմ անոնց նմաններուն կողմէ պարտադրուած՝ կնոջ զլուխը լաթով փաթթելու երեւոյթը, կապ մը զգացի փաթթոցաւոր կիներու գիրկընդխառնումը տեսնելով:



Ճնշուածներու եւ իրաւագրկեալներու ցաւին հետ ցաւ զգացի ու անոնց բանտէն դուրս գալուն ուրախութիւնը մարդկօրէն կիսեցի:

Ու մտքով մտայ երազի աշխարհին մէջ՝ խորհելով, թէ որքա՛ն պիտի ուզէի տեսնել Ազրպէյճանի մէջ բանտարկեալ մեր արիւնակիցերուն ազատագրումը, նոյնիսկ եթէ ան ըլլար «համաս»-եան՝ անմարդկային կոչուած բարբարոսութեամբ գործուածի հետեւանք...:

Ու մտքով պեղեցի եւ յիշեցի ֆրանսացի հոշակաւոր գրող Էմիլ Զոլայի «Ժերմինալ» (Germinal) կոչուող գիրքը, ուր ան կը խարանէ բռնութիւնը այն գործատերերուն, որոնք հանքագործները կը գործածէին որպէս անարժէք «անասուններ»:

Այդ գիրքին մէջ Էմիլ Զոլա համոզիչ ձեւով կը նկարագրէ, թէ ինչպէ՛ս մարդս կը դառնայ զազան՝ ի հետեւանք այն դժոխային վիճակին, որուն մէջ զինք կը դնեն ուժի եւ դրամի տէրերը:

Այդ գիրքը գրելէն (1887) առաջ, Էմիլ Զոլա 1884 թուականին այցելած էր «Անզեն» կոչուող հանքավայրը՝ ի մտի ունենալով փաստագրութիւն (documentation) մը ընելու կարելութիւնը: Այդ փաստագրութեան շնորհիւ ան գրեց «Ժերմինալ»-ը: Ինքզինք ներկայացնելով որպէս քարտուղարը ֆրանսական խորհրդարանի անդամներէն մէկուն, ան մտաւ հանքին ստորգետնեայ վայրը իր ֆրանսացի քաղաքացիի կերպարով՝ ձեռքին թուղթ ու գրիչ: Օր մը, երբ Զոլա եւ իր ուղեցոյցները կը գտնուէին 150 ոտք գետնին տակ հանքի փոսին մէջ, կը նկատուէր հսկայ ձի մը, որ հոն կը գործէր: Շուրջիներուն հարց կու տայ, թէ ինչպէ՛ս այդ հսկայ ձին ներս ու դուրս կու գար գետնին տակ գտնուող այդ վայրէն:

Սկիզբը հանքագործները կը կարծեն, թէ Զոլա կատակ կ'ընէ, սակայն երբ կը տեսնեն թէ ան լուրջ է, անոնցմէ մէկը կ'ըսէ. «Պրն. Զոլա, միթէ չե՞ս հասկնար. այդ ձին հոս մէկ անգամ ներս կը մտնէ, երբ տակաւին քուռակ է եւ կրնայ իր փոքր կազմով սեղմուիլ այն դոյլին կամ տաշտին մէջ, որ մեզ հոս կ'իջեցնէ: Այդ ձին հոս՝ այս խոր գետնայարկին մէջ կը մեծնայ, քանի մը տարի ետք ալ կը կուրնայ լոյսի չգոյութեան պատճառաւ: Ամբողջ կեանքը հոս՝ այս մթութեան մէջ կ'անցընէ ածուխ փոխադրելով, մինչեւ որ այլեւս սպառին ուժերը եւ մեռնի ու թաղուի այս փոսի մթութեան մէջ»:

Այս բացատրութիւն-փաստագրութիւնը Էմիլ Զոլա կարդացողին յայտնելով «Ժերմինալ» կոչուող իր գիրքով՝ կ'ուզէ ընթերցողին ցոյց տալ, թէ այդ ձին կը խորհրդանշէ կեանքը այդ հանքագործներուն, որոնք մանուկ հասակին կ'իջնեն երկրին յատակը՝ գործելու այդ հանքերուն մէջ, իրենց ամբողջ կեանքին ընթացքին կը փորեն եւ ածուխ կը հանեն՝ մինչեւ որ մաշին այդ ահաւոր գործին մէջ ու հոն մեռնելով թաղուին այդ փոսերուն մէջ:

Վերոյիշեալ գիրքին հակիրճ պատմականը ընելով ուզեցի հասկնալ ու հասկցնել, թէ Կազախի փոսերուն մէջ բանտարկեալ, զրկեալ եւ միշտ տառապեալ ու անտէր այդ ժողովուրդին զաւակները երբ դուրս եկան իրենց պարտադրուած փոսերէն եւ անմարդկային ապրելակերպէն ու «զազան» կոչուեցան Զոլայի գիրքի հանքատերերուն նմանող ուժ եւ դրամ

ներկայացնող մարդոց կողմէ, անոնք, ԱՅՈՒՄՅՈՒՄ, ոճիւր գործեցին, որովհետեւ «անասնացած» էին Զոլայի հանքագործներուն օրինակով:

Անոնք դժբախտածին ոճրագործներ էին:

Ու որպէս վերջաբան կ'ուզեմ հոս մէջբերել լիբանանցի հռչակաւոր գրող Ժպրան Խալիլ Ժպրանի իմաստասիրութիւն նկատուող սա նկարագրումը Մարթա պոռնիկին՝ իր «Ալպանացի Մարթան» կոչուող գրութեան մէջ, ուր ան կ'ըսէ. «Դուն բորոտի պէս չես, ո՛վ Մարթա, թէեւ կեանքը քեզ դրաւ ցածոգիներու ձեռքին մէջ»:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՊԷՏՔ Է ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԻԼ



Թուրքիոյ նախագահը տեսաբար կը յիշեցնէ որ Հայաստան պէտք է օգտուի Ազերպայճանի մեկնած բարեկամական ձեռքէն: Ազերպայճան նոյնպէս Հայաստանի հետ խաղաղութիւն հաստատելու յայտարարութիւններ կը կատարէ, միաժամանակ Հայաստանի եւ Արցախի

ժողովուրդին դէմ գործածելով թշնամութեան զինանոցի բոլոր գործիքները, սկսած յարձակողապաշտ խօսոյթէն՝ Հայաստանի՝ «Արեւմտեան Ազերպայճան» անուանում, «Հայաստանի գրաւած ութ գիւղերու վերադարձ»-ի պահանջ, Հայաստանի ինքնիշխան տարածքէն 200 քառ. քմ. տարածքի գրաւում, հայ գերիներու հանդէպ քրէական հետապնդում, արտատարածքային կարգավիճակով՝ «Զանգեզուր»-ի միջանցքի պահանջ եւ յաճախակի սահմանային յարձակումներ, պատմամշակութային յուշարձաններու քանդում եւ իւրացում, Արցախի ժողովուրդի ցեղային զտում...:

Թուրքիա եւ Ազերպայճան խաղաղապաշտութեան քողին տակ մէկ աստիճան աւելի խստացուցին իրենց դիրքորոշումը, քննադատելով Հայաստանի՝ Ֆրանսայէն սպառազինութեան գնումները, այդ քայլը համարելով պատերազմի պատրաստութիւն: Այս առթիւ Թուրքիոյ նախագահին յայտա րարութիւնը յատկանշական է թէ՛ «Արեւմտեան երկիրներու ուղարկած ոչ մէկ զէնք եւ զինամթերք կրնայ ապահովել կայուն խաղաղութեան եւ անվտանգութեան միջավայր»:

Ռուսաստան Արցախի պաշտպանութեան իր յանձնառութեան խայտառակ ձախողումէն ետք, անդադար ազդանշաններ կ'ուղարկէ Հայաստանին իր պատրաստակամութիւնը յայտնելով Հայաստան-Ազերպայճան խաղաղութեան հոլովոյթի միջնորդութեան: Սակայն, Հայաստան շատ աւելի խստապահանջ դարձած է, անուղղակիօրէն դասալքութեամբ ամբաստանելով Ռուսաստանն ու ՀԱՊԿ-ն, միշտ յիշեցնելով անոնց թերացումը Հայաստանի եւ Արցախի պաշտպանութեան մէջ, եւ Ռուսաստանի նախաձեռնած միջպետական բոլոր վեհաժողովներուն Հայաստանի մասնակցութիւնը մերժելով կամ փոխանորդի մակարդակով մասնակցելով:



Ռուսաստանի միջնորդութեան Հայաստանի կողմէ «պոյքոթ»-ին հակապատկերը՝ Ալիւի կողմէ վերջին շրջանին արեւմտեան միջնորդութիւններու՝ Կրանատայի, Պրիւսէլի եւ Ուաշինկթընի մերժումն է: Հայաստանի եւ Ազերպայճանի դիրքերու բեւեռացումը երթալով կը շեշտուի. Ազերպայճան-Թուրքիա-Ռուսաստան ընդդէմ Հայաստան-Արեւմուտքի:

Այս բաժանումին մէջ Իրան կը մնայ Հայաստանի ամենէն կայուն պաշտպանը, հարաւային սահմանի անփոփոխութիւնը պահպանելու առումով: Իրանի ռազմական հակազդեցութեան սպառնալիքի շնորհիւ Ազերպայճան-Թուրքիա-Ռուսաստան երրեակը «Զանգեզուր»-ի միջանցքը զինեալ միջամտութեամբ բանալու արկածախնդրութենէ կը խուսափի, գոնէ առայժմ: Արեւմուտքը եւս «Զանգեզուր»-ի միջանցքի արտատարածքային կարգավիճակով Ազերպայճանի տրուելուն դէմ է: Սակայն, ոչ մէկ երաշխիք կայ, որ զենքի միջոցով գրաւումի պարագային ան Հայաստանին օգնութեան պիտի հասնի:

Ծայր աստիճան պայթուցիկ այս պայմաններուն մէջ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի կառավարութիւնը կը հետապնդէ «խաղաղութեան խաչմերուկ» ծրագիրը, որ խորքին մէջ Ռուսաստանի Նոյեմբեր 9-ին առաջադրած հրադադարի 9-րդ կէտն է, եւ որ Հայաստանի դիւանագիտութիւնը շատ յաջող կերպով իւրացուց, երկիրը վերածելով հիւսիս-հարաւ ու արեւելք-արեւմուտք հաղորդակցակապերու խաչմերուկի:

Ռուսաստան 2020-էն 2023 ժամանակահատուածին չկրցաւ իրականացնել զայն: Աւելին, հարաւային Կովկասի երկիրներու միջեւ հաղորդակցամիջոցներ հաստատելու ծրագրի ետին կը հետապնդէր հրէշային ռազմավարական գերնպատակ մը՝ այս տարածաշրջանին մէջ իր ներկայութիւնը յաւերժացնել, թէ՛ Լա չինի միջանցքի եւ թէ՛ «Զանգեզուր»-ի միջանցքի վրայ իր վերահսկողութիւնը հաստատել եւ այդպէսով Հայաստանի եւ Ազերպայճանի վրայ մշտական ճնշում բանեցնելու միջոցներ ձեռքբերել:

44-օրեայ պատերազմէն ետք, Հայաստան ազերական կողմին ամենօրեայ յարձակումներուն թիրախ դարձաւ: Ռուսաստանէն, ԱՄՆ-էն, Եւրոպայէն պաշտպանութիւն մուրաց: Իր անպաշտպանութեան համար շատ սուղ գին վճարեց. վերջինը՝ Արցախի կորուստն էր: Այս բոլորով հանդերձ, Հայաստան իր փրկութեան միակ ելքը կը տեսնէ խաղաղութեան պայմանագրի մէջ, միաժամանակ Ազերպայճանը հետապնդելով միջազգային ատեաններու առջեւ եւ իր սպառնալիքները հզօրացնելով:

ԺԻՐԱՅՐ ԶՈՒԱՔԵԱՆ

ՆՈՐ ՅԱՌԱՋ

23/11/2023

ԵՐԵՒԱՆԻ ՓՈՂՈՑՆԵՐԸ

Յակոբ Միքայէլեան

-

24/11/2023



Փոխադրակառքերու կանգառը սպասած ատենս կանգ առնող ու անցնող ատոբուսներուն վրայ երթուղիի փողոցներուն անունները հետաքրքրութեամբ կը կարդամ. ընդհանրապէս ծանօթ անուններ են, մասնաւորաբար՝ զլիաւոր պողոտաներունը եւ փողոցներունը, մնացեալը՝ երբեմն ծանօթ անուններ, սակայն անծանօթ փողոցներ կան,

նաեւ անծանօթ անուններ: Ծանօթ, անուանի մարդոց անունները սիրելի են եւ հպարտութիւն կը ներշնչեն, սակայն անծանօթ անուններուն մէջ բաւական օտար անուններ կան, ընդհանրապէս ռուսական. շատ հաւանաբար սովետական շրջանէն մնացած: Վստահ եմ՝ Երեւանի քաղաքապետարանը յատուկ յանձնախումբ ունի փողոցներուն անուններով զբաղելու համար, որոնց անդամները չեմ գիտեր ինչ պարտաճանաչութեամբ կը կատարեն իրենց վստահուած գործը, որ ըստ իս շատ կարելոր է, քանի որ փողոցներուն անունները քաղաքին ինքնութեան փաստաթուղթի նման են, քաղաքին պատուոյ ցանկին նման, միւս կողմէ ալ կ'անմահացնեն անուններուն տէրերը:

Պարզ է որ մեր պատմական անուններն ու արեւելահայ նշանաւոր մարդոց անունները պիտի գրաւէին անուանացանկին մեծ մասը, սակայն եւ այնպէս, անոնց շարքին կան հատ ու կենտ արեւմտահայերու անուններ, ինչպէս Յակոբ Պարոնեանի անունը: Վերջին տասնամեակներուն բազմացան արեւմտահայ անուանի մարդոց անունները, յատկապէս Եղեռնի զոհ մտաւորականներու: Խորհրդային շրջանէն մնացած ժամանակավրէպ, հնամաշ անուններ ալ կան, որոնք վերանայման ու փոխարինման կարիք ունին, ինչպէս կեդրոն շրջանի «Դեղատան փողոցը», եթէ շատ շատոնց այդ թաղը նշանաւոր եղած է իր դեղատունով, հիմա արդէն այդ դեղատան հետքն անգամ չկայ ու կարելի է շատ յարմար նոր անունով մը կոչել: Կամ «Աղիւսագործների փողոց», «Գաջագործների փողոց» եւ այլն: Տակաւին կարելի՞ է այսպիսի անուններ պահել, ի՞նչ իմաստ ունի:

«Պէյրուք» անունով փողոց կայ Քաղաքապետարանի հարեւանութեամբ, այնքան գեղեցիկ վայր մը, մինչ «Հալէպ» անունով փողոց չկայ, երբ մեծ թիւով հալէպահայեր արդէն տեղացի դարձած են եւ ահագին ներդրում ունին երկրի տնտեսական թէ՛ այլ ոլորտներու զարգացման մէջ:

Հետաքրքրութիւնս մղեց զիս, որ քննութիւն մը կատարեմ Երեւանի փողոցներուն անուններուն եւ դիմեցի Google-ին, որ իսկական հրաշք մըն է, որ բոլոր հարցերուդ պատասխանն ունի: Երեւանի տակաւ ընդարձակուող շրջաններու նոր թաղամասերը առիթ ընծայած են, որ նոր անուններով կոչուին անոնք, որոնց մէջ հանդիպեցայ լիբանանահայ բանաստեղծ Վահէ-Վահեանի անուան, ուրախացայ, սակայն երբ Վահան Թէքէեան, Շահան Շահնուր, Ա. Ծառուկեան, Սիմոն Սիմոնեան, Զահրատ եւ նման հեղինակաւոր գրողներու անուններ փնտռեցի, չգտայ:



Հիմա նստած պիտի չթուեմ սփիւռքահայ գրող, բանաստեղծ, արուեստագետ, նկարիչ, երաժիշտ, դերասան, գիտնական հսկայ փաղանգի մը անունները, որոնք, վստահ եմ՝ ծանօթ են քաղաքապետարանին, սակայն երեւի իրենց հերթին կը սպասեն: Եթէ օտարանուն փողոցներուն անուանց տէրերը ժամանակավրէպ եղած են, առիթ է, որ անոնք փոխարինուին հերթի սպասող անուններով: Չեմ գիտեր եթէ ընդունուած չէ, որ միեւնոյն անձին անունը թէ՛ դպրոցի մը տրուի, թէ՛ փողոցի մը, բայց արդէն կան այդպէս մի քանին: Օրինակ՝ Չարենց անունով թէ՛ դպրոց կայ, թէ՛ փողոց, նոյնը՝ Ռաֆֆի անունով:

Ուրիշ բան մը. ինչո՞ւ, օրինակ, դերասան Վ. Փափազեանի անունով փողոց կայ, բայց Սիրանոյշ, Պետրոս Ադամեան անուններով փողոցներ չգտայ: Մարտիրոս Սարեանի անունով փողոց կայ, սակայն Արշիլ Կորքիի, կամ Գառգուի անունով փողոցներ չկան: Արամ Խաչատուրեան կայ, բայց Ալան Յովհաննէս չկայ:

Ինչ որ է, իմ կարծիքով շատ կարեւոր է անուանադրութիւնը: Սփիւռքը հալոցքի մէջ է, փրկենք եւ անմահացնենք մեր մեծերուն անունները:

Յիշածս անուններուն մէջ եթէ սխալներ կան, կամ թերացումներ, ներող եղէք:

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՓՈՒՆՋ ՍԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ



ՈՉ ՈՔ ՏԵՍԱԻ

Շուրջս դէմքեր հազա՛ր-հազա՛ր, մարդու կարօտ ես մնացի,

Շուրջս դիմակներ պէսպիսուն, դէմքի կարօտ ես մնացի:



Շուրջս աղմո՛ւկն կը շառաչէր հողմի պէս խենդ ու անիմաստ,
Սիրտս փնտոեց սիրտէն բխող այն խօսքն իրա՛ւ, գերթ քալասան:

Բիւր լեզուներ զրնգացին ականջներուս մէջ մշտաբաց,
Հայերէ՛նը ես փնտոեցի, հոգւոյս լեզուն անդաւաճան:

Ու քայլեցի ուն՛ր-մոլն՛ր աշխարհի բիւր ճամբաներէն,
Սիրտս միշտ ալ կարօտ մնաց այն միակին որ Տուն տանէր:

Այդ կարօտը լուռ այրեցաւ, դարձաւ ճըրագ ոսկեկարմիր,
Ոչ որ տեսաւ ներսիս կրակը, բոցեղէն հուրը իմ սրտին:

Կրակս միշտ ճարճատեցաւ, կայծ ու շանթեր հրավառեց,
Բայց շատ անգամ մեն ու մենակ իր կարօտի երգը երգեց:

19/11/2023

.....

ՄԱՐԴ ԷԱԿԻՆ

Ո՛վ մարդ էակ, չմարդացա՛ր, ոսկեայ հորթը լոկ պաշտեցիր,
Անով հարբած մոլորուեցար անդունդն ի վար մեղաց տիղմին:

Նիւթեղէնը դաւանեցիր որպէս արժէք մը գերագոյն
Ու պատի՛ւդ, ոգեղէ՛նը դուն զոհեցիր անոր սիրոյն:

Ու ընթացս աղքատացար, թշուառացար՝ նիւթին գերի,
Կուտակեցիր ինչքեր բազում բայց քու հոգիդ կորսնցուցիր:



Կեանքդ դժոխք մը դարձուցիր յանուն փողին, մամոնային,

Ու մնացիր միշտ անկշտում, միշտ աւելին դուն տենչացիր:

Թէ աշխարհը քեզ մատուցեն՝ հարստութեամբքն իր անբաւ,

Հոգիդ, ոգիդ պիտի մուրան ու աղերսեն Բա՛նը կենաց:

Երանի՛ թէ դուն հասկնաս որ ՀՈԳԻՆ է կենաց Բանը,

Ան իմաստն է քու գոյութեան, երջանկութեան բուն ակունքը:

20/11/2023

.....

ԺԱՄԱՆԱԿԷՆ ԱՆԴԻՆ

Հրակարմիր վարսերէն

Բո՛ց-բո՛ց կրակ կը տեղար,

Կը հրդեհէր, հրավառէր

Սիրտը՝ սիրոյ մի բաժակ...

Ժամանակի լուռ հոսքէն

Արծաթ տեղաց լուսնկայ,

Կարմիրը վառ վարսերէն

Դարձաւ սպիտակ, ձիւնափայլ...

Հոգին երբեք չգիտցաւ

Ժամանակի առեղծուածն,

Յամառեցաւ խոյանալ

Ճախրանքովն իր վեհասլաց...



Ան թեւ առաւ ու թռաւ

Ժամանակէն վեր, անդին,

Հոգին ըրաւ պարունակ

Անեզրական տիեզերքին:

14/5/2022

.....

ԴԵՌ

Դեռ հաւատքիս ապառաժը կ'ուզեմ կռանել,

Յոյսի կայծեր բռնկեցնել որ չմարի

Հուրը սրտիս, հուրը հոգւոյս իմ տանջակէզ,

Որ միշտ հաւ' տաց դեռ ծագելիք արշալոյսին,

Երբ խաւարն էր պատեր համակ երկինքը մեր:

Դեռ սփոփարար բառեր կ'ուզեմ փնտռել, գտնել

Մենքոպաշունչ բառարանէն բազմադարեան,

Որ միշտ ցոլաց մթութեան մէջ մեր պատմութեան

Եւ բոցկլտաց նշոյլ մը լոյս խաւարին մէջ

Որ չիյնայինք յուսալքման անդունդին մէջ:

Դեռ տեսիլքիս ջահը կ'ուզեմ առկայծ պահել,

Հայեացքիս դէմ վառել լուսէ հորիզոններ,

Փարատել մութն կասկածներուս իմ տանջահար,

Կանչելով միշտ Մեծերը մեր բոլր պատմութեան,

Ճաճանչ քաղել յոյսի, լոյսի եւ զօրութեան:

11/11/2023



.....

ԱՆՑԱԾ-ՉԱՆՑԱԾ

Եւ ամէն ինչ դարձաւ հեքիա՛ր,

Եւ ամէն ինչ դարձաւ երա՛գ,

Որ դեռ հեռուէն զիս կը կանչէ

Իր գիրկը տաք եւ լուսեղէն:

Այդ գիրկին մէջ՝ սիրոյ օրրան,

Սիրտս դարձեալ կը ջերմանայ,

Մարդ ու աշխարհ կը մարդանան,

Սիրով կ'օծուին լուսաբուրեան:

Մանուկն իմ մէջ զարթնու յանկարծ

Զարմացական հայեացքով վառ,

Կը նայի վարդ հորիզոնին,

Նոր ծագելիք արշալոյսին:

Ու բարի՛ն է որ թեւ կ'առնէ,

Նոր անուրջներ ան կը հիւսէ,

Զիս կը տանի անցա՛ծ-չանցա՛ծ

Հին օրերուն արեւավառ:

Ժամանակը կը ծիծաղի,

Հինն ու նորը օղա՛կ-օղա՛կ

Կը կամրջէ նոյն շղթային,

Որ իմ կեանքն է անցա՛ծ-չանցա՛ծ:



25/7/2019

.....

ՉԿԱՍ

Տարիներ են անցեր-զորրուեր

Ժամանակի անդունդին մէջ,

Չկաս մա՛յր իմ, սի՛րտ իմ լուսէ,

Չկայ ձայնդ կարօտահեւ:

Դուն մեկնեցար լո՛ւտ ու յուշի՛կ,

Անակնկա՛լ, յանկարծա՛կի,

Բայց զգացի հեռուներէս

Մաշումն սրտիդ հե՛ւք առ հե՛ւք:

Տիեզերք մը կեանք տարիր հետդ,

Ամայացաւ իմ աշխարհը,

Մնաց ինձ հետ սրբութիւնդ,

Մաքուր խիղճդ ու աղօթքդ:

Խօսքերդ դեռ պիտի հնչեն

Ունկերոս մէջ, իմ սրտիս մէջ,

Շունչդ, ոգիդ պիտ' թեւածեն

Իմ լռութեան մէջ առ յաւիտ:

Աստ' ծոյ մօտիկ հրեշտակ որպէս

Պիտի հսկես իմ օրերս,

Պիտի դառնաս բարեխօսս



Արարիչին եւ իմ միջեւ:

Հոգւոյս աչքով քեզ պիտ' տեսնեմ,
Քեզ պիտ' կանչեմ տագնապիս մէջ,
Դուն պիտի գաս առաջուն պէս
Գորովանքով միշտ սիրաջերմ:

13/11/2023

.....

ԱՄԱՆՈՐԵԱՅ ԲԱՂՁԱՆՔ

Ամանորին շուտով գալիք, ես չեմ ուզեր ծափ ու ծնծղայ,
Միայն մարդը թող մարդանայ, գազանն իր մէջ ի չիք դառնայ,
Լռեն ռումբերն կործանարար, սեւ չարիքը թող հեռանայ,
Սիրտը սիրտին դառնայ ընկեր, հոգին հոգւոյն կապէ կամար...

Դիմակները թող իյնան վար, դէմքը խօսի մերկ ու անգարդ,
Խիղճը արդար, խիղճը անեղծ դառնայ դէմքին մաքուր ցոլանք,
Աչքերուն մէջ հոգին խօսի, հոգին մարդուն անապական,
Ուր կայ կայծը արարչութեան ու բարիին վսեմական...

Փռուի սուփրէն եղբայրութեան, հաց ու զինուով թող ան լենայ,
Կենաց բանով ու օրհնութեամբ թող վարարի ան յորդառատ:
Չարն ու նենգը, սուտն ու կեղծը տեղ չգտնեն ու վերանան,
Սիրերգութեան Տօն մը ըլլայ ամանորեայ ամէն սեղան...

Օ՛ այն ատեն այս դարը պիղծ կ'ապրի զարթօնք զարունավառ,
Կը թօթափէ ժանգն ու փռշին, պայծառակերպ կը շողշողայ,

Անամպ երկինք մը կը բացուի որպէս նորոգ մի այգաբաց,

Աւետաբեր խաղաղութեան ու երազուած կեանքին արդար:

Երկիրս հին վերագարթնու լուսաբացին այս նորածագ,

Կ'ապրի խաղաղ կեանքով վսեմ ու կ'արարէ բարին պայծառ,

Նոր լոյս կ'երկնէ դարին այս նոր, կը հրավառի արեւափառ,

Նոր թելերով թռիչք կ'առնէ դէպ' երկինքներն ազատութեան:

ԵՐԱՆ

11/12/2023

ԾՈՎՈՒՆ ԵՐԳԸ



Հեռուներէն եկող եւ ծովու կապոյտ մակերեսին վրայ գլտորող ալիքներ, անանուն երաժշտութիւն մը կ'երգէին եւ փրփրալով եղանակը մինչեւ ծովեզերք կը հասցնէին:

Մարդիկ ծովէն քաշուած ճերմակ աւազներու տարածութենէն աստիճանաբար, առօրեայ մարզանքի համար, շարուած քարերով լայն մայթին վրայ որեւէ ժամու կը վազէին, կամ ալ երկու կամ երեք ընկերներով խօսակցելով հանդարտ կը քալէին:

Ուրիշներ, դարձեալ առօրեայ մարզանքի համար, կը նախընտրէին ծովեզերքի թաց աւազներու վրայէն քալել եւ ալիքներու յատակէն բերած ու աւազներուն վրայ ձգած

խխունջներու մեծ ու պզտիկ, տեսակ- տեսակ պատեանները հաւաքել...:

Այն օրը դեռ կանուխ էր, սակայն աներեւոյթ ձեռքեր արդէն սկսած էին արելը երկնքի սանդուխներէն վեր հրել, եւ մայթին քովի սեւ ասֆալթին վրայ գացող- եկող օթոպիսներուն եւ կառքերուն թիւն ալ սկսած էր հետզհետէ աւելնալ...:

Օդը երթալով կը տաքնար եւ երթելէ կը շատնար:

Ծովեզերքին դիմաց, երկինք հասնող հորելի ապակեպատ սրահին մէջ, տեսարանը վերէն գեղեցիկ էր եւ հեռուն ծովու հորիզոնին մօտ, նախորդ օրուայ անձրեւոտ մշուշէն մնացած քանի մը պզտիկ ամպեր սկսած էին ցրուիլ ու հետզհետէ հեռանալ...:

Մենք ընտանիքով նախաճաշի սեղանին առջեւ նստած՝ երթալիք տեղերու եւ պտոյտներու մասին կը խօսէինք եւ պատուհանէն ծովուն բացերը եւ հորելին շուրջի շէնքերը կը դիտէինք:

Դիմացը ցած շէնքի մը տանիքին վրայ, կին մը տաքցող արեւին տակ, սաւաններ եւ լուացքի մեծ ու պզտիկ լաթեր կը փռէր, եւ թերեւս գալէն առաջ խորհելով որ տանիքին վրայ կրնար օգնութեան պէտք ունենալ, հետը եօթը կամ ութը տարեկանի մօտ պզտիկ մանչուկ մը բերած էր:

Բայց պզտիկ մանչուկը խաղալ կը սիրէր եւ այնպէս կ'երեւար թէ մօրը օգնելու շատ նպատակ չունէր:



Ան փոռած թաց սաւաններուն կը փաթթուէր, երեսը զով լաթերուն կը քսէր, եւ թելերը թիթեռնիկի պէս բանալով ու շարժելով, տանիքին վրայ ուրախ կ'ոստոտէր եւ հոս ու հոն «կը թռէր»...:

Յայտնի էր թէ իր խաղերով ան կը զուարճանար, եւ մօրը քով տանիքին վրայ ինքզինք ապահով կը զգար:

Կարելոր էր ապահով եւ պաշտպանուած զգալը եւ մենք ալ այդ վայրկեանին, մեղմ լոյսերով եւ ցած ձայներով ճաշարանի զով հանդարտութեան մէջ, անբացատրելիօրէն հանգիստ եւ պաշտպանուած կը զգայինք:

Սակայն այն օրը ճաշարանի մեծ սեղանին վրայ, նախաճաշի ուտեստեղէններուն մէջ թոռնիկիս սիրած ամենօրեայ Croissantը չկար:

Թոռնիկս՝ Արան, շատ կը սիրէր անոնց համը,

- Անի, աղջկան ըսէ թող Քրուասոնները տաք եւ «խըշըր» «խըշըր» բերէ,- ըսաւ մօրը:

Արան կը սիրէր մայրը իր անունով կանչել:

Անին նշան ըրաւ եւ սպասուհին կանչեց:

Ապակեպատ ճաշարանին դիմացի տանիքին վրայ, սեւ մագերով մանչուկը դեռ « կը թռէր», մեզ կը զբաղեցնէր եւ ուրախ ու անհոգ կը շարունակէր իր խաղերը...:

Մայրը հետը բերած լուացքի վերջին լաթերը հիմա արդէն փռած՝ պատրաստուեցաւ վար իջնելու:

Սակայն սեւ մագերով պզտիկ տղան չուզեց խաղերէն զատուիլ:

Ան վազեց եւ ճերմակ սաւաններէն մէկուն ետեւ յանկարծ արագ անհետացաւ: Բայց առանց գիտնալու, պահուրտած սաւանին վարի մասէն, իր երկու բարակ սրունքները կ'երեւային:

Մայրը տեսաւ եւ տղուն անունը բարձրաձայն կանչեց:

Ան փոխանակ պատասխանելու, սաւանին ծայրը վերցուց, մօրը խնդաց, բայց յետոյ կարծես միասին աչկապուկ խաղալ սկսած ըլլային, սաւանին ետեւ դարձեալ պահուրտեցաւ:

Հիմա յստակ էր եւ մայրը հասկցաւ թէ խաղ էր պզտիկ տղուն ուզածը: Բայց կինը բերած լաթերու պարապ տաշտը ձեռքը բռնած՝ կամ կ'աճապարէր, կամ ալ թերեւս տրամադիր չէր խաղալու, որովհետեւ հազիւ երկու քայլ առած, յանկարծ կոնակը դարձուց, եւ հեռանալ ձեւացուց:

Տղան տեսաւ, պահուրտած տեղէն լեղապատառ դուրս վազեց եւ լալով մօրը լայն բացած թելերուն մէջ նետուեցաւ...:

Հեռուն ծովու մակերեսին վրայ կապոյտ ալիքներ, իրար մէջ ձուլուելով եւ զլտորելով, առաջուայ պէս անանուն երաժշտութիւն մը կ'երգէին եւ անտեղեակ դիմացի տանիքին վրայ գանգուր մագերով մանչուկին խաղերէն եւ լացէն, հազար թաւալումներով ու խաղերով, կ'աճապարէին եւ ծովուն ուրախ երգը դեռ ծովեզերք կը հասցնէին...:

Կէսօր էր:

Ծովեզերքի կակուղ աւազի հատիկները, արեւի ճառագայթներէն տաքցած էին եւ ճերմակ լոյսին տակ կը պսպղային:

Այդպէս էին նաեւ տարիներ առաջ ծնած երկրիս ծովեզերքի աւազի հատիկները, որոնք նոյն ձեւով ալ Եգիպտոսի զօրաւոր արեւին տակ մինչեւ կէսօր կը տաքնային...:

Դժուար էր բոլորիկ ոտքով այդ տաք աւազին վրայ քալելը, եւ մեր ներբանները կրակի պէս կ'այրէին, երբ առտունները խումբով ծովեզերք երթալէ ետք, վերադարձի ճամբուն վրայ ոստոտտելով, Կարմիր Խաչի ամառանոցը կը դառնայինք քալելով:

Հոս, այս կողմի ծովեզերքի աւազները, տաք արեւը եւ կապոյտ երկինքը Աղեքսանդրիան կը յիշեցնեն, սակայն փչող հովեր կեանքին թելերը տարբեր կը շարժեն եւ մեզի ծանօթ նոյն երգերը տարբեր կ'երգեն...:



Հիմա արդէն եօթանասունի մօտ երկար տարիներ անցած են այն օրերէն ի վեր, սակայն Ադեքսանդրիան իր գեղեցիկ ծովեզերքներով դեռ յստակ է յիշողութեանս մէջ:

Բայց ես անկէ քիչ անդին գտնուող եւ կարծես մէկդի քաշուած ու համեստ ծովեզերքով Ապու Կիրն ալ դեռ չեմ մոռցած:

Պզտիկ էր Ապու Կիրը եւ շատ բան չկար տեսնելիք: Աւելի ճիշտ՝ կային միայն ծով, արեւ եւ տուններ, եւ իրիկուններն ալ դռներու առջեւ զովանալ սկսող օդին դէմ նստած, մինչեւ ուշատեն տեսող հաճելի խօսակցութիւններ...:

Պարզ էր Ապու Կիրը, բայց հակառակ ատոր, իր պարզութեանը մէջ գեղեցիկ էր:

Հոն հանգիստի վայր էր, չկար մեծ տեղերու փողոցներու երթելակը: Չկային նաեւ լայն պողոտաներ, լոյսեր եւ արագ վազող կառքեր: Բնակչութեան թիւն ալ քիչ էր եւ որքան որ կը յիշեմ, ապրող հայեր չկային հոն ...:

Սակայն չեմ գիտեր ի՞նչ զուգադիպութեամբ, տարի մը մեր ամառնային արձակուրդի համար վարձած տան տիրուհին հայ էր, բայց անգլիացիի մը հետ ամուսնանալէ յետոյ իր հայկական մականունը «Collins» ի փոխում էր:

Ան կը սիրէր քաղաքի պատմութեան մասին խօսիլ, ու արդէն առաջին օրէն պատմած էր, որ Ապու Կիրի մէջ, 1798ի Նափուլէոնի Եգիպտոսի արշաւանքի ժամանակէն եւ անգլիական ու ֆրանսական նաւատորմիդներու մեծ պատերազմէն մնացած, ֆրանսական հին թնդանօդներ կային, որ կ'արժէր այցելել, որովհետեւ պատմական հին արժէք կը ներկայացնէին:

Ճիշտ չեմ յիշեր իր անունը, ոչ ալ հայկական մականունը, բայց կը յիշեմ որ տանտիրուհին այն ատեն մէկ հատիկ աղջիկ մը ունէր, որ բարեձեւ հասակով գեղեցիկ էր եւ ինծի ալ գրեթէ տարեկից:

Ան նայուածքին մէջ բոցկլտացող կայծեր ունէր, բայց պատմական դէպքերով չէր հետաքրքրուէր: Կը նախընտրէր ամբողջ օրը ծովեզերքին վրայ անցնել, եւ ուրիշ որեւէ բանէ աւելի մեռած հօրը Collins մականունով կը հպարտանար:

Մայրը կը նեղուէր եւ կ'ուզէր որ աղջիկը իրեն պէս գիրքեր կարդար եւ աւելի լուրջ բաներով զբաղուէր:

Բայց մայր Collinsը Ապու Կիրի հին օրերու պատմութիւններէն եւ թնդանօթներէն զատ, համեղ կարկանդակներ ալ գիտէր պատրաստել, եւ եթէ պատահէր որ օր մը նոր խոհագիրով տարբեր «pie» եփէր, կէսօրէ վերջ անպայման մօրս այցելութեան կու գար եւ եփած նորութիւնն ալ հետը կը բերէր, որպէսզի վերանտայի շուքին մէջ նստած, խօսակցելով միասին փորձէին:

Մենք այդ ժամերուն Միջերկրականի գաղջ ջուրերուն մէջ լողալու կ'երթայինք, բայց կարկանդակէն միշտ մեզի ալ բաժին կ'ելլէր...:

- Ինչ լաւ էին այդ օրերը, բայց որքա՛ն հեռու են հիմա...:

Մեծ հայրիկը ձեռքը ճակատին առջեւ հովանի ըրած, երկինքի արեւին նայեցաւ, յետոյ հովանոցին կոթը աւազին մէջ խրեց, խորունկ դարձուց եւ ծովուն դէմ հովանոցը բացաւ:

Գետնին վրայ անմիջապէս կլոր շուք գծուեցաւ:

Պճտուն աչքերով պզտիկ թռնիկը, նստեցաւ հովանոցին տակ եւ մեծ հօրը ոտքերուն մօտ, սկսաւ գիշերուայ տեսած երազներէն եւ երեւակայութենէն, աւազով դղեակներ եւ արձանիկներ շինել:

Հոս Ադեքսանդրիոյ չէր նմաներ:

Ծովեզերքի ամբողջ երկայնքին, ճերմակ բաճկոնով շրջուն վաճառորդներ, թելերնուն վրայ կողով մը անցուցած, առտուայ ժամերէն մինչեւ կէսօրէ վերջերը, աւազներուն վրայ քալելով, բաց հովանոցներուն տակ նստողներուն առջեւէն կ'անցնէին եւ պոռալով իրենց ծախած զանազան տեսակի ուտեստեղէնները կը գովէին:



Ուրիշներ դարձեալ ճերմակ բաճկոնով, երկանիւ սայլակներու վրայ, խաշած եգիպտացորեն, պաղպաղակ, կամ ալ զովացուցիչ խմիչքներ կը ծախէին:

Ծովեզերքին վրայի առեսուրբ, քաղաքապետարանին կողմէ մասնաւոր արտօնութեամբ թոյլ կը տրուէր, եւ տաք արեւին ու փշող հովին դէմ, վաճառորդները ուտելիքները դիւրին կը ծախէին:

Կեանքը այդ ժամերուն ծովեզերքին վրայ կը գեղեցկանար եւ համերաշխութիւն կը զգացուէր օդին մէջ:

Յանկարծ այդ վայրկեանին հեռուէն թռուցիկ ծախող մարդ մը, օդին մէջ թռուցիկ թոցնելով, աւազներուն վրայ յառաջանալ սկսաւ: Պզտիկ տղան աւագէ շինած արձանիկներուն հետ խաղը անմիջապէս դադրեցուց եւ մեծ հօրը

- Օ Կա՛, ինձի թռուցիկ կը գնէ՞ս,- հարցուց:

- Բայց քիչ վերջ միլո ծախողն ալ պիտի անցնի, եւ դուն ա՛ն ալ պիտի ուզես ...դուն ո՞ր մէկը աւելի կ'ուզես,- փորձելու համար կատակի ձեւով հարցուց մեծ հայրիկը տղուն:

- Երկո՛ւքն ալ,- անմիջապէս պատասխանեց տղան, գիտնալով որ մեծ հայրիկը կատակ կ'ընէր եւ ուզածները բնաւ չէր մերժեր...:

Միլո փորթուկալերէնով եգիպտացորեն կը նշանակէր:

- Էհ, եթէ այդպէս է, միլո ն ես գնեմ,- միջամտեց «Օ Մա»ն եւ յետոյ կատակը շարունակելով,

- Միայն մէկ հատ չէ, ես քեզի համար երկու հատ ալ կը գնեմ,- աւելցուց:

Պզտիկ տղուն աչքերը փայլեցան :

«Օ Մա»ն պզտիկ տղուն մեծ մայրն էր, եւ շատ կը սիրէր թոռնիկը, եւ մեծ հօրը պէս կ'ուզէր որ թոռնիկը միշտ ուրախ ըլլար:

Ձեռքով նշան ըրին թռուցիկ ծախողին որ մօտենայ:

Պզտիկ տղան վառ գոյներով ու թուղթի երկար երիզներու պոչով թռուցիկ մը զատեց, եւ անհամբեր ծովուն կողմը վազեց որպէսզի թոցնէ: Մայրը՝ Անին, ետեւէն վազեց:

Մեծ հայրիկը հեռուէն աչքով հետեւեցաւ երկուքին, յետոյ գոհ ըրածէն, մահճաթոռին մէջ ոտքերը առջեւ երկնցուց, ձեռքերը բարձի տեղ գլխուն ետեւ իրար կապեց եւ վայրկեան մը երկինքը դիտեց:

Վերը պայծառ էր, կապոյտ եւ համատարած խաղաղութիւն կար անհունութեան մէջ...:

Դիմացը երկնքին տակ ծովը իր երզը կ'երգէր, արեւը եւ թոռնիկը ծովեզերքին վրայ կեանքը կ'անուշոցնէին եւ սովորականէն դուրս կը գեղեցկացնէին...:

- Ինչ գեղեցիկ է կեանքը եւ բնութիւնը,- խորհեցաւ մեծ հայրիկը եւ մտածեց որ ոտքերուն առջեւ խաղացող թոռնիկը, իր ընտանիքը, ծովը, եւ արեւը, հազարաւոր տարիներ բնութեան մաս կազմած էին եւ լուսեղէն օղակներու ցանցով իրար միացած էին:

- Ալիքները ծովուն երզը ծովեզերք կը հասցնեն, եւ հովերն ալ աւազներուն վրայ այդ երգին հետ կը պարեն,- խորհեցաւ մեծ հայրիկը, ու վայրկեան մը յետոյ

- Այդպէս է,- մտածեց,- աշխարհը այդպէս եղած է մինչեւ հիմա, ու դեռ այդպէս ալ պիտի շարունակուի, որովհետեւ կեանքին ներդաշնակութիւնը պահելու համար, իւրաքանչիւրը իր պատասխանատու դերը ունի կատարելիք,- եզրակացուց մեծ հայրիկը:

Արեւը հիմա դիմացի կապոյտին վրայ աստիճան մը աւելի բարձրացած էր, եւ ծովուն ջուրն ալ, հովանոցին մօտ գտնուող աւազները քայլ առ քայլ թրջել սկսած էր:

Յանկարծ հեռուէն շարժակի բզզիւն մը լսուեցաւ եւ քիչ յետոյ, երկինքին վրայ քիթին առջեւ դարձող, մէկ պտուտակով թռչող պզտիկ օդանաւ մը երեւցաւ:

Ան ետեւէն գեղարուեստական ներկերու ծանուցում մը երկար պոչի պէս քաշելով, դանդաղ եկաւ եւ օդին մէջ երկու շրջանակ գծելէ յետոյ, քիթը ծովեզերքի հիւսիսային կողմը շտկեց, եւ շարժակի բզզիւնը հետը տարաւ:

Մեծ հայրիկը դիտեց հեռացող օդանաւին ետեւէն եւ

- Ինչ լաւ է կեանքը առանց մտահոգութեան հանդարտ վայելել,-մտածեց...:



Յետոյ ծովուն օդը անյագօրէն թոքերուն մէջ քաշեց եւ կենսատու արեւին ջերմութիւնը ներս քաշելով, ուզեց ծծել եւ ծովեզերքի վայրկեաններուն ներդաշնակութիւնը ըմբռնել:

Ձեռքը հովանոցի շուքէն դուրս երկարեց, եւ զգաց որ բաց ափին մէջ հաւաքուած արեւի ամէն մէկ ճառագայթ կեանքի նուագով կը թրթռար:

Գլուխը բնագոյաբար մահճաթոռի յենարանին դայցուց եւ դէմքին վրայ ինքնագոհ ժպիտ մը գծուեցաւ...:

Հեռուն ծովու անսահման մակերեսին վրայ կապոյտ ալիքներ, իրարու մէջ ձուլուելով եւ զլտորելով, հազարաւոր տարիներու անանուն երաժշտութիւն կ'երգէին եւ ուրախ խաղերով բնութեան եղանակը դեռ ծովեզերք կը հասցնէին:

Կարօ Պօհճալեան

Քամիինաս, Պրագիլ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ՍԻՐԱՆ ՍԵՋԱՅԻ ՆԱՄԱԿԱՆԻՒՆ Ա. ՀԱՏՈՐԸ



Այսօր, երկուշաբթի, 20 նոյեմբեր 2023-ին, Երեւանի <Հայաստան> հրատարակչութենէն լոյս տեսաւ լիբանանահայ գրող, խմբագիր, հասարակական գործիչ, ԽԻՋԱԽ ՄՏԱԻՈՐԱԿԱՆ Սիրան Սեզայի (Զարիֆեան-Քիւփեղեան, 1903-1973) նամականիին Ա. հատորը: Չորս հատոր նախատեսուած նամականիին այս առջինէկը կ'ընդգրկէ Սեզայի նամակագրութիւնը Վահէ-Վահեանի եւ Անդրանիկ Ծառուկեանի հետ՝ համապատասխանաբար 1932-1955 եւ 1933-1948 ժամանակաշրջաններուն: Ժողովածուն կ'ընդգրկէ նաեւ մեկենասներուն եւ նամականիին կազմողին խօսքերը, նամակագիրներուն կենսագրութիւնը եւ անոնց հրատարակուած գիրքերուն գրեթէ ամբողջական ցանկերը, յիշատակուած անձնանուններու եւ տեղանուններու ցանկեր եւ շուրջ 1500

ծանօթագրութիւն:

Նամականիի ամբողջ շարքի հրատարակութեան մեկենասներն են Սիրան Սեզայի որդին եւ հարսը՝ Տէր եւ Տիիկին Վահագն եւ Անահիտ Քիւփեղեանները: Ամբողջ աշխատանքը կատարած է ու դեռ կը շարունակէ կատարել ձեր համեստ ծառան:

Ժողովածուները նախատեսուած են գրականագէտներու, սփիւռքի պատմութիւնը եւ Հայրենիք-սփիւռք յարաբերութիւններու պատմութիւնն ուսումնասիրողներու, ինչպէս նաեւ ընթերցող լայն հանրութեան համար:

ԳԷՈՐԳ ԵԱԶԸՃԵԱՆԻ Էջէն

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԱՅՅԵԼՈՒՆ



«Հայ գրականության աստուածային այցելուն» - այսպիսի դիպուկ բնորոշմամբ էր վերնագրուած «Վահան Թեքեան Յօդուածների ժողովածու»-ի երկրորդ հատորի առաջաբանը, որի հեղինակն ու կազմողը՝ բանասիրական գիտութիւնների թեկնածու, դոցենտ Վարդուհի Դաւթեանը, թեքեանասէր ընթերցողին այս անգամ ներկայացնում էր հանճարեղ հրապարակագրի 1911-1920թթ. գրած յօդուածները՝ մանրաշխատ խմբագրմամբ և ծաւալուն ծանոթագրութիւններով: Հատորը կրկին հրատարակուել էր «Թեքեան կենտրոն» հիմնադրամի աջակցութեամբ:

Աշնան վերջին օրուայ խորհուրդը թեքեանական էր: Գրքի շնորհանդէսի առիթով հավաքուել էին յայտնի գրականագետներ, մշակութային-հասարակական գործիչներ, դասախօսներ, ուսանողներ, պարզապէս թեքեանական աշխարհի գաղտնարանները բացայայտել կամեցող մարդիկ:

«Թեքեան կենտրոն» հիմնադրամի տնօրէն Արմէն Ծուլիկեանը, ողջունելով հիւրերին, նշեց, որ թէւ ժամանակները բարդ ու դժուարին են, սակայն այս գրքի հրատարակութիւնը սեփական երեխայի ծնունդի պէս է՝ սպասուած ու կարելոր:

«Թեքեան կենտրոն» հիմնադրամի նախագահ, պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Ռուբէն Միրզախանեանը, բարձր գնահատելով հատորը, այն համարեց պատմական արժէք ունեցող ժողովածու, որի հետ կապուած հետագայ աշխատանքների արդիւնքները լինելու են նոյնքան սպասուած, որքան նախորդ և այս հատորների ժամանակ էր:

Մասնագիտական արժէքաւոր խօսքերով հանդէս եկան բանասիրական գիտութիւնների դոկտորներ, պրոֆեսորներ Վազգէն Գաբրիելեանը, Արծրուն Ավագեանը՝ գնահատելի և արժէքաւոր համարելով հեղինակի կողմից իրականացուող ահռելի աշխատանքը:

Ելոյթ ունեցան ՀՀ Մանուկ Աբեղեանի անուան ԳԱԱ աւագ գիտաշխատող բանասիրական գիտութիւնների թեկնածու, դոցենտ Նունէ Մկրտչեանը, գրականագետ, բանասիրական գիտութիւնների թեկնածու, դոցենտ Արթուր Անդրանիկեանը, ովքեր չկարողացան թաքցնել իրենց հիացմունքը Վ. Դավթեանի անխոնջ, տքնաջան աշխատանքի հանդէպ:

Թեքեանական յօդուածների ընթերցմամբ ներկաներին յուզեցին Երեւանի Վալերի Բրիւսովի անուան պետական լեզուաբանական համալսարանի ուսանողներ Վանուհի Ստեփանեանը, Մերի Վարդանեանը, Անժելա Սեֆիլեանը, Սոֆի Փարվանեանը, Երեւանի Հիւսիսային համալսարանի ուսանողուհի Անի Իսրայելեանը:



Շնորհանդեսին իրենց անդրադարձը կատարեցին տարբեր լրատվամիջոցներ, իսկ Հանրային ռադիոյի «Վերնատուն» մշակութային հաղորդումը, հյուրընկալելով հեղինակին, իր հանդիսատեսին ներկայացրեց կատարուած ահռելի աշխատանքի արդիւնքները՝ միաժամանակ փորձելով անթաքոյց հիացմունքով փոքր-ինչ ճանաչելի դարձնել հանճարեղ գրողի յօդուածները:

Ինչպէս իր խօսքում նշեց Վարդուհի Դաթեանը, Վահան Թեքեանը հայ ընթերցողին երկու ասիի մէջ պարփակ ընծայում է իր հրապարակագրական հունձքը այն նոյն պարտքի զգացումով, ինչ Աստծոյ ամենաչափ նծարի կշռի առաջ էր՝ իր վեհապետող ներկայութեամբ շարունակելով մնալ Հայ գրականութեան աստուածային այցելուն:

ԿԱՂԱՆԴԻ ԱՄԷՆԷՆ ԵՐՋԱՆԿԱԲԵՐ ՆՈՒՔՐՍ

Յուշագրութիւն



Վաղ մանկութեանս ձմեռներէն մէկն էր, Դեկտեմբերեան ամիսը, երբ խանութներն ու վաճառատուները, նոյնիսկ փողոցներու մայրերը կը լեցուէին գեղեցիկ տօնածառերով, շքեղ ու պերճ, բայց արհեստական իրենց փայլով եւ դիւրիչ զարդեղէններով շողշողուն...Իսկ ես կ'երագէի ունենալ իսկական տօնածառ մը, անտառին բոյրովն ու թոյրովը, անտառին շունչովն ու հմայքովը...Թող ան ըլլար պարզ ու խոնարհ, բայց զիս տանէր անտառային բնութեան գիրկը, որ միշտ ալ հրապուրեր էր զիս տարուան բոլոր եղանակներուն ալ:

Դժուար էր մայրս համոզել որ ինծի համար, մեզի համար, իսկական տօնածառ մը գնէր, որ զիս հոգեւին տանէր լեռներն ու ձորերը, լեռնային պուրակները, զգալ եղեւինին շունչը, տերեւներուն փշածել վայելչութիւնը, նոյնիսկ լսել անոր կանաչ-կանաչ ուսերուն վրայ թառող թռչուններու դայլայլը կամ ծղրիղներու միալար երգը...երեւակայել անոր վրայ փաթի՛լ-փաթի՛լ տեղացող ձիւնը...եւ զայն զարդարել այնպէս որ ան դառնար ձիւնագարդ գեղեցկութիւն մը, մաքրափայլ ու շքեղափայլ...թե՛ւ ու թո՛ղ չք տար երեւակայութեանս դէպի հեքիաթներու աշխարհը:

Իրաւացիօրէն կ'ըսեն թէ եթէ բան մը շատ ու շատ փափաքիս, զայն ունենալու կարելիութիւնը կը բազմապատկուի, գուցէ տիեզերական անյայտ օրէնքով...Ո՞վ գիտէ:



Եւ ահա Դեկտեմբերեան Կիրակի առաւօտ մը, մեր տան դուռը թակեցին ուժգին եւ երազածս անակնկալը յանկարծօրէն ցցուեցաւ աչքերուս առջեւ: Մեր գիւղի ազնիւ տանտիրուհին էր, Թանթ Օտէթը, իր դստեր՝ Մարսէյի հետ միասին...Անոնք բաւականին ճոխ եղեւին մը շակած մտան մեր դուռէն ներս եւ մեր զարմանահար հայեացքին առջեւ տեղաւորեցին դալարագեղ ծառը մեր փոքրիկ հիւրասենեակին մէկ անկիւնը, որ անմիջապէս լեցուեցաւ, կերպարանափոխուեցաւ, պայծառացաւ...մանաւանդ երբ սկսան իրենց հետ բերած գեղեցիկ զարդարանքներով շտկել ծառը...

Աչքերուս չէի հաւատար: Գո՛յն-գո՛յն փուչիկներ, ճերմա՛կ-ճերմա՛կ բամպակներ, հրեշտակներ, կաղանդ պապուկներ իրենց տեղերը գրաւեցին սրատերեւ ծառին ճիւղերուն վրայ, իսկ մեծ ու փայլուն աստղ մըն ալ տեղաւորեցին ծառին գագաթը, կարծես հեքիաթ մը ըլլար ան...լուսեղէն հեքիաթ, զոր կարելի չէ երբեք գտնել արհեստական ծառի մը մէջ, որքա՛ն ալ պերճափայլ ըլլայ ան, քանզի այդ լոյսը կարծես կու գար այն ճաճանչներէն, զորս ծառը ըմպեր էր շարունակ արեւալոյսէն, պսպղուն աստղերէն ու արծաթափայլ լուսինէն...

Բայց սա վերջը չէր: Ուրիշ տուփէ մը հանեցին մսուրի յարդարանքներ եւ ծառին ներքեւի մասը դարձաւ Յիսուս Մանուկի ծննդեան փոքրիկ մսուրը, մոգերով ու հովիւներով, հրեշտակներով, Ս. Աստուածածինով եւ Ս. Յովսէփով, յատակը՝ կանաչ յարդերով, նոյնիսկ թարմ մամուռով՝ բերուած մեր գիւղին անտառներէն, իսկ վերելը փոքրիկ աստղիկով մը: Յիսուս մանուկի ծննդատունը վերակենդանացաւ, բնական ախոռի մը տեսքով, պարզ ու համեստ, բայց այնքան հոգեհարազատ, նոյնիսկ հովիւներով, զառնուկներով եւ հորթուկներով կենսաւորուած...Ախոռ, որ պարփակեց տիեզերքի գերագոյն Մեծութիւնը, այսինքն Անպարփակելին...Հրա՛շք էր:

Միրտս կը թրթռար ուրախութենէն, յուզումէն, անակնկալէն...Ի՞նչ բառերով յայտնէի շնորհակալութիւնս, երախտիքս Կաղանդի առիթով ինծի շնորհուած մեծագոյն պարգեւին համար:

Այնուհետեւ, գիշեր ու ցերեկ, հայեացքս գամուած կը մնար երազային ծառին, որ զիս կը տանէր բնութեան անտառախիտ ծոցը, անոր ձիւնէ մաքրութեան ու հեքիաթին հետ կ'առնչէր հոգիս, մտքիս թելերով կարծես կը տեսնէի Կաղանդ պապուկը, որ իր սայլակը կը քշէր եղեւիններուն ընդմէջէն, իր բարիքները բաշխելով բոլորին, մինչ ձիւնը կ'իջնէր փաթի՛լ-փաթի՛լ, անտառն ու աշխարհը օծելով ձիւնէ սպիտակ ու անապական մաքրութեամբ...Իսկ մսուրը զիս հաղորդ կը դարձընէր այն սքանչելի մեծ Խորհուրդին հետ, որ Յիսուս Մանուկի Ծնունդն էր, որ աչքերուս դիմաց կը վերակենդանանար, մանկական բնագոյնով գուցէ կը զգայի այն տիեզերական Խորհուրդը որ պարփակուած էր այդ մեծ Հրաշքին մէջ եւ ունկերուս կը հնչէին Խորհուրդ Մեծ և Սքանչելի աղօթքին բառերը, երգ-մեղեդին...

«Խորհուրդ մեծ եւ սքանչելի

Որ յայսմ աւուր յայտնեցաւ,



Հովիւքն երգեն ընդ հրեշտակս՝

Տան աւետիս աշխարհի:

Ծնաւ նոր արքայ

Ի Բեթղեհեմ քաղաքի,

Որդիք մարդկան, օրհնեցէք,

Զի վասն մեր մարմնացաւ:

Անբաւելին երկնի և երկրի

Ի խանձարուրս պատեցաւ,

Ոչ մեկնելով ի հօրէ՝

Ի սուրբ այրին բազմեցաւ»:

Սա էր իսկական, ճշմարիտ Կաղանդի նուէրը, որ ամէն վայրկեան ինծի կը պարգեւեր անոր խորհուրդը զգալու երանութիւնը, ցնծութիւնը, տօնականութիւնը:

Այդ Կաղանդն ու Ս. Ծնունդը մնացին յիշողութեանս մէջ որպէս հոգեւոր գանձ մ'անգին, մշտապէս փայփայէ՛լի, վերապրե՛լի, յո՛յս ու հաւա՛տք ներշնչող ու սէ՛ր մասնաւորապէս, որ մղած էր այդ ազնիւ հոգիները՝ մէկ-երկու ժամ ճանապարհ կտրելով գիւղէն-Պէյրութ, մեր տունը գալու եւ իրենց այդ սրտին նուէրով մեզ ուրախացնելու եւ ոգեւորելու...Եւ սա չէ՞ր այդ Տօնին խորհուրդը...

Շատ Կաղանդներ եկեր-անցեր են, գուցէ անհամեմատ աւելի պերճագեղ ու հրաշագեղ, լուսաշող ու լուսայորդ, շքեղազարդ ու գունազարդ, բայց մտքիս պաստառին վրայ անջնջելի կը մնայ մանկութեանս այդ Կաղանդը, երբ երազս դարձաւ իրականութիւն եւ իրականութիւնը դարձաւ երազ, մէկը միւսը լրացնող մոգականութեամբ...Կաղանդ՝ երբ իսկական հրաշքը այցելեց մանուկ հոգիիս, զայն դիւրեւով հեքիաթային կախարդանքի մը հանգոյն...

Եւ ամէն Կաղանդին ու Ս. Ծննդեան, այդ հեռաւոր Կաղանդը կ'այցելէ ինծի, վաղուց հասունցած ու իր մայրամուտին արդէն մօտեցող երախսան անգամ մը եւս կ'արթննայ մէջս, կարծես միեւնոյն թարմութեամբ ու խանդավառութեամբ եւ հոգիս անգամ մը եւս կը վարարի դեռ նոր ծագելիք արշալոյսներու տեսիլքովը հոգեթով...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 2022

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



Այնքան հագուագիւտ են անոնք, որոնք կը կանգնին ԱՆԶՕՐԻՆ կողքին, անոր դատը կը համարեն իրենցը՝ առանց փող ու թմբուկի, առանց որեւէ ակնկալութեան, պարզապէս անսալով իրենց ներքին ՁԱՅՆԻՆ...Այնքան սակաւ են անոնք, որոնք ՃԻՇԴԸ կ'ըսեն ու կը գործեն, նոյնիսկ եթէ ատիկա վնասակար ըլլայ իրենց սեփական նեղ-անձնական շահին եւ յօգուտ ընդհանրական բարիքին...Այնքան քիչ են անոնք, որոնք ՊԱՐԿԵՇՏ ու

ԱԶՆԻԻ կը մնան, հակառակ իրենց շուրջ վխտացող համատարած սուտին ու կեղծիքին...Եւ տակաւին՝ անոնք, որոնք ամենայն քաջութեամբ կ'ընդունին սեփական սխալը, առանց դոյզն վարանումի...Իսկապէս ալ՝ ԲԱԶՈՒՄՔ ԵՆ ԿՈՉԵՅԵԱԼՔ, ԲԱՅՑ ՍԱԿԱԻՔ ԵՆ ԸՆՏՐԵԱԼՔ...

.....

Շահի համար, կեանքեր կը խորտակեն...Շահի համար, երկիրներ կը կործանեն...Շահի համար, աղանդներ եւ սուտ կրօնքներ կը ներմուծեն...Շահի համար, մարդուն ազատութիւնը կը չարաշահեն...Շահի համար, մարդկային եւ ազգային տարրական իրաւունքներ ոտքի կոխան կ'ընեն...Շահի համար, պատմութիւն կը կեղծեն, կը բռնաբարեն ամէն արժէք, բարոյական, դարերով նուիրագործուած աւանդութիւններ, մարդն ու անոր հայրենիքը վերածելով շահոյթ ու գերշահոյթ ապահովելու գործիքի...

.....

Առանց ԻՏԷԱԼԻ կամ ԻՏԷԱԼՆԵՐՈՒ, մարդկային կեանքը պիտի ըլլար գետնամած գոյութիւն մը, քանզի այդ իտեալներն են՝ բարիի, գեղեցիկի, ճշմարիտի, անպայմանական, անշահախնդիր սիրոյ, որոնք թեւ ու թոյլք կու տան հոգիին, կը դառնան կեանքի նպատակ ու իմաստ...Բայց ներկայ աշխարհի նիւթապաշտ, եսամոլ եւ շահամոլ դրուածքին մէջ, այդ իտեալները կը դառնան անհասանելի կապոյտ թռչուն, որուն մասին կարելի է միայն երագել եւ անով ներշնչուիլ...

.....

Բռնակալութիւն կամ բացարձակ իշխանութիւն հաստատելու ամենէն ազդու միջոցը նկատուած էր, դարեր ու հազարամեակներ առաջ, բոլոր համաքաղաքացիները կամ իշխանութեան տակ գտնուողները համահարթեցնել, ոչնչացնելով այն հագուագիւտ անձերը, որոնք վեր էին կանգնած միջակութենէն...Հիմա ալ, նոյնը չէ՞ քիչ մը ամէն տեղ...Միջակութիւնները ամէն տեղ դիրքերու եւ հրապարակի վրայ կ'ըլլան, իսկ հոգեմտաւոր յատուկ որակ ունեցող անհատականութիւնները կը հեռացուին, կը չեզոքացուին, կը լուսանցքայնացուին... Պարզապէս, կիրառուած մեթոտը աւելի նուրբ է եւ մշակուած, քան ինչ որ էր դարեր եւ հազարամեակներ առաջ...



.....

Կը խօսին մարդկային իրաւունքներէն, բայց օր ցերեկով կը կոխկրտեն զանոնք...

Կը խօսին մանկան իրաւունքներէն, յետոյ կը պղծեն զանոնք...

Կը խօսին ազատութենէն, կը կիրառեն ստրկութեան նոր եղանակներ...

Կը խօսին խղճի ազատութենէն, կը ներմուծեն ազգաքանդ աղանդներ...

Կը խօսին ժողովրդավարութենէն, միտք ու հոգի կը բռնադատեն...

Սա կը կոչուի 21-րդ դարի քաղաքակրթութիւն...

.....

Հայ կեանքէն ներս, ՀՍՏՈՒԱԾԱՄՈՂՈՒԹԻՒՆԸ մեր տունը քանդած է եւ կը շարունակէ քանդել: Եթէ ռեւէ մէկը, ըլլայ ան մեծ գիտնական, գրող թէ գիւտարար, արուեստագէտ թէ գործարար, յարգանքի արժանի վաստակ ունի եւ միջակութեանց թագաւորութեան մէջ արժանաւոր գործ կատարած է, բարձունք մը նուաճած է, կ'անտեսուի ամբողջովին, եթէ չըլլայ կուսակցութեան մը, խմբակցութեան մը, հատուածի մը անդամը, մարդը: Միւս կողմէ, միջակութիւն մը բարձր պատիւի կ'արժանանայ, եթէ կուսակցութեան մը, հատուածի մը կը պատկանի: Այս տխուր երեւոյթը պատճառներէն մէկն է հայ կեանքի որակազրկման բոլոր բնագաւառներէն ներս:

.....

Մարդուն ներքին կեանքը տեսակ մը ճամբորդութիւն է՝ կեանքի սովորական ընթացքէն, մերթ դէպի խորխորատները տառապանքի ու տխրութեան, մերթ ալ՝ դէպի լուսաշող բարձունքները բերկրանքի եւ երանութեան...Ան տեսակ մը մշտական յուզա-իմացական վերիվայրումներու ալեկոծութիւն է, ինչ որ ներքին բովանդակութիւն կու տայ մեր կեանքին:

.....

Երանի կարենայինք ճիշդ դիտել եւ դատել մեր շուրջ տեղի ունեցող շրջադարձային իրադարձութիւնները, մեզի հրամցուած քարոզչական բնոյթի տեղեկատուութենէն ԱՆԴԻՆ տեսնել, մեր նայուածքը յառելով ՄԱԿԵՐԵՍԷՆ ԴԷՊԻ ԽՈՐՔԸ, կիսաճշմարտութիւններէն դէպի ճշմարիտը, պատրանքներէն դէպի իրականութիւնը, երեւոյթէն դէպի իսկականը...: Բայց մեր պատմական հարուստ փորձը, անկէ քաղուած դասերը կրնան մեզ իմաստնութիւն պարգեւել, բացի եթէ կամովին կոյր նախընտրենք ըլլալ:

.....

Տխուր է երբ մարդ մարդու չի հաւատար, լսած լուրին չի հաւատար, լսած խօսքին չի հաւատար, տեսածին անգամ չի հաւատար: Իսկ հաւատքը կարելոր է ապրելու համար, յոյսը վառ պահելու համար, մաքառելու, պայքարելու համար, վերջապէս շնչելու, գործելու համար, նոյնիսկ եւ մանաւանդ սիրելու համար:

.....

Յորդ յոյգեր կան, մտքի փայլատակումներ, որոնք կը մերժեն բառ ու տողի վերածուիլ, քանզի բառն ու տողը պիտի սահմանափակէին անսահմանը, պիտի տարազէին



անտարազեղին, որքան ալ փորձուէր կեանք ու շունչ հաղորդել անոնց: Կեանքը պիտի ապրիլ առանց բառերու զսպանակին...

.....

Կեանքը անողոր է: Մեզմէ իւրաքանչիւրը ի՛նք պիտի կարենայ կրել իր բեռը, իւրովի տանիլ իր բաժին-տառապանքը, իր ուսերուն շալկել իր պարտաւորութիւնները՝ քաջաբար, անտրտուն, առանց ապաւինելու այլոց օգնութեան, աջակցութեան, որ միշտ ալ իր բարձր գինը ունի: Նոյնը չէ՞ պարագան ազգային հաւաքականութեանց, որոնք պարտին իւրովի լուծել իրենց խնդիրները, ապաւինելով լոկ սեփական ուժերուն: Իսկ՝ ՄԵՆՔ...Դեռ կը շարունակենք ապաւինիլ օտարներուն ողորմածութեան եւ չարաչար կը խաբուինք հերթական անգամ, առանց խրատուելու մեր պատմութենէն: ՄԵՆՔ՝ յաւերժական մանուկներս...

.....

ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹԻՒՆ...Քեզ փնտռեցի հայ հոգիին մէջ, ուր կայ ցոլքը քու անապական մաքրութեան, անկեղծութեան, անմիջականութեան, առաքինութեան...Քեզ փնտռեցի մեր բառ ու բանին, մեր մատենաներուն մէջ, ուր կը շողաս Մեսրոպեան հաւատքով, յոյս ու լոյսով, անհուն սիրով...Քեզ փնտռեցի մեր եկեղեցւոյ կամարներուն տակ, ուր հայ հոգին կը ներդաշնակուի Արարիչին ու տիեզերքի անհունութեան հետ, կը խոնարհի Մեծութեան խորհուրդին առջեւ եւ խոնարհելով կը բարձրանայ...Քեզ փնտռեցի մեր երգերուն ու տաղերուն մէջ, ուր գտայ քու հնչիւններդ անչափ սրտաբուխ, ոգեղէն ու լուսեղէն...Քեզ փնտռեցի մեր ճարտարապետութեան մէջ՝ անչափ պարզ ու խորունկ, անչափ յստակ ու ներդաշնակ իր ամբողջութեան մէջ...Եւ հասկցայ որ դուն կաս որպէս ոգի, որպէս լոյս, որպէս սեր, որպէս հոգիի թռիչք ու խոյանք, որ վերջ չունի երբեք...տիեզերահուն, տիեզերաչափ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՔԱՌԵԱԿՆԵՐ



Լապտերովդ պիտի փնտռես

Ա՛յն որ չկայ, չի ալ եղեր,

Բայց մտքիդ ու հոգիիդ մէջ,



Ան վառեր է արեգակներ:

.....

Եւ հաւատքիս վերջին բեկորն
Փշո՛ւր-փշո՛ւր խորտակուեցաւ,
Երբ մեր հողը արինաճոր
Թշնամիին բաժին դարձաւ...

.....

Միրտը կը զգայ հոգին բիւրեղ
Ներքին կապով մը հրաշագեղ,
Բառ ու խօսքը աւելորդ են,
Երբ կայ կամուրջը ոգեղեն...

.....

Շիտակ կանգնե՛լ ճակատագրին
Ու աշխարհին դէմ յանդիման
Ու մի՛ թեքուիր շահերուն սին,
Որք այսօր կան, վաղը չկան...

.....

Ընծաներուդ սրտի, մտքի
Դուն հատուցում մի սպասեր,
Միայն ծիլ տան անոնք բերրի
Միտք, ոգիի հերկերուն մէջ...

.....

Սուտ է կապոյտը երկնքի,
Երբ սրտիդ մէջ չկայ երկինք,
Երբ երկինքը կապուտաջինջ
Չարտացոլար մէջն հոգիիդ..



.....

Թէ բանաս հոգւոյդ պատուհանները
Հրաշք բնութեան, տիեզերքին առջեւ,
Քեզ այցի կու գան խոհեր ու միտքեր
Եւ կ'ընդարձակիս ինչպէս տիեզերքը...

.....

Շահի հրէշն է նստեր աշխարհին,
Յանուն գրպանին զոհէ ամէն ինչ,
Ամէն սրբութիւն կոխան է ոտքի,
Մարդն ալ՝ սոսկ ապրանք, որ իր գինն ունի...

.....

Մայրամուտս ծիրանավառ
Յանկարծօրէն բռնկեցաւ,
Հուրեր փռեց շռայլաբար
Մտքի, յոյզի հազարագանձ..

.....

Ո՛վ մարդ, դուն մի՛ գոռոզանար,
Քեզմէ ոչինչ պիտի մնայ,
Բացի լաւ կամ վատ անունէն,
Կամ վաստակէն զոր պիտ' ստեղծես:

.....

Անկախութիւնն սուրբ կը մնայ,
Երբ չծախուի շուկային մէջ
Երեսուն խեղճ դրամի փոխան,
Կամ աթոռի համար սնամէջ..

.....



Հայն ի բնէ օժտուած է

Արարչագործ ներուժով մեծ,

Բայց միշտ սնանկ ղեկավարներ

Իր վաստակն են չարաշահեր:

.....

Երազանքն է սկզբնակէտ

Ամէն տեսակ արարումի,

Երազանքով մենք կը ծնինք

Ու կը մեռնինք՝ երազն անշէջ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ